

Աբգարյան ԱՄ.

1604

9(47.925)

Ա-12

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ
ԳՐԱԳՐԱԿԱՆ
ԳՐԱԳՐԱՆՈՒՄ

ՀՐԱՄԱՆԱԻ

Բ. ՍՐԲԱԶԱՆ Տ. ՄԱՂԱՔԻԱ ԵՊԻՍԿՈՒՍ
ՊՈՍԻ ՏԵՐՈՒՆԵԱՆ ԲԱՐԵՆՆԱՄ ԱՌԱՋ
ՆՈՐԿԻ ԹԵՄԻՍ ՀԱՅՈՑ ՊԱՐՍԿ—ՀՆԴ—
ԿԱՍՏԱՆԻ

94015-42



2096-2002

ԵՐԿՈՒ ԽՕՍԳ

Ի նկատի ունենալով Նոր—Ջուղայի Ազգային
երկսեռ ուսումնարանների՝ ստորին դասարաններում
Հայոց պատմութեան յարմար դասագրքի բացակա-
յութիւնը, և մինչոյն ժամանակ ականատես լինելով
բոլոր այն դժուարութիւններին և նեղութիւններին,
որոնց ենթարկվում էին թէ՛ ուսուցիչներն և թէ՛ ու-
սանողները՝ վերոյիշեալ դասագիրքը չունենալուն
պատճառաւ, հարկաւոր և պարտք համարեցի Արովեան-
ցի «Համառօտութիւն Հայոց ազգի պատմութեան»
դասագրքից ընդհանրապէս, և ուրիշ Ազգային պատ-
մութեան դասագրքերից մասնաւորապէս՝ օգուտ քա-
ղելով, կազմել սոյն «Համառօտ դասագիրք Հայոց ազ-
գի պատմութեան» անունով գրքոյկը, որը լիայոյս եւ՛
իւր բովանդակութեամբը և ծաւալովն՝ բաւական յար-
մար կ'լինի նպատակին ծառայելու, և դորանով պը-
սակուած կ'լինի՝ քանի տարիներ վրաս երախտիք ու-
նեցող Ուսումնարանին՝ մատուցած չնչին ծառայու-
թիւնս :

Տիգրան Թ. Արզարեանց

18 Ին Յուլիսի 1898 թ.
Նոր—Ջուղա



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՍԿՄԱՆԸ

Հիսուս՝ Եգերացուց աշխարհը, Վրաց և Աղուանից աշխարհներն. Արևելք՝ Կասպից կամ Վրկանայ ծովը և Ատրպատական աշխարհը. Հարա՝ Մարք, Ատրեստան և Տորոս լեռները. Արևմուտք՝ Կապադովկիա և Փոքր Ասիա: Հայաստանի տարածութիւնը (ըստ նոր աշխարհագրաց) համարվում է 15,000 քառակուսի մղոն:

ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ

Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ի

ՀԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՍԿՄԱՆԸ

Հիսուս՝ Եգերացուց աշխարհը, Վրաց և Աղուանից աշխարհներն. Արևելք՝ Կասպից կամ Վրկանայ ծովը և Ատրպատական աշխարհը. Հարա՝ Մարք, Ատրեստան և Տորոս լեռները. Արևմուտք՝ Կապադովկիա և Փոքր Ասիա: Հայաստանի տարածութիւնը (ըստ նոր աշխարհագրաց) համարվում է 15,000 քառակուսի մղոն:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԼԵՈՆԵՐԸ

Հայաստանի զլիաւոր լեռներն են՝ Մասիս և Արարատ, Տորոս, Կովկաս, Կորդուաց, Պարար և Մոսկիբեան լեռները: Իսկ փոքր լեռներն են՝ Արագած, Գեղամայ լեռուը, Գրգուռ, Ընձաարս կամ Կապուտողն, Կղարճք, Մասիոս, Նպատ, Լեւաւէտ կամ Զրաբաշի և Վարազայ լեռուը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԵՏԵՐԸ

Հայաստանն աշխարհիս ջրառատ երկիրնե-
րից մէկն է: Գլխաւոր գետերն են՝ Եփրատ,
Տիգրիս, ձորոխ, Երասխ և Կուր գետը: Իսկ
փոքր գետերն են՝ Ազատ, Ախուրեան, Հրազ-
դան, Մեծամօր գետը, Քասախ, Աղաստեւոյ, Զո-
րագէտ, Խրամ, Գալլ, Զաւ և Թուխ գետը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԼՃԵՐԸ

Մեր նախնիքը սովորութիւն ունէին լճերը
ծով անուանելու, ինչպէս՝ Վանայ կամ Բգնու-
նեաց ծով, Վասպուրական ծով, որ այժմս կոչ-
վում է Աղթամարայ կամ Վանայ ծով, և որը
պարունակում է իւր մէջ՝ Աղթամար, Առտէր,
Լիմ և Կտուց կոչուած կղզիները: Գեղամայ
ծով կամ Գեղարքունի, որ այժմս կոչվում է
Սեանայ ծով: Կասպուտան ծով, որ կոչվում է նաև
Թիլայ կամ Արմինոյ ծով: Գալլատայ և Ծովակ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆԱԼԱՆԳՆԵՐԸ

Բարձր Հայք, Զորորդ Հայք կամ Ծովաց
աշխարհ, Աղձնիք կամ Աղձնեաց աշխարհ, Տու-
րուբերան աշխարհ, Մոկք կամ Մոկաց աշխարհ
Կորձէք կամ Կորդուաց աշխարհ, Պարսկահայք
Վասպուրական աշխարհ, Սիւնիք կամ Սիսս
կան, Ուտի կամ Ուտիացուց աշխարհ, Փայտ
կարան աշխարհ, Արցախ կամ Փոքր Սիւնի

Գուգարք կամ Գուգարաց աշխարհ, Տայք կամ
Տայոց աշխարհ և Արարատեան աշխարհ: Փոքր
Հայք, Միջագետք Հայոց և Կիլիկիա:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՅԱՏԿՈՒԹԻՒՆԸ

Որովհետև Հայաստանի մակերևոյթը միա-
նման չէ, և որովհետև Հայաստանը լեռնոտ
աշխարհ լինելով՝ ունի շատ բարձր և շատ ցած
տեղեր, այս պատճառով էլ Հայաստանի կլիման
և բերքերը զանազան տեղ տարբեր են, չնա-
չելով որ Հայաստանը բարեխառն գոտումն է
գտնվում: Սորանից է որ Հայաստանի շատ կող-
մերում կան այնպիսի տունկեր և անասուններ.
որոնք Այրեցած գոտուն են պատկանում, կան
այնպիսիներն էլ, որոնք Բարեխառն գոտուն են
պատկանում, և վերջապէս կան ուրիշներն էլ,
որոնք բոլորովին պատկանում են Սառուցեալ
գոտուն:

ՀԱՅՈՅ ՅԱՏԿՈՒԹԻՒՆԸ

Եթէ մեր աչքի տակն առնենք այն, թէ
կլիման և տեղի դրութիւնը մարդոց վերայ ևս
ներգործութիւն ունեն, կարող ենք ասել միև-
նոյն բանը Հայաստանի բնակիչների մասին:
Դորանից կարող ենք հասկանալ, որ Մոկաց
աշխարհի բնութիւնը և երկինքը կարող էին

ներգործել այն տեղի Հայերի վերայ, որոնք պարագում էին աստեղաբաշխութեամբ և ուրիշ գիտութիւններով: Գողթն գաւառի գինին և բնութիւնը կարող էին այն տեղի Հայերին բանաստեղծ շինել, որոնք մեր քաջ նախնեաց վիպասանութիւններն երգում էին իրանց անմահ քնարովը: Սիւնեաց, Գուգարաց և Արցախու նահանգների բնութիւնն և երկրի դիրքն ներշնչում էին իրանց միջի Հայերի հոգւոց մէջ այն պատերազմական ազատ հոգին, որով նոքա պատրաստ էին իրանց արիւնը թափելու Հայրենեաց ազատութեան և իրանց անկախութեան համար: Կար Հայոց մէջ և այն հոգին, որով նոքա ճանաչեցին Քրիստոնէական հաւատոյ բարձր ճշմարտութիւնը և պարզութիւնը, և իրանց անձը դրին այն հաւատոյ վերայ և անխախտ մնացին նորա մէջ մինչև ցայսօր:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԵՐՔԵՐԸ

Հայաստանումը, նայելով կլիմայի և տեղի դրութեան յարմարութեանը, գտնվում էր՝ ցորեան, հաճար, գարի, վուշ, բամբակ, թուզ, սերկելի, նուռը, պիստակ, շագանակ, նուշ, վարունգ, գլտոր, մեղր, ձիթենի, յասմիկ, մուրտ, ծառը, տօսաղ ծառը և լոշտակ բոյսը: Անուանի էր Հայաստանի գինին, մանաւանդ Գողթան գաւառինը,

Այրարատ և Ուտի նահանգներինը: Անուանի էր և Հայաստանի ծիրանը, որ Եւրոպացիք Հայաստանիցը տարան: Հայաստանում գտնվում էր նմանապէս զանազան տեսակ խնկեղէններ, ինչպիսի են՝ քարախունկ և պտղախունկ. առաւել երևելի էր Հայաստանի գազբէն: Հայաստանումը շատ անտառներ կային, թէ բնական որոնք աւելի գտնվում էին Գուգարքումը և Սիւնեաց աշխարհումը, և թէ արհեստական, որոնց մեր թագաւորներն էին տնկել և լցրել վայրի անասուններով որսի համար:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԵՆՏՐՈՆԻՔԸ

Հայաստանի մէջ ի հնուց գտնվում էր՝ եղջերու, վարազ, վայրի այծ, վայրի էշ, հասարակ էշ և ջորի: Խիստ անուանի էր Հայաստանի ձին, թէ գեղեցկութեան և թէ ուժեղութեան կողմանէ, որի մէկ տեսակն էր նժոյգ կոչուածն, որ աւելի գտնվում էր Տուարածոտն գաւառի Խնուսի կողմերումը, և որ ըստ մեծի մասին մեր թագաւորներն և իշխաններն գործ կածէին: Գտնվում էր նաև որդան կարմիր մանր ճիճուները, որ աւելի ճարվում են Այրարատումը: Հայաստանի զանազան ձկների մէջ երևելիքն են՝ տառելիսը, կարմրախայտը և գեղարքունին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՕԶՈՆՆԵՐԸ ԵՒ ԹՈՉՈՒՆՆԵՐԸ

Գազանների ցեղիցը Հայաստանումն գտնու-
վում էր՝ առիւծ, ինձ, վագր, ընձուղտ, գայլ և
այլն: Թռչունների ցեղիցը՝ ագռաւ, կաքաւ, սագ,
բաղ, կարապ և զանազան ուրիշ թռչուններ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՔԵՐԸ

Հայաստանը շատ տեսակ հանքեր ունի, բայց
այժմ ըստ մեծի մասին անգործ մնացած են:
Ունէր և աղի շատ հանքեր, ինչպէս և մինչև
ցայժմս՝ Բագրևանդ գաւառի Կողբ գիւղումն:
Սղձնեաց և Տուրուբերան աշխարհներումը գը-
տնվում էին՝ երկաթի պղնձի, կապարի և ուրիշ
հանքեր: Բարձր Հայոց՝ Սպէր և Չորրորդ Հայոց՝
Հանձիտ գաւառներումը գտնվում էր արծաթի
և ոսկու հանքեր: Հայաստանումը կային և
զանազան ազնիւ քարերի հանքեր, որպիսիք էին՝
բիւրեղ կամ սառնատեսակ, եղնգաքար, կամ
սարտիոն, շափիւղ, զմրուխտ, ակատ, սև սաթ,
մարմարիօն, որ մինչև այսօր էլ կան. իսկ հա-
սարակ կիճեր և գոյնզգոյն հրաբուխի քարեր
իստ շատ կան: Շամիրամ Ասորոց թագուհին
Հայաստանի ժայռերիցը մի քար կտրել տուաւ,
որի երկայնութիւնն էր 130 ոտնաչափ, իսկ
լայնութիւնն 25 ոտնաչափ:

ՀԱՅԿԱԶԱՆՑ ՀԱՐՍՏՈՒԹԻՒՆ

ՇՐՋԱՆ ԱՌՍՋԻՆ

ՀԱՅԿ

Հայոց ազգի առաջին նահապետն եղև՝ ՀԱՅԿ,
որ Նոյ նահապետի Յաբեթ որդու երրորդ սե-
րունդն էր:

Քրհեղեղից յետոյ՝ Նոյի որդիքն Հայաստանի
մէջ հետզհետէ բազմանալով և հետևաբար եր-
կիրը քիչ գալով իրանց, սկսան ուրիշ տեղեր
երթալ, սրանց մէջ էր և Հայկը: Երբոր հասան
Բաբելոնի Սենաար կոչուած գաշտը, մտածեցին
մի բարձր աշտարակ շինել այն տեղ, որի գլուխը
մինչև երկինք հասնէր. բայց Աստուած բարկանա
լով նոցա յանդգնութեան վերայ՝ լեզուները
խառնակեց, և այսպիսով չլաջողեցաւ աշտարակա-
շինութիւնը: 'Իրանցից մէկը՝ Բէլ անուանով, որ
Քամայ թոռն էր և մի շատ ամբարտաւան ու
զօրաւոր մարդ, ժողովրդոց մեծ մասը իրան
հնազանդեցնելուց յետոյ՝ ուղեց Աստուծոյ տեղ
պաշտուել: Հայկն չկամենալով նրան հնազան-

դել՝ վեր առաւ իւր Արմենակ որդուն և երեք հարիւր քաջ մարդիկ, որոնք իւր որդիքն, թուռները և հաւատարիմ մարդիկն էին, և եկաւ Այրարատ աշխարհը, այն տեղ մէկ քաղաք շինեց Հայկաշէն անունով, և իւր խոհեմ կառավարութեամբը բոլոր Հայաստանի բնակիչներին սիրով հնազանդեցնելէն վերջը, բոլորի վերայ տէր և գլուխ եղաւ, նոցա իւր անունով Հայկոչեց, իսկ երկիրը՝ Հայաստան:

Բէլը այս բանը լսելով պատգամաւոր ուղարկեց Հայկին՝ որ գայ իւրն հնազանդի, իսկ Հայկը խստութեամբ պատասխանեց, աւելի լաւ համարելով քաջութեամբ մեռնել քան երկչոտութեամբ հպատակել մի այնպիսի ամբարտաւան մարդին, որ հրամայում էր իրան Աստուծոյ տեղ պաշտել:

Բէլը բարկանալով Հայկայ յանդգնութեան վերայ, իսկոյն բազմաթիւ զօրք ժողովեց և դիմեց դէպի Հայաստան, մեր աշխարհը միանգամայն կործանելու նպատակով: Երբոր հասաւ Ասորեստանի սահմանները, Հայկայ թոռը՝ Կադմոսը՝ իմաց տուաւ Հայկին Բէլի գէմ պատրաստուելու, և ինքն էլ եկաւ նրա մօտ:

Այն ժամանակ խոհեմ Հայկն իսկոյն ժողովեց իւր քաջ որդւոց, հաւատարիմ ծառաներին և նրանց՝ որոնք որ իւր հովանաւորութեան

տակ էին, և գալով Բզնունեաց ծովի մօտ, մի ընդարձակ դաշտի մէջ սլատերագմի սլատրաստուեցաւ: Այս տեղ սկսեց յորդորել իւր փոքր գնդին, որ չվախենան բազմաթիւ թշնամիներէց, այլ ջանան որ սպանեն Բէլին, և շատ խրատներ տալէն վերջը՝ յառաջ գնաց դէպի Բզնունեաց ծովի հարաւային լեռները: Երբոր Բէլը երևաց, Հայկն իւր զօրքի մէջ կարգ դրաւ, և նոցա եռանկիւնի ձևով կանգնեցրեց, — առաջին տեղն՝ ինքը բռնեց իւր մարդկերանցովն, աջ կողմն՝ Արմենակին կանգնեցրեց իւրայիններովը, իսկ ձախ կողմն՝ Կադմոսին, նմանապէս իւրայիններովը: Բէլը զարմանալով Հայկայ վստահութեան վերայ, մի քանի քաջերով յառաջ գնաց Հայկայ միտքն իմանալու. իսկ Հայկը, Բէլայ տրածէն օգուտ քաղելով՝ յարձակուեցաւ նորա վերայ, փակեց նորան զօրքերովը միասին իւր եռանկիւնու մէջ և պատերագմը սկսաւ: Բէլը զարհուրելով կամեցաւ յետ փախչել, մինչև զօրքի օգնութիւն հասնելը. բայց Հայկը ժամանակ չտալով երկար մտածելու, յառաջ գնաց, ուժդին քաջեց իւր աղեղն և արձակեց, նորա երեքթեւեան նետը դիպչելով Բէլայ կուրծքին, թիկունքից դուրս թռաւ և գետնի մէջ իրուեցաւ, որով այն ահագին ու ամբարտաւան հսկան գետնի վերայ

փռուեցաւ. մնացեալ զօրքը զարհուրելով՝ Հայոց քաջութիւնից, սկսան փախչել դէպի Բաբելաստան :

Հայկ Բէլայ մարմինը զմուսել տալով՝ հրամայեց Հայաստանի մէջ մէկ բարձր լեռան վերայ թաղել, որպէս զի ամենքն ևս տեսնեն հպարտ և Աստուծոյ դէմ ապստամբած մարդի վիճակը. իսկ Բէլայ և նրա քաջ զինուորները սպանուած տեղի անուկն՝ կոչեց Գեթեհէն :

Հայկ իւր հպատակներին հայրաբար կառավարելով, նոցա համար կարգեր ու կանոններ դրաւ, զանազան շինութիւններ արաւ և չորս հարիւր տարուայ չափ ապրելէն վերջը՝ մեռաւ, ազգի նահապետական իշխանութիւնը յանձնելով իւր Արմենակ որդուն :

Այսպէս ահա առաջին պատերազմն ու առաջին յաղթութիւնը մեր քաջ Հայկ նահապետի ձեռքովն եղաւ, որ մի աներկիւղ, վեհ անձն և առաքինի դիւցազն էր և իւր ժամանակի դիւցազանց ամենանշանաւորն : Ուրեմն մեր ազգը պարտական է մեծ երախտագիտութեամբ, վսեմ պարծանքով և արժանավայել դործքերով իւր վերայ կրել իւր ազգապետից մնացած ՀԱՅ անուկն :

Հայկայ ժամանակ՝ Նոյ և իւր Նոյեմզար կինը վախճանուեցան և թաղուեցան առաջի-

նը՝ Նպատ լեռան վերայ, իսկ երկրորդը՝ նոյն լեռան մօտերքումը, որ յետոյ կոչուեցաւ Մարանդ 1) :

ՀԱՅԿԱՅ ՅԱՋՈՐԴՆԵՐԸ ՄԲՆՁՆԻ ԱՐԱՄ. 21—19-ՐԴ ԴԱՐԸ

Արմենակն էլ իւր հօր պէս քաջ ու հայրենասէր էր : Սա կամենալով որ Հայաստանի ամեն կողմը մարդաբնակ լինի, իւր Խոռ և Մանաւազ եղբարցը թողեց Հարք գաւառումը, և ինքն զնաց Հայաստանի հիւսիսային կողմը : Այս տեղ մէկ լեռան ստորոտում զանազան բնակութիւններ հաստատեց և կարգադրութիւններ արաւ : Մօտակայ լեռաը իւր անուամբը կոչեց Արագած, իսկ երկիրն Արագածոտն : Արմենակայ միւս եղբարքն էլ՝ որոնք մնացած էին Հարք գաւառումը, սկսան զանազան քաղաքներ շինել, ինչպէս Մանաւազէրաբլ (կամ Մանաղչէրաբլ), իսկ ինքը Արմենակն՝ շատ տարիներ մեր աշխարհը կառավարելուց յետոյ մեռաւ, առաջուց ազգի կառավարութիւնը յանձնելով իւր Արամայիս անդրանիկ որդուն :

Արամայիսն իւր հօրն հետևելով՝ թողնում

1) Մարանդ, այսինքն Մայր անդ որ նշակում է Աեր Մայրն այն տեղ է :

է հայրական երկիրը և գնում է դէպի հարու,
այս տեղ Գեհովն գետի ափերումը կովածոց
քարերից մէկ քաղաք շինեց որ Հայկազանց
մայրաքաղաքն էր և իւր անուամբը կոչեց
Արմաւիր, իսկ գետն իւր Երաստ թոռաց անուամ-
բը՝ Երասի: Երևելի էր սորա Եարայ որդին,
որի շատակերութիւնը վերջերը առասպել դար-
ձաւ և որին հայրը Ախուրեան գետի մօտ մէկ
արգաւանդ երկիր տուաւ, որ նորա անուամբը
կոչուեցաւ Երասի:

Արամայիսին յաջորդում է նորա Ամասիա
անդրանիկ որդին, որ Արարատեան աշխարհի
ամենաբարձր լեռը Մասիս անուանեց: Սա
Արմաւիր քաղաքը յանձնելով իւր անդրանիկ
Գեղամ որդուն՝ գնում է արևելահարաւ: Այն
տեղ մէկ մեծ լեռան ստորոտումը շինում է
երկու քաղաքներ, միմեանցից մէկ օրուայ ճա-
նապարհ հեռի և ընծայում է իւր Փառոխ և
Յոլակ որդուցը, որ լետոյ նոցա անուաններովը
կոչուեցան Փառոխոս և Յոլակէրոս: Իսկ ինքն
վերադառնալով Արմաւիր՝ մեռնում է ազգի
կառավարութիւնը յանձնելով Գեղամին:

Գեղամն իւր նախորդներին հետևելով

Թողնում է Արմաւիր քաղաքը իւր անդրանիկ
Հարմայ որդուն, իսկ ինքն միւս Սիսակ որդուովն
գնում է դէպի արևելք, այս տեղ մէկ ծովակի
ափում շինում է զանազան բնակութիւններ,
որոց միջին երևելի էր իւր անուամբ Գեղամ
կամ թոռան անուամբ Գառնի քաղաքը, որ
շինուած էր Ազատ գետի ափերումը: Սա շատ
շինութիւններ և կարգադրութիւններ անելով,
և ծովն, ինչպէս և երկիրն՝ իւր անուամբը
Գեղամայ անուանելով ու Սիսակին ընծայելով՝
դառնում է Արմաւիր, և մեռնելուց յառաջ
մեր աշխարհի վերայ նահապետ է կարգում
իւր անդրանիկ Հարմայ որդուն:

Սիսակն էլ մնալով Գեղամայ աշխարհումը,
Հայաստանի համար պահապան հրեշտակ է
լինում ընդդէմ թշնամեաց, իրան յանձնած
աշխարհը ընդարձակում է մինչև Կուր և Ե-
րասի գետերը և իւր անուամբը կոչում է
Սիսիս կամ Սիսակիս: Անցնելով Կուր գետն
իրան ձեռքի տակն է առնում բոլոր երկիրնե-
րը մինչև Կասպից ծովը և իւր երկրորդ անու-
նովն կոչում է Աղբանիս, որ լետոյ Հայոց տէ-
րութիւնիցն բաժանուելով՝ առանձին տէրու-
թիւն դարձաւ:

Հայկիցը սկսեալ մինչև Հարմայն՝ մեր նահապետների ջանքն այն է լինում որ ընդարձակեն և շինութիւններով ու բնակիչներով լցնեն մեր Հայաստանը: Տեսնում ենք որ նահապետներն ազգի իշխանութիւնը յանձնելով իրանց անգրանիկ որդիներին, միւս որդիներովը գնում են երկրի մնացած կողմերը բարեկարգել: Վերջապէս տեսնում ենք որ անգրանիկ որդիների իրանց հօրից ստացած նահապետութիւնը լոկ անուկով էր քանթէ գործով, որովհետև միւս որդիներն ամենքն էլ իրանց յանձնած երկիրներումը իշխանութիւն են անում, ինչպէս և կամենում են. այս պատճառով էլ մեր նոր տէրութիւնը զուրկ մնալով միութիւնից՝ շուտով Հարմայի օրերումը վայելում է այդ անմիաբանութեան դառը պտուղը: Չորս կողմից վեր են կենում բազմաթիւ թշնամիներ և Հայոց ձեռնիցը խլում են մեր երկիրները և սպառնում են մինչև անգամ նրանցից խլել մեր քաղցր լեզուն և ճշմարիտ հաւատը:

Հայաստանը, Հայոց լեզուն և կրօնը այս վտանգաւոր գրութիւնիցն ազատելու համար, պէտք էր միութիւն, մի փրկիչ: Այ՛ն, դուրս եկաւ այս ակնկալած փրկիչը, որ ազատեց մեր աշխարհը թշնամիների սպառնալիքներիցը: Բայց ափսոս որ կրօնը անդառնալի կորաւ:

որովհետև այն ժամանակից յետոյ Հայաստանում սկսուել էր կռապաշտութիւնը: Այս փրկիչն էր մեր քաջ Արամ նահապետն, որ Հարմայի որդին և յաջորդն էր:

ԱՐԱՄ 18-րդ ԴԱՐՈՒՄԸ

Արամ իւր հայրենասիրութեամբը, բընական խելացիութեամբը և պատերազմի ընդունակութեամբը Հայկազանց մէջ բոլորից մեծանունն եղաւ: Արամի առաջին գործն է լինում առանձին նահապետների գօրութիւնները իրան թեի տակն հաւաքել և նորանով ազգին ապահովացնել: Այսպէս յիսուն հազար քաջ զինուորներով գնաց Մարաց Նիւքար իշխանի վերայ, ջարդեց նորա գօրութիւնը, դուրս քշեց Հայաստանից և Մարաց ազգի մէկ մասին հարկատու արաւ, իսկ Նիւքարին սպանեց և նորա դիակը բերեց Արմաւիր քաղաքը: Սրանից յետոյ Արամն գնում է դէպի հարաւ, յաղթում է Ասորոց և նոցա Բարշամ իշխանին սպանում է, որ այն կողմերի՝ ապահանիչն էր: Այս յաղթութիւններից յետոյ՝ Հայաստանի հիւսիսային և արևելեան կողմերումը Սիսակեանց պահապան կարգելով, իսկ Պաղմոսեանց հարաւումը, իւր քաջ զինուոր-

ներովը գնում է արևմտեան կողմը, ուր տեղ
 Կապոդովկիոյ Պայտալիս անունով իշխանն տի-
 րել էր Հայաստանի արևմտեան կողմերին :
 Պայտալիս չկարողանալով Հայոց զօրութեանը
 դէմ կենալ, թողնում է մինչև անգամ իւր եր-
 կիրն էլ և իրան անձը ազատելու համար՝
 փախչում է և ընկնում Միջերկրական ծովի
 մէկ կողմ վերայ : Արամը տիրելով բոլոր Կա-
 պոդովկիոյ և ուրիշ գանազան տեղերի, Մշակ
 անունով քաջ և հաւատարիմ իշխանին կու-
 սակալ է կարգում այն տեղ, հրամայելով որ
 բոլոր իւր օտարազգի հպատակներն ևս Հայե-
 րէն խօսել սովորեն :

Մշակ իշխանն՝ Արամայ հրամանով Կապո-
 դովկիոյ մէջ մէկ քաղաք շինեց և իւր անունո-
 վը՝ Մշակ անուանեց, որի անունը Կապոդով-
 կիացիք լաւ հնչել չկարողանալով՝ Մածակ 2) էին
 ասում : Իսկ Արամ իւր նոր տիրած երկրի սահ-
 մանից մինչև իւր բուն երկրի սահմանը՝ երեք
 նահանգներ բաժանեց, Ասորջն Հայտ, Երկրորդ
 Հայտ և Երրորդ Հայտ անուններով :

Արամ տեսնելով որ Հայաստանի վիճակը
 բաւական ապահովացրուած է թշնամեաց յար-

2) Այս քաղաքը յետոյ կոչուեցաւ Կեսարիա, որ Կես-
 րէական արաւազուելով այժմ Փայսերի կամ Ղայսերի
 էր կոչուում :



ձակմունքների դէմ, սկսեց մեր երկրի բարե-
 կարգութեան վերայ հոգ տանել և նոր նուաճած
 երկիրներն ևս հայրաբար խնամել : Այսպէս՝ Ա-
 րամայ անունն այնքան տարածուեցաւ օտարազ-
 գաց մէջ, որ մեր ազգը նորա անունովն Արմէն կամ
 Երմէն կոչուեցաւ, իսկ մեր աշխարհը՝ Արմէնիա :

Արամայ կառավարութեան վերջին օրե-
 րումն Ասորեստանի մէջ թագաւորում էր Նի-
 նոսը : Սա իւր քաջ նախնեաց պատմութիւն-
 ներից տեղեկանալով որ Բէլի սպանողը մեր
 Հայկն է եղած, միտքը դրաւ որ այդ վրէժը
 նորա յաջորդներից առնէ. բայց մեր Արամայ
 քաջութիւնները լսելով՝ ոչ միայն վախենալով
 յետ կեցաւ իւր զիտաւորութիւնից, այլև Արա-
 մայ հետ սերտ բարեկամութիւն հաստատելու
 համար՝ մի մարգարտագարգ թագ ուղարկեց
 նրան, շնորհաւորելով նորա յաղթութիւնները :

Արամ շատ լաւ էր հասկացած ՀԱՅՐԵՆԻՔԻ
 բառի ընդարձակ նշանակութիւնը, որի սիրոյ
 կրակովը վառուած զոհում էր նրան իւր ամ-
 բողջ հանգստութիւնը և զուարճութիւնները,
 «աւելի լաւ համարելով հայրենեաց վերայ
 մեռնելը, քան թէ օտար ազգերի ոտքը Հայաս-
 տանի սահմաններից ներս դրած՝ և իւր արիւ-
 նակից ազգը նրանցից տիրապետած տեսնել» : 3)

2096-2002

3) Խոր. զլ. ժԿ :



Այսպէս Արամ մեր տէրութիւնը դիւցազնական քաջութեամբ ընդարձակելով, մեր մայրենի լեզուն Կապադովկիոյ մէջը տարածելով և իւր պանծալի անունը Հայ ազգի անուան հետ անխզելի կապելով միացնելով ու անմահացնելով, տէրութեան իշխանութիւնը յանձնեց իւր Արայ որդուն, և Քրիստոսից 1769 տարի յառաջ մեռաւ :

ԱՌՅ 1769—1743

Արայ իւր հօր նման հոգ տանելով Հայաստանի բարեկարգութեանը, շատ պատիւներ ստացաւ Նինոսից, և իւր աշխարհը հետզհետէ այնքան շինութիւններով լեցրեց և ծաղկեցրեց, որ իւր անունովն Արարատ կամ Արարատի կոչուեցաւ :

Սա իւր արտաքին գեղեցկութեան համար՝ Արայ Գեշեցի կոչուեցաւ : Ասորոց Նինոսի կին Շամիրամն 4) որ սպանելով իւր ամուսնոյն յաջորդել էր նորան, կամեցաւ Արայի հետ ամուսնանալ, խոստանալով որ նրա հետ միասին Ասորեստանին վերայ ևս թագաւորեն, բայց Ասորեստանին վերայ ևս թագաւորեն, բայց երբոր չկարողացաւ համոզել առաքինի Արային, միտքը դրաւ պատերազմով հասնել նպատակին :

4) Սա եղաւ աշխարհիս առաջին թագաւորոյ թագուհին :

տակին : Շուտով երկու կողմերը հանդիպում են միմեանց Արարատեան աշխարհումն, Արայ գեղեցիկը իւր քաջ զինւորաց հետ մեծ ջարդ է տալիս թշնամեաց գնդին, բայց ինքն ևս վիրաւորվելով ընկնում է պատերազմի դաշտումն մեռնում, այսպիսով թագուհու յոյսը բոլորովին զուր է անցնում, քանզի պատուիրած էր իւր զինւորներին, որ ջանան կենդանի բռնել Արային : Շամիրամը հմուտ լինելով կախարգութեան արհեստի մէջ, կամենում է այդ արհեստովը կենդանացնել նրան, բայց այդ էլ չէ յաջողվում. երեք օրից յետոյ երբ հոտում է դիակը, Շամիրամ հրամայում է թաղել նորան : Հայոց զօրքը կորցնելով իւր նահապետին, ոտքի է կանգնում և մեծ նեղութեան մէջ է ձգում Ասորեստանեայց թագուհուն : Սա կամենալով նորանց հանգարտացնել, իւր մօտ գտնուած մարդկանց մէկին՝ որ շատ նման է լինում Արային, հագցնում է սորա զգեստները և ասում է « Թէպէտ Արայն մեռաւ բայց աստուածները լիզելով կենդանացրին և իւր մօտ է գտնվում : »

Շամիրամ տեսնելով Հայաստանի բազմաթիւ ականակիտ աղբիւրները, օգի բարեխառնութիւնը և պտղաբեր հողը, կամեցաւ մի ամաբանոց շինել : Ուստի Աղթամար ծովի

եզերքը ընտրեց և մի ամուր քաղաք շինեց Ծամբ-
րամաէրօ անուամբ, որ յետոյ Վան կոչուեցաւ :

ԱՐՄՅԻ ՅԱԶՈՐԳՆԵՐԸ ՄԻՆՁԵՒ ՊԱՐՈՅԻ 1743—748

Արայից յետոյ Ծամիրամ Հայոց իշխանու-
թիւնը յանձնեց նորա Կարգոս որդուն, որի
հետ միացած՝ ապստամբ Նինուաս որդու զէմ
պատերազմի գնացին և երկուքն ևս յաղթուե-
լով մեռան :

Կարգոսին յաջորդեց նորա Անուշաւան որ-
դին, որ թէև իւր տասնևչորս տարեկան հա-
սակում գերի էր ընկած Նինուասոյ ձեռքը,
բայց իւր խոհեմութեամբն և համեստութեամ-
բը նրան սիրելի լինելով՝ բարեկամաց միջնոր-
դութեամբը ազատուեցաւ գերութիւնից և վե-
րադառնալով հայրենիք՝ մեր ազգը երկար կա-
ռավարելուց յետոյ մեռաւ :

Անուշաւանն կոչվում էր նաև Սօսանուէր,
որովհետև ծննդեան ժամանակը Կարգոս հայրն
նուիրել էր նրան Արմենակայ տնկած Սօսեաց
անտառին, և այն ժամանակի հայերը կարծե-
լով թէ աստուածներ էին բնակվում այն տեղ,
ուստի նրան նուիրուողին և մանաւանդ Անու-

շաւանին սուրբ էին համարում :

Անուշաւանն անզաւակ լինելով՝ նրան ի-
րար ետեից յաջորդեցին Հայկալ ցեղից զանա-
զան երևելի և քաջ հայեր : Սրանք կախուած
էին Ասորեստանի թագաւորներից և միայն
անուկները գրուած են պատմութեան մէջ,
որոնք են Պարեա, Արբակ, Չաւան, Փառնակ,
Սուր, Հաւանակ կամ (Հօնակ), Վաշտակ, Հայ-
կակ Ա, Ամբակ Ա, Առնակ, Եւաւրշ Ա, որ
Եւաւրշան կամ Արփաղ քաղաքը շինեց Վաս-
պուրականի մէջ, Նորայր, Վստամ, Կար, Գո-
ռակ, Հրանտ Ա, Ընձակ, Գղակ, Հօրոյ և Չարմայր
Չարմայրի իշխանութեան ժամանակը սկը-
սել էր Տրոյացւոց պատերազմը, Պրիամոս թա-
գաւորի խնդրանք՝ Ասորեստանի Տևտամոս
թագաւորի զօրքն իւր զօրաց հետ միացնելով
գնաց Տրոյացւոց օգնութիւն ընդդէմ Հելլենա-
ցւոց : Այս տեղ Չարմայրը շատ քաջութիւն-
ներ անելուց յետոյ սպանվում է Աքիլլէսից :

Չարմայրից յետոյ տասնևերկու նահապետ-
ներ նստան Հայաստանի մէջ, որոնք մի նշա-
նաւոր գործ չանելով՝ միայն անուկները կան

պատմութեան մէջ, զրանք են, Շաւարշ Բ,
Պերճ Ա., Արբուն, Պերճ Բ, Բազուկ, Հոյ,
Յուսակ, Ամբակ Բ, Կայպակ, Փառնաւազ Ա.,
Փառնակ Բ, և Սկայորզի :

Փառնակ Բ-ի անհոգութեամբ՝ Ասորւոց
ձեռքն անցած քաղաքները Սկայորզին կրկին
գրաւեց և տասնչեօթն տարի Հայաստանը
կառավարելուց յետոյ՝ տէրութիւնը թողնելով
իւր Պարոյր որդուն՝ մեռաւ 748 տարի Քրիս-
տոսից յառաջ :

ՊԱՐՈՅՐ ԱՌԱՋԻՆ ԹԱԳԱՒՈՐ 748—700

Պարոյրի ժամանակ՝ Ասորեստանում Սար-
գանապաղ անուամբ մի անհոգ թագաւոր կար,
որի իշխանութեան տակ էր գտնվում Մարաց
ազգը : Սրանց կուսակալ Վարբակէս Մեղացին
ապստամբուելով Սարգանապաղի դէմ, դաշնա-
կից եղաւ մեր Պարոյր նահապետի և Բաբելոնի
Բեղեսոս իշխանի հետ և Նինուէին տիրելուց
յետոյ՝ իւր խոստման համաձայն երկուսին էլ
թագաւորական թագով վարձատրեց, որով Պա-
րոյրը Հայկազանց առաջին սրահաւոր թագա-
ւորն եղաւ :

Պարոյրի ժամանակ Ասորւոց Սենեքերիմ
թագաւորի Ագրամելեք և Սանասար որդիքն
իրանց հօրը սպանելով՝ փախան Հայաստան,

որոնցից յառաջացան Արծրունիք, Սանասունիք, կամ
Սասունիք կոչուած մեծամեծ նախարարութիւն-
ները : Իսկ Պարոյրն ազգի կառավարութիւնը
իւր Հարմայ որդուն յանձնելով մեռաւ :

ՊԱՐՈՅՐԻ ՅԱՋՈՐԳԵՆԵՐԸ ՄԻՆՁԵՒ ՏԻԳՐԱՆ Ա. 700—565

Պարոյրից յետոյ թագաւորեցին Հրաչեայ,
Փառնաւազ Բ, Պաճոյճ, Կոռնակ, Փառոս և
Հայկակ Բ : Վերջինս միանալով Բաբելոնացոց
Նաբուգոդոնոսոր թագաւորի հետ, Երուսա-
ղէմի վերայ գնաց և յաղթութեամբ վերա-
գառնալիս, ուրիշ գերիների հետ միասին՝ Հա-
յաստան բերեց նաև Շամբատ անունով հրեայ
իշխանին իւր ընտանիքով և ազգականներովը,
որի Բագարատ որդուց յառաջացաւ Բագարատ-
եայ կոչուած նշանաւոր ցեղը :

Հայկակ Բ.-ին յաջորդեց նորա որդի Եր-
ուանդ Ա., որ չորս տարի միայն թագաւորելով
մեռաւ, վասնորոյ Սախաւէայ կոչուեցաւ :

ՏԻԳՐԱՆ ԱՌԱՋԻՆ 565—520

Երուանդ Ա. ին յաջորդեց նորա որդի Տիգ-

րան Ա. որ Հայկազանց մէջ՝ աշխարհակալութեան կողմանէ՝ ամենից երևելի թագաւորն է համարվում: Սա Հայկայ և Արամայ նման հայրենասիրութեամբ լցուած լինելով՝ շրջակայ ազգաց տիրեց և Յունաց ազգին երկար ժամանակ հարկատու արաւ: Սորա ժամանակ վաճառականութիւնը ծաղկում է Հայաստանի մէջ, արհեստները և քաղաքականութիւնը յառաջ են գնում, և զինւորական արհեստները աւելի կատարելագործվում են:

Տիգրանը բարեկամացաւ Պարսից Կիւրոս թագաւորի հետ, որ այս ժամանակներումը սկսել էր հիմնել Պարսից տէրութիւնը: Աժգահակ Մարաց թագաւորը լսելով դրանց սէրը և միաբանութիւնը՝ մտածմունքի մէջ ընկաւ, որովհետև Կիւրոսը իւր թշնամին էր. բայց տեսնելով որ քաջութեամբ ոչինչ չէ կարող անել Տիգրանին, ուստի խորամանկութեան դիմեց առ երես բարեկամ ձևանալով՝ նորա Տիգրանուհի քրոջը իրան կին առաւ և բոլոր կանանցից նորան գերադասելով ուզեց նորա ձեռքովն սպանել Տիգրանին: Մէկ օր ասում է նրան. « Գիտես որ քո Եղբօր կինը՝ Զարուհին նախանձելով քո տիկնութեան վերայ, զրգուել է Եղբօրդ մեզ վերայ և նա էլ Կիւրոսի հետ միացած մտադիր է մեզ և մեր տէրութիւնը

ոչնչացնել որպէս զի Զարուհին բոլորի վերայ տիկնութիւն անէ: Ուստի պէտք է մի հնարք գտնես եղբօրդ կեանքը վերցնելու, որ մեր կեանքը և տէրութիւնը ապահովուի և դու էլ չխայտառահուիս բոլոր տիկնանցի մօտ»: Տիգրանուհին յառաջ առ երես ուրախութեամբ յօժարութիւն յայտնեց, բայց յետոյ հաւատարիմ մարդկանց ձեռքով Աժգահակայ չար դիտաւորութիւնը յայտնեց եղբօրը: Տիգրանն իսկոյն բաւական զօրք ժողովելով դիմեց դէպի Մարաց սահմանները, բայց խոհեմութեամբ պատերազմն ուշացրեց մինչև որ քոյրը փախաւ Աժգահակայ մօտից և Կիւրոսն էլ իւր զօրքովը վերայ հասաւ: Այն ժամանակ միասին մտան Մարաց աշխարհը և Տիգրանն անձամբ սպանեց Աժգահակին և զօրքին էլ փախստական արին: Այսպէս պատերազմը վերջանում է և տասը հազար հոգի իւրեանց Անոյշ թագուհու հետ գերի տանելով՝ բնակեցնում է: Երասխի ավերումն, որոնցից յառաջացաւ Վիշապապոլսն՝ կամ Մուրացան ցեղը, և Տիգրանակերտ քաղաքը շինելով Տիգրանուհուն և նորա սերունդներին այն տեղ է բնակեցնում, որից յառաջացաւ Ոսրան կամ Ոսրանի կոչուած ազատ ցեղը: Իսկ ինքը քառասունհինգ տարի Հայաստանը խոհեմութեամբ կառավարելուց

յետոյ մեռաւ Քրիստոսից 520 տարի յառաջ :

ՏԻԳՐԱՆԻ ՅԱԶՈՐԳՆԵՐԸ ՄԻՆՁՆԻ ԿՈՒՍԱԿԱԼՆԵՐԻ
ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆԸ 520—330

Տիգրանին յաջորդեց նորա որդի Վահագն, որ իւր քաջութիւններէ համար՝ այն ժամանակուայ Հայերից և Վրացիներից պաշտովում էր որպէս Աստուած : Սորա ցեղը Վահագնի կամ Վահագնի կոչուեցաւ :

Վահագնից յետոյ որդւոց—որդի յաջորդեցին Առաւան, Ներսէհ, Զարեհ, Արմոգ և Բայգամ որոց վերայ տեղեկութիւն չկայ :

Բայգամին յաջորդեց Վան որ Շամիրամակերտ քաղաքը նորոգելով՝ իւր անուամբը Վան կոչեց : Սրա յաջորդն եղաւ Վահէ, որ Աղէքսանդր Մակեդոնացու հետ պատերազմելիս՝ շատ քաջութիւններ անելով մեռաւ, մօտ 330 թուին Քրիստոսից յառաջ, և սորանով վերջացաւ Հայկազանց թագաւորութիւնը, հազար ութն հարիւր տարի դիմանալուց յետոյ :

ԿՈՒՍԱԿԱԼՆԵՐԸ

330—150 ԹԻՒԸ ՔՐԻՍՏՈՍԻՑ ԱՌՅԶ

Վահէից յետոյ Հայաստանը Մակեդոնացուց ձեռքի տակն ընկաւ և կառավարվում էր նրանցից ուղարկուած իշխաններովը, որոնք Կասիանէր էին կոչվում : Առաջին կուսակալն եղաւ Միհրանը, որ հինգ տարի իշխելուց յետոյ՝ Պերդիկասից յետ կոչուեցաւ և նորա տեղն եկաւ Նեոպտղոմէոս կուսակալը, որ Հայերին շատ էր նեղացնում : Քաջ Արդուարդ Սիւնեաց նախարարը՝ Կապադովկիացոց թագաւորի Արիթէոս որդու խորհրդովն ապստամբեցաւ Մակեդոնացուց տէրութիւնից և Նեոպտղոմէոս ամբարտաւան կուսակալին հալածեց Հայաստանից : Պերդիկաս լսելով այս բանս՝ իսկոյն կապադովկիոյ Եւմենէս կուսակալին ուղարկեց, որ Նեոպտղոմէոսին կրկին հաստատէ իւր նախկին պաշտօնին, բայց երբ որ չկարողացաւ յաջողցնել, առաջարկեց որ Նեոպտղոմէոսը դարձեալ մնայ Հայաստանում և տարէց—տարի Հայաստանի հարկը նորա ձեռքովն ուղարկուի : Ընդունուեցաւ Եւմենէսի առաջարկութիւնը, որովհետեւ այնուհետ Նեոպտղոմէոսն իբրև

Արդուարդի երկրորդն էր կենում Հայաստանի մէջ, մինչև որ Յւմինէսից ապստամբելով՝ պատերազմի մէջ սպանուեցաւ, որից յետոյ Արդուարդ միապետ մնաց և երեսուներեք տարի իշխելուց յետոյ մեռաւ :

Արդուարդից յետոյ իշխեցին Հրանտ և Արտաւազ : Վերջինս Սելևկիացւոց Անտիոքոս Գ. թագաւորից ապստամբելով՝ սկսաւ ինքնազուլիս իշխել. բայց երբոր Անտիոքոս շատ զօրքով եկաւ Հայաստանի վերայ, Արտաւազն ընծաներով սիրտն առաւ և խոստացաւ հարկը վճարել և յիսուն տարի իշխելով մեռաւ :

Արտաւազին տեղը կուսակալ դրուեցան Արտաշիաս և Զահրատ հայ իշխանները, որոնք Հռովմայեցոց օգնութեամբը Սելևկիացւոց դէմ ապստամբելով՝ Զահրատ Փոքր Հայոց վերայ թագաւորեց, իսկ Արտաշիաս Մեծ Հայոց վերայ, ուրտեղ Արտաշատ քաղաքը շինեց :

Արտաշիասից յետոյ Հայաստանին իշխեց իւր որդի Արտաւազգ՝ վերջին կուսակալն, որ տասն տարի իշխելուց յետոյ՝ Պարթևաց Արշակ թագաւորից յաղթուելով՝ ինքնասպան եղաւ :

ԱՐՇԱԿՈՒՆԵԱՅ ՀԱՐՍՏՈՒԹԻՒՆ

ՇՐՋԱՆ ԵՐԿՐՈՐԻ

ՎԱՂԱՐՇԱԿ 150—124 ԹԻԻԸ Գ. Ա.

Արշակունեաց թագաւորութիւնը ԱՐՇԱԿ անունով Պարթև թագաւորից սկսաւ, որ Ասորեստանին յաղթելուց և Պարթևաց թագաւորութիւնը ընդարձակելուց յետոյ՝ եկաւ Հայաստանին ևս տիրեց և իւր Վաղարշակ եղբօրն այնտեղ թագաւոր դրեց :

Վաղարշակը պատերազմի ելաւ Հայաստանի հիւսիս—արևմտեան կողմերի ազգերի դէմ, բոլորին նուաճեց ու բարեկարգութիւններ մտցրեց նոցա մէջ, և յաղթութեամբ վերադառնալով, օգի բարեխառնութեան պատճառով՝ Մծբին քաղաքը՝ որ Հայաստանի և Ասորեստանի կեդրոնումն է՝ իւր աթոռանիստ ընտրեց և աթոռը Արտաշատից փոխադրեց այնտեղ :

Վերոյիշեալ պատերազմներում՝ Վաղարշա-

կը տեսնելով Հայերի քաջութիւնն ու տիրասիրութիւնը՝ ցանկացաւ ծանօթանալ նաև մեր ազգի անցեալ կեանքի պատմութեան հետ, բայց որովհետև Հայաստանի մէջ անկարելի եղաւ գտնել այդ պատմութիւնը, ուստի Մար— Աբաս Կատինա անունով Ասորի ուսումնականին ուղարկեց Նինուէ իւր Արշակ եղբօր մօտ, որի հրամանովը թագաւորական գրատան միջից քաղեց մեր ազգի պատմութիւնը և հետը բերեց Հայաստան:

Վաղարշակ տեղեկանալով մեր ազգի ծագմանն և վիճակին, սկսեց նորա համեմատ հիմնել ամեն դասակարգի կառավարութիւն, զինւորական կրթութեան, դատաստանի և ուրիշ բաների մասին օրէնքներ և կարգադրութիւններ դրեց: Իւրաքանչիւր նախարարութեանը մի պաշտօն յանձնեց և երկու մարդիկ ևս նշանակեց, որոնց հրամայած էր որ մէկը՝ իւր տուած անիրաւ հրամանի ժամանակ՝ արդարութիւնը մտաբերել տար իրան, իսկ միւսը՝ չարագործներին պատժելու անփութ եղած ժամանակը՝ պատուհասն: Սահմանեց նաև որ՝ թագաւորի անդրանիկ որդին միայն Մծբին մնայ, իսկ միւսները Հաշտենից գաւառը:

Արշակ Ա. իւր հայր Վաղարշակի օրինակին հետևելով՝ մեր աշխարհը զարդարում է զանազան կարգադրութիւններով: Սորա ժամանակ Պոնտացիք ապստամբվում են, բայց սա շուտով հնազանդեցնում է նորանց և Սև ծովի անկերումը, իբրև նշան իւր յաղթութեան՝ մէկ արձան է կանգնեցնում, որին երկար ժամանակ Պոնտացիք պաշտում էին:

Արշակ Ա. ին յաջորդեց իւր որդի Արտաշէս Ա.ը որ իւր քաջութեամբն և աշխարհակալութեամբը յաջողութեցաւ Յունաստանին և բոլոր Փոքր Ասիոյ տիրել: Մինչև այն ժամանակը Հայոց թագաւորներն որ Պարթևաց երկրորդն էին համարվում, այնուհետև առաջինն են լինում, այնպէս որ Արտաշէսն իւր անունովն և պատկերովն է դրամ կտրում: Տիրան որդուն յանձնում է Վարաժ իշխանին, որ զինւորական արհեստի մէջ վարժեցնէ նորան, իսկ Արտաշամայ աղջիկը ամուսնացնում է Վրաց բզեշխ Միհրդատի հետ, որին Պոնտոսի բնակիչների վրայ կուսակալ է կարգում: Արտաշէսի զօրքի բազմութեան վերայ

պատմվում է թէ, այնքան շատ էր, որի թիւն
ինքը չգիտէր, ուստի երբոր բոլորը միասին
նետ էին արձակում, արևը խափանվում էր և
երբ ամեն մի զինուոր մի որոշուած տեղում մի
փոքրիկ քար էր ձգում՝ մի բլուր էր ձևանում :

Ահա այս անթիւ գորքերովն էր որ Ար-
տաշէս տիրեց Յուդաստանին և զանազան տե-
ղերի : Սակայն ցաւալի է որ այս պատերազմ-
ներում Արտաշէսի զօրքի մէջը խռովութիւն
ընկնելով նորան մահացու վէրք տուին, և
նա, մեռնելու ըոպէին՝ աչքերը դէպի վերև
բարձրացրեց և « Աւնդ փառացս անցաւորի »
սրտառուչ և անմահ խօսքերն արտասանելով՝
հոգին փչեց :

Արտաշէս իւր մահիցն առաջ Յունաստա-
նից և Փոքր Ասիայից մեծ աւարներ ուղար-
կեց Հայաստան, որոնց մէջ երևելի էին Աթե-
նասի, Հերակլէսի, Ապոլոնի, Հեփեստոսի, Դի-
ոսի, Արտեմիդի և Սփրոզիտի արձաններն իրանց
քուրմերովը :

ՏԻԳՐԱՆ ԵՐԿՐՈՐԴ 86—36 ԹԻԻԸ Ք. Ա.

Արտաշէսին յաջորդեց իւր որդի Տիգրան
Բ.ը, որ արդէն իւր հօր կենդանութեան ժա-
մանակը Հայոց վերայ թագաւոր էր կարգուած :
Սա Միհրդատի հետ միացած նուաճեց իւր

հօր մահուան պատճառով բոլոր ապստամբ-
ուածներին, և Փոքր Հայաստանին ևս տիրեց :
Այնուհետև սկսեց Հայաստանը բարեկարգել-
հրամայեց փառաւոր մեհեաններ շինել և հօր
ուղարկած կուռքերը գետեղել նորանց մէջ :
Ասորոց երկրին տիրեց և նոցա Սեղինէ թա-
գուհուն սպանեց, քանզի Ասորոց զրգուում էր
Տիգրանից ապստամբուելու : Հրեաները լսելով
Սեղինէի մահը և Հայոց քաջութիւններն,
իրանց Աղէքսանդրա թագուհու խորհրդովը
Տիգրանի մօտ դեսպաններ ուղարկեցին մեծ
ընծաներով, և խնդրեցին նորանից որ իրանց
վրայ գթալով իրանց աշխարհին սլաշտական և
հովանաւոր լինի :

Այդ միջոցները Հռովմայեցիք թշնամացան
Միհրդատի հետ, որովհետև Միհրդատ Կապա-
դովկիային իշխելով, այնտեղի Հռովմայեցոց
կարգուած Արիոբարդան թագաւորին հալածեց,
և նորա տեղն իւր Արիարաթ որդուն թագա-
ւոր դրեց : Կապադովկացիք դիմեցին Հռովմա-
յեցոց, և նոքա Սելլա քաջ զօրապետին ու-
ղարկեցին, որ եկաւ Արիարաթին դուրս քշեց
և Արիոբարդանին կրկին թագաւորեցրեց :
Այնուհետև Միհրդատ Տիգրանի օգնութեամբը
շատ անգամ Հռովմայեցոց հետ պատերազմե-
լով, երբեմն յաղթեց և երբեմն յաղթուեցաւ :

բայց երբոր նորա Փառնակէս որդին Ղուովմայեցիներէից կաշառուած՝ ապստամբուեցաւ իւր դէմ, մի բերդի մէջ անճարացած՝ ինքն իւրան սպանեց թշնամեաց ձեռքը չընկնելու համար:

Տիգրանը Միհրդատի վրէժն առնելու համար, կրկին տիրեց Միջագետքին, բայց Ղուովմայեցոց նորանոր արշաւանքներն և իւր ծերութեան արգելքներն ի նկատի ունենալով՝ նախազահուծիւնը տուեց Պարսից Արշէզ թագաւորին, իրան օգնական լինելու թշնամեաց դէմ:

Տիգրանի ծերութեան պատճառով սպարապետ կարգուեցաւ Ռշտունեաց Բարզափրանքաջ նախարարը: Սա Պարթևաց Բակուր իշխանի հետ միացած՝ կրկին անգամ ձեռք բերեց Ասորոց և Փիւնիկեցոց աշխարհները մինչև Պաղեստին: Այս ժամանակներումը Մակաբայեցի Հիւրկանոս և Անտիգոնոս եղբայրները վիճում էին քահանայապետութեան և թագաւորութեան համար: Անտիգոնոսը Բարզափրանին կաշառով իւր կողմը գրաւեց: Սա էլ Հիւրկանոսին խարդախութեամբ իրան մօտ կանչեց և մատնեց եղբօր ձեռքը: Սորանից յետոյ Հիւրկանոսի տեղապահ Հերովդէսին սպանեց, Անտիգոնոսին թագաւորեցրեց և բազմաթիւ գերի հրեաներ իրանց Հիւրկանոս քահանայապետի հետ առած դարձաւ Հայաստան, Ասորոց և Փիւնի-

կեցոց աշխարհները Բակուրին յանձնելով:

Սորանից յետոյ Տիգրանն որ շունչ և հոգի էր այսքան քաջութիւնների, մեռնում է 36 թուականին Քրիստոսից առաջ:

ԱՐՏԱԽԱՉԻ 36—33 ԹԻՒՆ Ք. Ա.

Տիգրանի տեղը նստում է նորա որդի Արտաւազդը, որ իրան միանգամայն փափկասիրութեան ու կերուխումի տուեց: Թշնամիները սորա թուլութիւնից օգուտ քաղելով՝ շատ տեղերի տիրեցին: Արտաւազդը թէպէտ սթափելով առ ժամանակ կրկին ձեռք բերեց թշնամիների գրաւած տեղերը, սակայն Ղուովմայեցոց Անտոնինոս զօրավարի արշաւանքներից վախենալով՝ հաշտութիւն խօսեց, խոստանալով նորան օգնական լինել ընդդէմ Պարսից, բայց ծածուկ Պարսից օգնութիւն տուեց, որով Ղուովմայեցիները մեծ փտանգի մէջ ընկան: Անտոնինոսն որ տեղեակ էր այս ամեն եղելութիւններին, տեսնելով ոչ գէնքի ուժով չպիտի կարողանայ Արտաւազդին յաղթել, ուստի երբեմն աղաչանքով ու երգմունքով, երբեմն սպառնալիքով և երբեմն խոստումներով նորան իւր մօտ հրաւիրեց, բայց Արտաւազդը միշտ մերժում էր նորա հրաւերը, մինչև ի

վերջոյ Համոզուեցաւ գնալ նորա մօտ: Ան-
ասնինսոսն իսկոյն ձերբակալեց նորան իւր որ-
դոցը հետ և ոսկէ շղթայով կապած տարաւ
Եգիպտոս, ուրտեղ և զլխատուեցաւ:

ԱՐՇԱՄ 33—5. ԹԻԻԸ Ք. Ա.

Արտաւազգից յետոյ թագաւորեց Արշամը,
որ Տիգրանի եղբայր Արտաշէսի որդին էր: Սա
յաջողեցաւ ձեռք բերել Ստորին ու Փոքր Հայաս-
տանը, բայց Արտաւազգի երկու որդիքը՝ որոնք
Հռովմում դեռ գերի էին, նոցա ազատելու հա-
մար Հռովմայեցոց հարկատու եղաւ: Այս միջոց-
ները Վերին Հայաստանի ժողովուրդը որոնք
Պարսից իշխանութեան տակ էին, ձանձրանալով
նոցա բռնութիւնից, Հռովմայեցոց Օգոստոս
Կայսերը դիմեցին, որը զիջանելով նոցա խնդիր
քին՝ Արտաւազգի որդի Տիգրանին նոցա համար
թագաւոր դրեց: Այսպէս՝ լիսուն և ինն տարի
Հայոց թագաւորութիւնը երկուսի էր բաժան-
ուած, Վերին և Սորին անուններով, մինչև Եր-
ուանդ Բ.ի ժամանակը, որ նոցա միացնելով մի
տէրութիւն կազմեց: Արշամ զանազան բարե-
կարգութիւններ անելով՝ մի նոր քաղաք ևս
շինեց Արշամաշառ անունով, և թագաւորութիւ-
նըն իւր Աբգար որդուն յանձնելով՝ մեռաւ:

ԱՐԳԱՐ 5 ԹԻԻԸ Ք. Ա. ՄԻՆՁԵՒ 36 ԹԻԻԸ Ք. Յ.

Արշամին յաջորդեց նորա որդի Աբգարն,
որ իւր իմաստուն կառավարութեամբն ու
հեզ ընաւորութեամբը՝ արժանացաւ մեր ազ-
գից Ասագ այր կոչուելու, բայց Յոյներն և
Ասորիներն ուղիղ արտասանել չկարողանալով
Ասագայր կամ Ապուլայր էին ասում, մինչև սովո-
րաբար Աբգար կոչուեցաւ: 5)

Արշամի ժամանակը Հռովմայեցիք միայն
Միջագետքից էին հարկ առնում, իսկ Աբգար
բոլոր Հայաստանի համար էլ հարկ է տալիս
և հրամայում է Օգոստոսի արձանը մեհեաններու-
մը կանգնեցնել: Երուսաղէմի Հերովդէս
թագաւորը կամենում է որ իւր արձանն ևս
կանգնեցնուի Հայոց մեհեաններում, բայց Աբ-
գար յանձն չէ առնում. Հերովդէսը բարկա-
նալով իւր Յովսէփ եղբորորդուն պատերազմի
է ուղարկում Հայոց դէմ, բայց յաղթվում և
սպանվում է: Հերովդէս տեսնելով որ պա-
տերազմով չկարողացաւ Աբգարին յաղթել,
ուրիշ միջոցի դիմեց—սկսեց զանազան ամբաս-
տանութիւններ անել նորա մասին, որպէս զի
Օգոստոսի աչքից ընկնէ: Բայց Աբգար ան-
ձամբ Հռովմ գնաց իրան արդարացնելու, և

5) Ստորոց ազգը կոչում էր նաև Ագայար, որ նշա-
նակում է Մեծ:

իւր խելօք վարմունքովը ո՛չ միայն կայսեր սիրելի եղաւ, այլ և մեծ պատուով Հայաստան վերագարձաւ :

Քիչ ժամանակից յետոյ Օդոստոս կայսրը մեռաւ և նորան յաջորդեց Տիբերիոսը : Այս պատճառով Աբգար խնդակցութեան դեսպան ուղարկեց Հռովմ, բայց Տիբերիոս անարգութեամբ ընդունեց նորանց : Աբգար սաստիկ բարկացած՝ մտածեց Հռովմայեցիներին ապրտամբուել, ուստի աթոռը փոխադրելով Եդեսիա՝ պատերազմի պատրաստուեցաւ :

Աբգարի ապստամբութեանը արգելք եղաւ Պարսից Արշաւիր թագաւորի մահը, որի որդոց մէջ խռովութիւն ընկնելով, Աբգարը ստիպուեցաւ Պարսկաստան գնալ նորանց հատեցնելու նպատակով, որտեղ անբժշկելի բորոտութիւն գտաւ, որ եօթն տարի տևեց : Այս միջոցին Աբգար լսելով որ իւր ապստամբութեան դիտաւորութիւնը Հռովմայեցոց ահանջն է հասել, դեսպաններ ուղարկեց Պաղեստին՝ Հռովմայեցոց զօրապետ Մարինոսի մօտ, իրան արգարացնելու և կայսեր բարկութիւնը իջեցնելու համար : Մարինոսը սիրով ընդունեց Աբգարի դեսպաններին, որոնք Երուսաղէմ գնալով՝ տեսան աշխարհիս Փրկչին և նորա հրաշագործութիւնները, և վերա-

դառնալով պատմեցին Աբգարին : Աբգար լըսելուն պէս հաւատաց Քրիստոսի Աստուածութեանն, ասելով թէ, «Այն Քրիստոս կոչուած հրաշագործ անձը կամ երկնքից իջած Աստուած է՝ և կամ Աստուծոյ որդի, որովհետև աշխարհիս մէջ չկայ այնպիսի մէկը, որ կարողանայ մեռածներին կենդանացնել» : Այն ժամանակ Աբգար մարդկային հնարքներից միանգամայն յոյսը կտրելով՝ միմիայն Քրիստոսին ապաւինեց, ուստի Անանէ սուրհանդակի և ուրիշ դեսպանների ձեռքով մի թուղթ ուղարկեց Յիսուսին՝ այս իմաստով .

«Աբգար Արշամի որդի՛ աշխարհի Իշխան,

Երուսաղէմի մէջ երեւացող Փրկիչ ու Բարերար ՅԻՍՈՒՍԻՎ ողջոյն :

Քո անունն ու առանց դեղորի արած բժշկութիւններդ լսեցի, քանզի ասում են, դու կոյրերի աչքերը բանում ես, կաղերին մանգալ ես տալիս, բորոտներին սրբում ես, սատանաներին հալածում ես, երկար ժամանակ հիւանդութիւն ունեցողներին առողջացնում ես, եւ մեռելներին էլ կենդանացնում ես : Այս բոլորը լսելով երկու բան դրի մտքումս, որ կամ Աստուած ես երկնքից իջած՝ եւ կամ Աստուծոյ որդի. այս պատճառով սոյն նամակը գրելով՝ աղաչում եմ որ զաս եւ հիւանդութիւնս բժշկես : Լսեցի նաև որ Հրեաները տրտնջում են քեզ դէմ եւ կամնում են քեզ չարչարել ու մտոցնել. բարեհաճիր զալ ինձ մօտ, ես՝ Թէև փոքրիկ՝ բայց մի զեղեցիկ քաղաք ունեմ, որ երկուսիս էլ բաւական է » :

Դեսպանների հետ ուղարկեց նաև մի պատկերահան, պատուիրելով որ եթէ Քրիստոս չգայ, նորա պատկերն օրինակէ և բերէ :

Դեսպանները այն օրը տեղ հասան, երբոր Քրիստոս յաղթանակով մտնում էր Երուսաղէմ, ուստի անձամբ չհամարձակելով Յիսուսին ներկայանալ, Փիլիպպոս առաքելոյն մօտենալով՝ ասացին. «Տէր՝ կամենում ենք Յիսուսին տեսնել» : Երբոր տեսնուեցան և յայտնի եղաւ նոցա դալու նպատակը, Քրիստոս մեծ ուրախութիւն յայտնեց Աբգարի հաւատի վերայ՝ ասելով, «Փամբ հասաւ որ Որդին Մարդոյ փառաւորուի» : 6) Յետոյ թղթի պատասխանը Թովմաս առաքելալի ձեռքով գրեց այսպէս .

« Երանի նորան որ դեռ չտեսած կ'հաւատայ ինձ, քանզի իմ մասին գրուած է թէ տեսողները չսիրի հաւատան, իսկ չտեսնողները սիրի հաւատան ու փրկուին : Իսկ քեզի մօտ դալու մասին, պէտք է կատարեմ այն բոլորը՝ որոնց համար ուղարկուած եմ, եւ երբոր կ'կատարեմ՝ սիրի համբառնամ իմ Ուղարկողի մօտ : Համբառնալուցս յետոյ աշակերտներիս մէկին կուղարկեմ որ քո ցաւերը բժշկէ, եւ թէ քեզ եւ թէ քո հպատակներիդ կեանք պարգեւէ » :

Պատկերահանը իմանալով որ Քրիստոս չէ գալու՝ կամեցաւ նորա դէմքը նկարել և տանել, բայց անհնար եղաւ. Քրիստոս նորան

6) Յովհ. Աւետ. 41. ԺԲ. 20—23 :

կանչեց իւր մօտ և մի մաքուր կտաւ ձեռքը առնելով՝ երեսին վերայ բռնեց և իւր Աստուածային դէմքը անմիջապէս նորա վերայ սպաւորուեց, որը յանձնեց նորան : 7)

Դեսպանները թուղթն և պատկերը առած՝ մեծ ուրախութեամբ վերադարձան Հայաստան : Աբգար խոնարհութեամբ և հաւատով երկիրպագեց Աստուածային պատկերին և հրամայեց նորանց զգուշութեամբ պահել, անհամբեր սպասելով Քրիստոսի խոստմանը :

Քրիստոսի համբառնալուց յետոյ՝ Թագդէոս առաքելալը եկաւ Հայաստան, որ միայն ձեռքը Աբգարի վերայ դնելով բժշկեց նորան, և բոլոր Եդեսացիներին ինչպէս և Աբգարին՝ մկրտեց և Քրիստոնեայ դարձրեց : Թագաւորի թագ շինող Ադգէին իւր տեղն Եպիսկոպոս կարգեց հաւատացեալներին վերայ, իսկ ինքը զնաց Հայաստանի միւս կողմերը Քրիստոնէական հաւատը քարոզելու :

Բժշկուելուց և մկրտուելուց յետոյ՝ Աբգար երեք տարի ևս ապրում է, այս միջոցին Աբգար ջատագով է կանգնում Քրիստոսի անուանը և թուղթ է գրում Տիբերիոս կայսեր,

7) Այս պատկերը կոչուում է նաև Դաստառակ կամ Անձնագործ Պատկեր Փրկչին և այժմ գտնուում է ձենիվայում :

Պարսից և Ասորոց թագաւորներին, յայտնելով նոցա Քրիստոսի Աստուածութիւնն, բայց դեռ պատասխանները չստացած՝ սրբութեամբ մեռնում է 36 թուականին Քրիստոսից յետոյ:

Այսպէս ահա աշխարհիս անդրանիկ Քրիստոնեայ թագաւորն՝ մեր Աբգարն եղաւ: Ուրեմն մենք էլ միշտ կարող ենք պարծենալ մեր առաջին Քրիստոնեայ ազգ լինելուն վերայ, բայց ոչ անուամբ միայն, այլև գործով:

ԱՆԱՆՈՒՆԻ 36—40 ԹԻՒՆ Բ. 3.

Աբգարին յաջորդեց նորա որդի Անանուներ, որ Եդեսիոյ մեհեանների փակած դռները կրկին բաց անել տուաւ, և նահատակեց Ադդէ եպիսկոպոսին, որ չէր կամենում հեթանոս թագաւորի համար թագ շինել: Մի օր արքունի պալատը նորոգել տալու ժամանակ, երբոր այնտեղ կանգնած հրամայում էր մի կճեայ սիւն կանգնացնել, յանկարծ սիւնը ընկաւ վերան ու սպանեց նորան:

ԱՆԱՆՈՒՆԻ 40—68 ԹԻՒՆ Բ. 3.

Աբգարի քրոջ որդի Սանատրուկն որ դեռ

Անանունի կենդանութեան ժամանակն ապրատամբուել և տիրել էր Միջագետքին, Անանունից յետոյ Եդեսացիք նորան հրաւիրեցին Հայոց գահի վերայ, խոստումն առնելով նորանից, որ իւրեանց Քրիստոնէութեանը չը դիպչի: Սանատրուկ ի սկզբան երգումով խոստացաւ, բայց երկրին տիրելուց յետոյ՝ իւր երգումն ստեց և հրամայեց Աբգարի տան բոլոր արու զաւակներին սպանել: Յետոյ հրամայեց վերանորոգել իւր աթոռանիստ Մծբին քաղաքը, որ երկրաշարժից խախտուել էր. քաղաքի մէկ հրապարակում իւր արձանն կանգնեցրեց ձեռքը մի դրամ բռնած, որով նշանակում էր թէ՛ քաղաքի նորոգելու պատճառով բոլոր դանձերը սպառուեցան և Մնաց Տին: 8)

Այնուհետև սկսեց հալածել Քրիստոնեաներին, նահատակեց Թագդէոս և Բարթոլղիմէոս առաքելներին և իւր Սանդուխտ աղջկան: Մէկ օր որսի ժամանակ զիպուածով նետից վիրաւորուեց և մեռաւ:

ՆՐՈՒԱՆԴ Բ. 68—80 ԹԻՒՆ Բ. 3.

Սանատրուկին յաջորդեց Երուանդ Բ.ը,

8) Ասում են որ այս քաղաքի Մծբին անունը՝ Մնաց մին բառերից է դուրս եկել:

որ մօր կողմանէ միայն Արշակունի էր : Սա հրամայեց կոտորել Սանատրուկի որդոցը, որոնցից միայն մէկն՝ Արտաշէս անուկով՝ ազատուեց Սմբատ Բագրատունոյ ձեռքով և աարուեց Պարսկաստան Գարեհ թագաւորի մօտ : Այնուհետև Երուանդ կասկածելով Պարսից կողմից, միացաւ Հռովմայեցոց հետ, և միանգամայն Վերին ու Ստորին Հայոց վերայ թագաւորեց, և աթոռը տեղափոխեց Արմաւիր : Սա գուշակելով գալիք պատերազմները, թողեց Արմաւիրը և Երասխ գետի ափերումը շինելով Երասխաշէս քաղաքը՝ ամրացրեց նորան :

ԱՐՏԱՆԴԻՍ 80—135 ԹԻՒՐ Ք. Յ.

Երուանդի գուշակութիւնը կատարուեցաւ, Պարսից Գարեհ թագաւորը՝ մեծ զօրք տալով Սմբատ Բագրատունու ձեռքը՝ Արտաշէսի հետ ուղարկեց Հայաստան, որ նորան այնտեղ թագաւորեցնէ : Երբոր նորանք հասան Հայաստան, ամեն կողմերից Հայոց նախարարները՝ իւրեանց զօրքերովը անց կացան Սմբատի կողմը, և Երուանդի կողմը մնաց միայն մի գունդ վարձկան զօրք, որոնք խոստացած էին Արտաշէսին սպանել : Բայց Արտաշէսի ստրնաուի որդի Գիսակը՝ նորան ազատեց, իսկ ինքը

դէմքի կիսիցն զրիուելով մեռաւ : Երուանդ տեսնելով իւր զօրքի կոտորածը՝ փախաւ դէպի Երուանդաշատ : Սմբատ իւր զօրքովը հետևեց նորան, որոնք հեշտութեամբ մտան քաղաքը, ուր Երուանդը սպանուեց և Արտաշէսը թագաւոր պսակուեցաւ :

Այնուհետև Արտաշէս Պարսից զօրքին մեծ պարգևներով յետ դարձրեց. Սմբատ Բագրատունուն ընդհանուր սպարապետ կարգեց, որի ձեռքով մեծ ընծաներ ուղարկեց Պարսից Գարեհ թագաւորին, նորա այնքան բարերարութիւնների փոխարէն : Արգամ զօրապետը որ Երուանդին թողնելով անցել էր Արտաշէսի կողմը՝ թագաւորի երկրորդ կոչուեցաւ : Գիսակի որդի Ներսէսը՝ նահապետ կարգուեցաւ Գիմակսեան (Գիմակիսեան) նախարարութեանը :

Աւանաց ազգը՝ ուրիշ լեռնական ազգերի հետ միացած՝ յարձակուեցան Հայաստանի վերայ, բայց Արտաշէս քաջութեամբ յաղթեց և նոցա թագաւորի Սաթէն որդուն գերի բռնեց : Բայց նորա քոյր Սաթինիկի խնդիրքին զիջանելով՝ վերադարձրեց եղբօրն և Սաթինիկին իրան թագուհի առաւ :

Արտաշէս բոլոր իւր թագաւորութեան ժամանակ մեծ հոգս էր անում մեր աշխարհի շինութեան և բարեկարգութեան մասին : Սո-

րա ժամանակ Հայաստանը լցուեցաւ բազմա-
թիւ գաղթականներով. ուսումն երկրագոր-
ծութիւնն ու վաճառականութիւնը բաւական
կատարելագործուեցան :

Արտաշէս բոլոր իւր որդոց մի մի պաշ-
տօններ ու արտօնութիւններ տալով, մտքով
դրեց Հռովմայեցիներից աչտամբուելու : Հը-
ռովմայեցիք լսելով այս բանս՝ Տրայիանոսի ա-
ռաջնորդութեամբ մտան Հայաստան, սակայն
յաղթուեցան և Հայերը մի քանի ժամանակ
հարկ չտուին Հռովմայեցոց : Բայց երբոր դար-
ձեալ Տրայիանոս նոր զօրքով եկաւ Պարթևաց
վերայ, Արտաշէս լաւ համարեց հաշտութիւն
խօսել : 135. Թուականին Հռովմայեցոց օգ-
նութիւն տալու ժամանակ ընդդէմ Պարթևաց,
Մարանգ գաւառի՝ Բակուրանակերտ աւանու-
մըն հիւանդանալով մեռաւ : Մահուան վերջին
րոպէին յիշելով իւր կեանքի անցկացած եր-
ջանիկ օրերը, մի վերջին ողջոյն ևս տուեց
իւր ցանկալի հայրենիքին՝ ասելով, «Երանի
թէ մէկը վերագարձնէր ինձ Նաւասարգ ամսի
ճիրանեգոյն առաւօտները, եղջերուների թըռչ-
կոտելն ու եզնիկների վագելը, երբ մեք փոզ
էինք փչում ու թմբուկ ածում» : Արտաշէսի
մահը մեծ սուգ պատճառեց բոլոր Հայերին,
այնպէս որ նոցանից մի քանիսը թաղման

հանդիսին՝ կենդանի զոհ դարձան նորան, քան-
զի Արտաշէս որպէս ամէնքի հայրը, նոցա վըշ-
տերին վշտակից և ուրախութեանը ուրախա-
կից էր :

ԱՐՏԱՒԱՋԳ 135 ԹԻՒՆ Ք. Յ.

Արտաշէսի տեղը նստաւ նորա որդի Ար-
տաւազդը, որ թագաւոր դառնալուն պէս՝ բո-
լոր իւր եղբայրներին և քոյրերին մօտիցը
հեռացրեց : Մէկ անգամ Մասիս լերան վերայ
որսի ժամանակ մի խոր փոսի մէջ ընկաւ և
անհետացաւ : Այս արկածի վերայ մինչև այժմ
էլ դեռ շատ բաներ են պատմում :

ՏԻՐԱՆ 135—156 ԹԻՒՆ Ք. Յ.

Արտաւազդը որովհետև որդի չունէր, նո-
րան յաջորդեց իւր եղբայր Տիրանը, որ մի
թոյլ և փափկասէր մարդ լինելով՝ երկրի կա-
ռավարութիւնը յանձնեց Անձևացեաց Երախ-
նաուու իշխանին, իսկ ինքն գնալով Նկեղեաց
Զրմէս աւանը՝ զբօսանքով էր պարապվում :
Մէկ օր ձեան հիւսի տակ ընկնելով մեռաւ :

Արտաշիր տեսնելով որ չպիտի կարողանայ Խոսրովի դէմ կենալ, խորամանկութեան դիմեց—խոստացաւ երկրորդական պատիւ շնորհել այն մարդին՝ որ Խոսրովին սպանէ ու ինքը կրկին տիրէ Պարսկաստանին։ Նորա նախարարներէց մէկը՝ Անակ Պահլաւունին, յանձն առաւ այս սոսկալի պաշտօնը և իրան Արտաշրի ձեռքից փախստական ձեռքներով՝ եկաւ Հայաստան, սիրով ընդունուեցաւ Խոսրով Մեծից և բնակուեցաւ Վաղարշապատ մայրաքաղաքի մէջ, որտեղ նորա Ոգոհի կինը ծնաւ մեր սուրբ Գրիգոր Լուսաւորչին։ Իսկ Անակ մէկ օր որսի ժամանակ յաջող ժամ գտնելով՝ սպանեց Խոսրովին և կամեցաւ փախչել Պարսկաստան, բայց Հայերից պաշարուելով գետն ընկաւ և խեղդուեցաւ։ Խոսրով մահուան րոպէին հրամայեց ջնջել Անակի բոլոր գերդաստանը, որ և շուտով կատարուեցաւ։ Այդ գերդաստանից ազատուեցաւ նորածին Գրիգորը, որ Աստուածային տնօրէնութեամբ Սոփիա դայեակի և նորա եղբայր Եւթաղի ձեռքով տարուեցաւ Վեսարիա։ Այնտեղ Սոփիան նորան մկրտեց և Քրիստոնէական հոգով կրթեց նորան, և երբ չափահաս եղաւ՝ ամուսնացրեց Մարիամ անուանով մի հաւատացեալ օրհորդի հետ, որից երկու որդի ունեցաւ Վրթանէս և

Արիստակէս անուաներով։

Արտաշիրը իրան բաղձանքին հասնելով մտաւ Պարսկաստան և կամենում էր տիրել նաև Հայաստանին, բայց Հայոց նախարարները միաբանական հոգով երկար ժամանակ դէմ կացան նորան, մինչև 260 թուին անձարացած հնազանդուեցան նորան, որ մտնելով Հայաստան՝ Խոսրովի անուանով տնկած սահմանազիխ քարերի արձանազրուծիւնները իւր անուամբ փոխել տուեց։

ՏՐԴԱՏ 286—342 ԹԻՒՆՔ Գ. 3.

Արտաշիրը բոլոր Հայաստանին տիրելուց յետոյ՝ Խոսրովի ցեղը սրով ջնջել տուեց, որոնցից նորա որդի Տրդատն ազատուեցաւ Արտաւազդ Մանգակունու ձեռքովը ու Հռովմ տարուելով պահվում էր Լիկինիոս Կոմսի մօտ։ Այնտեղ Տրդատը վարժուեցաւ զանազան ուսմունքներով ու մարզմունքներով, և արտաքոյ կարգի քաջութիւններ անելով՝ մեծ պատուի ու փառքի տիրացաւ։

Ս. Գրիգոր Լուսաւորիչը և իւր Մարիամ կինը իւրեանց ամուսնութեան երրորդ տարին՝ փոխադարձ հաւանութեամբ բաժանուեցան միմեանցից, Մարիամ իւր Արիստակէս որդովը

մտաւ կուսանոց, իսկ Գրեգորը Վրթանիսին դաշեակի մօտ թողնելով՝ ինքը դնաց Հռովմ և Տրգատի մօտ ծառայութեան մտաւ :

Տրգատ 286 թուականին՝ Գեոկղիտիանոս կայսեր փոխանակ՝ մենամարտեցաւ Գոթացոց թագաւորի հետ և յաղթեց նորան : Կայսրը իրան երախտագիտութիւնը ցոյց տալու համար, Տրգատին թագաւորական թագով և զօրքով ուղարկեց Հայաստան՝ իրան հայրենական աթոռը ժառանգելու :

Երբոր Տրգատը Կեսարիա հասաւ Հայոց նախարարները առաջ զնացին նորան և կրկին Հայոց վերայ թագաւոր պսակեցին նորան : Տրգատ հասնելով Անի ամրոցը՝ և իւր Խոսրովի դուխտ քրոջը այնտեղ Օտայ Ամատունու հաւատարիմ պահպանութեան տակ գտնելով՝ չափազանց ուրախացաւ, և իւր երախտագիտութիւնը յայտնելով նորան՝ Հայոց աշխարհի հազարապետ կարգեց, իսկ իւր ազատիչ Արտաւազդ Մանդակունուն՝ սպարապետ :

Սորանից յետոյ Տրգատը գալով Եկեղեաց դաւառը, իւր յաղթութիւնների մասին զոհ էր մատուցանում Անահիտ չաստուածուհուն, երբոր Գրեգորը յանձն չառաւ մասնակից լինելու այն զոհերին, այն ժամանակը նորան մատնեց անտանելի չարչարանքների, իսկ երբ

լսեց որ իւր հօրը սպանող Անակի որդին է, հրամայեց Արտաշատի խոր վիրապը 11) դձել, որտեղ տասն և չորս տարի մնաց :

Այնուհետև Հռովմայեցոց զօրքերովը միանգամայն հալածոււմ է Պարսից մեր աշխարհիցը և Հայաստանը խաղաղացնելով՝ Ալանաց Աշխադար թագաւորի Աշխէն աղջկայ հետ ամուսնանում է :

300 կամ 301 թուին մի խումբ կոյսեր Գեոկղիտիանոս կայսեր հալածանքներից փախչելով՝ մտան Հայաստան Գայիանէ Մայրապետի առաջնորդութեամբ, և բնակվում էին Վաղարշապատի մօտ մէկ հնձանում : Տրգատը կայսեր նամակից իմանալով նոցա Հայաստան գալը, իսկոյն գտնել տուաւ և ուզեց ամուսնանալ Հռիփսիմէի հետ, որ բոլորից գեղեցիկն էր, բայց սա չհամաձայնուեցաւ թագաւորի կամքին : Տրգատն ևս բոլորին նահատակել տուաւ : Մի քանի օրից յետոյ որսի ժամանակ՝ Աստուածանից պատժուելով՝ մի քանի նախարարների հետ դիւահարուեցաւ :

Մինչդեռ Տրգատը թափառում էր անտառներում, նորա Խոսրովի դուխտ քոյրն երազ տեսաւ, որի մէջ ասացին՝ թէ Գրեգորին անպատճառ հանեն վիրապից և նա կարող կը

11) Այս վերապը որոշուած էր մահապարտների համար :

լինի միայն թագաւորին բժշկել: Առաջին անգամ ուշադրութիւն չգարձրին երազին, բայց երբոր կրկնուեցաւ երազն՝ Օտայ Ամատունին գնաց Արտաշատ և վերապից դուրս բերեց Գրիգորին, որ բժշկեց թէ թագաւորին և թէ նախարարներին: Այնուհետև հիմնուեցան Հրուիփսիմէի և Գայիանէի անուններով վկայարանները: Հաւատացեալ թագաւորը անձամբ այս վկայարանների շինութեան համար Մասիս լեռիցը արձաններ էր բերում, իսկ Աշխէնը և Խոսրովիդուխտը իւրեանց քղանցքներով հող էին դուրս անում հիմքաւորերից՝:

Այնուհետև թագաւորը Լուսաւորջի հետ միասին սկսաւ շրջել Հայաստանի զանազան կողմերը և շատ տեղեր ստիպելով ու յորդորելով թողնել էր տալիս հեթանոսութիւնը և նոցա մեհեանները քանդելով՝ եկեղեցիներ էր հիմնել տալիս ու խաչեր կանգնեցնում:

Սորանից յետոյ բոլոր ազգի միահաւան ընտրութեամբ՝ Գրիգորին իւրեանց ընդհանուր հովիւ կարգեցին և ուղարկեցին Կեսարիա, որտեղ Ղևոնդիոս հայրապետից Արքեպիսկոպոս ձեռնադրուեցաւ և վերադարձաւ Հայաստան: Տրդատը լսելով Գրիգորի գալուստը՝ ընտանիքով և զօրքով գնաց նորան ընդառաջ մինչև Բագաւան, որտեղ Նվրատ գետի վերայ՝ Լուս-

աւորիչը մկրտում է թագաւորին, նորա ընտանիքին և չորս միլիոնի չափ մարդկանց: Փոքր ինչ յետոյ հիմնվում է այժմեան Էջմիածինը: 12)

Տրդատը լսելով Կոստանդիանոս կայսեր Գրիստոնեայ լինելը, Հռոմ գնաց իւր սրտի ուրախակցութիւնը յայտնելու: Այս ժամանակ Շապուհ յաջող միջոց գտնելով՝ հիւսիսային ազգերի հետ միացած յարձակուեց Հայաստանի վերայ: Տրդատը վերայ հասաւ, ժողովեց զօրքն և միանգամայն ջարդեց ու փախտական արաւ նոցա: Մէկ քանի ժամանակից յետոյ Նիկիայում տեղի ունեցաւ առաջին Տիեզերական ժողովը, որտեղ հրաւիրուեցաւ և մեր Ս. Գրիգորը, որն իւր փոխարէն Արիստակէս որդուն ուղարկեց: Սա վերադառնալով՝ հետը բերեց միւսնոյն ժողովի դաւանութիւնը, որը Ս. Գրիգոր կնքեց «Իսկ մեք փառաւորեսցուք . . . և այլն» խօսքերով:

Սորանից յետոյ Ս. Գրիգոր Լուսաւորիչը առանձնացաւ Մանեայ այրումն, որտեղ 332 թուականին կնքեց իւր բազմաշխատ կեանքը, վաղուց իւր տեղը կարգած լինելով Արիստակէս որդուն:

12) Այստեղ թող Ուսուցիչը պատկերները Ս. Գրիգոր Լուսաւորջի երազը Ս. Էջմիածնի վերաբերմամբ:

Այնուհետև Հայոց նախարարների մէջ ըստ կասն երևան գալ անկարգութիւններ և հեթանոսավայել ընթացք: Սուրբն Տրդատ որքան հնարաւոր էր աղաչանքով խրատեց նորանց յետ կենալ իրանց անհաճոյ ընթացքից, բայց երբ բոլոր խրատները անօգուտ եղան, յուսահատուած թողեց թագաւորութիւնը և զնաց առանձնացաւ Լուսաւորչի ճգնարանումը: Նախարարները քանի անգամ յետ կոչեցին նորան իրան գահը, խոստանալով թողնել իրանց անկարգութիւնները, բայց երբոր Տրդատ յանձն չառաւ, ասում են որ թունաւորելով վերջ տուին նորա օրինակելի կեանքին 342 թուականին:

ԽՈՍՐՈՎ Բ. 343—352 ԹԻՒՆ Ք. 3.

Տրդատի մահից յետոյ Հայոց բարեմիտ նախարարները Կոստանդ կայսերն աղաչելով Տրդատի որդի Խոսրովին Հայոց թագաւոր պրտակել տուին: Սա թոյլ ու անհոգ մէկը լինելով որսերով էր պարապվում: Ազատ գետի ավերումը մէկ քաղաք շինեց Դոմէն անունով և աթոռը փոխադրեց այնտեղ: Խոսրովի ժամանակ անուանի եղաւ Վահան Ամատունի զօրավարը, որ մեծ յաղթութիւն արաւ Կապուհի և Սարմատացոյ գէմ:

ՏԻՐԱՆ Բ. 353—364 ԹԻՒՆ Ք. 3.

Խոսրովին յաջորդեց նորա որդի Տիրան Բ.ը, որ Սուրբ Վրթանիսի հետ Կոստանդնուպոլիս գնալով Կոստանդ կայսեր հաւանութեամբ Հայոց թագաւոր կարգուեցաւ: Սորա բացակայութեան ժամանակ՝ Պարսիկները արշաւեցին Հայաստանի վերայ, բայց Արշաւիր Կամսարականը նոցա յաղթեց և փոխստական արաւ Հայաստանից: Այս պատճառով Տիրան Յուլիանոսին օգնութիւն տուաւ ընդդէմ Պարսից. բայց Պարսիկները յաղթող գտնուեցան և Կապուհ խարգախուցեամբ Տիրանին իւր մօտ կոչելով աչքերը կուրացրեց և ուղարկեց Կուաշ աւանը:

ԱՐՇԱՎ Բ. 364—382 ԹԻՒՆ Ք. 3.

Կապուհ Հայերի վրէժխնդրութիւնը չըշարժելու համար՝ Տիրանի որդի Արշակ Բ.ին թագաւորեցնում է Հայոց վերայ:

Այս Արշակը իւր անկարգ վարմունքովը ու անհոգ բնաւորութեամբը մեր ազգի թշուառութեան և խեղճութեան զլիաւոր պատճառն եղաւ: Վաղենտինոս կայսրը զեսպաններ ուղարկեց Արշակի մօտ, սովորական հարկը

պահանջելու և համոզելու որ Պարսից ծառայութիւնից յետ կենայ: Արշակ արհամարհանքով յետ դարձրեց նորա դեսպաններին: Կայսրըն բարկանալով՝ մեծ պատրաստութեամբ Թէոդոս զօրավարին ուղարկեց Հայոց վերայ: Մեծն Ներսէս հայրապետը՝ որ Լուսաւորչի թոռան Յուսիկի թոռն էր, թէև Արշակի կուրիա բնաւորութիւնից վշտացած էր արգէն, սակայն ազգային շահն անձնական պատուից գերադաս համարելով Կ. Պօլիս գնաց և միջնորդ ընկնելով բանն խաղաղութեամբ վերջացրեց: Այնուհետև Արշակը դարձեալ սկսաւ անձնատուր լինել իւր նախկին մոլութիւններին. մէկ քաղաք շինեց Արշակուսի անունով, և հըրաման հանեց որ այնտեղ փախչող յանցաւորները պատժից ազատ պիտի մնան, որով քիչ ժամանակում բոլոր քաղաքը բնակիչներով լըցուեցաւ: Մեծն Ներսէս սկսաւ խրատել թագաւորին որ թողնի իւր անկարգ վարմունքը, բայց անօգուտ. նախարարներն ևս բարկացած՝ Շապուհին իրանց օգնութիւն կոչեցին, Արշակաւանը կործանեցին ու բնակիչներին շարդեցին: Արշակ անճարացած փախաւ Վրաստան և նոցա օգնութեամբը՝ դիմեց նախարարների վերայ: Կարծես այս ցաւալի անցքերը բաւական չէին, Վաղէս կայսրն ևս լսելով որ Ար-

շակը Շապուհին օգնել է Յունաց դէմ, շատ զօրքով Թէոդոս զօրավարին Հայաստան ուղարկեց: Արշակ մնաց շուարած և դարձեալ Ս. Ներսէսին ապաւինեց, որ այդ ողորմելի ժամանակում Հայաստանի միակ միութարութիւնն էր: Սա շատ դժուարութեամբ նախարարներին հաշտեցրեց թագաւորի հետ և Արշակի որդի Պապին պատանդ առնելով՝ գնաց Կ. Պօլիս, կայսեր բարկութիւնը իջեցնելու. բայց Վաղէսը Արիստոս 13) լինելով ոչ միայն շընդունեց նորա առաջարկութիւնը, այլ և նորան աքսորեց մի անմարդարնակ կղզի: Արշակ լսելով Սուրբ Ներսէսի աքսորուելը, դարձեալ վերանորոգեց իւր անկարգութիւնները, Կամսարականաց ցեղը ջնջել տուեց, որոնցից միայն Սպանդաշատն իւր որդոց հետ փախչելով ազատուեցաւ: Շապուհն ևս տեսնելով նախարարների ատելութիւնը դէպի իրանց թագաւորն, շատ զօրք ուղարկեց Հայաստան նախարարներին օգնութեան, որոնք այն ատիճան նեղը ձգեցին Արշակին, որ անձնատուր եղաւ Պարսից. Շապուհ շղթայել տուեց նորան

13) Արիստոսն նշանակուած Արիստ հերետիկոսի հետևողը, որ քարոզութեամբ թէ Արդին Ստուսւոյ արարած է, և հենց սորա պատճառով տեղի ունեցաւ Նիկիայի առաջին Տեղեբական ժողովը:

և ուղարկեց Անյուշ բերդը: 14)

Այնուհետև Շապուհ մտադիր լինելով Հայերին արևապաշտ դարձնելու, Մերուժան Արծրունի և Վահան Մամիկոնեան ազգուրաց նախարարներին թագ խոստացաւ և շատ զօրք տալով նոցա ձեռքը՝ Հայաստան ուղարկեց որպէսզի բոլոր Հայաստանը արևապաշտ դարձնեն: Սոքա ևս իրանց ձեռքից եկած չարիքը չխնայեցին խեղճ Հայաստանի համար: Արշակ լսելով այս բոլորը, և միևնոյն ժամանակ լաւ հասկանալով որ ինքն է այս բոլոր չարիքների պատճառը, անձնասպան եղաւ Խուժաստանի Անյուշ բերդում:

ՊԱՊ 382—388 ԹԻՒՂ Ք. Յ.

Մինչդեռ Հայաստանի բարերար՝ Մեծն Ներսէսը որ Թէոգոս կայսեր հրամանովը աքսորանքից վերագառնալով Կոստանդնուպօլիս էր գտնվում, լսելով Հայաստանի թշուառութիւնը՝ աղաչեց Թէոգոս կայսերն որ զէթ արևելեան Քրիստոնէութիւնը պաշտպանելու համար օգնութեան ձեռք կարկառի տառապեալ Հայաստանին, Արշակի որդի Պապին

14) Անյուշ նշանակումն անյիշելի, քանզի այնտեղ աբսորբող անուէր չպէտք էր այլ ևս յիշուէր:

Հայոց վերայ թագաւորեցնելով: Բարեպաշտ կայսրը լուծ է նորա աղաչանքը և Պապին մեծ զօրքով Տերենտիանոս զօրավարի առաջնորդութեամբ ուղարկում է Հայաստան: Սուրբ Հայրապետը և այն նախարարներն՝ որոնք փախել էին Հայաստանի անկարգութիւններից, ուղեկից են լինում նորընտիր թագաւորին:

Սոքա հասնելով Հայաստան՝ սկսում են պատերազմելով հալածել Պարսից մեր աշխարհից: Պատմվում է որ երբ Հոյսբը Յուենաց զօրքերի հետ միացած, Պարսից վերջին վճռական հարուածը տալու հետ էին, թունդ կռուի ժամանակ՝ արեգակը նոցա հանդէպ լինելով նեղում և թոյլ չէր տալիս ազատ պատերազմել: Մեծն Ներսէս Իսրայէլացոց Մովսէսի նրման բարձրանում է Նպատ լեռան գլուխը և սկսում է բազկատարած աղօթել, որով յանկարծ մի ամպ գալիս՝ արևը ծածկում է, և նոյնպէս մի հակառակ սաստիկ քամի փչելով՝ Պարսից նետերը իրանց վերայ է դարձնում: Այդ միջոցին՝ Սպանդարտ Կամսարակա՛նը սպանում է Ղեկաց Երզիր թագաւորին, Սուշեղ Մամիկոնեանը վիրաւորում է Սղուանից Ռուսայր թագաւորին: Մերուժանի ձին վիրաւորուելով՝ անճարած ինքն սկսում է փախչել միւս Պարսից զօրքերի հետ, բայց Սմբատ Բաղրա-

տունին վրայ հասնելով՝ նորան բռնում է և մի շեկացած շամփուր պսակաձև ուրբելով զբլխին է դնում և ասում. «Որովհետև կամենում էիր Հայոց վերայ թագաւոր լինիլ, ահա ես սորանով պսակում եմ քեզ իմ հայրենական իշխանութեամբը»: Այսպէս յաղթութիւնը Հայերի կողմն է լինում. Պապը նստում է Հայոց գահի վերայ, և առատ պարգևներով վարձատրելով Յունաց զօրքերին՝ յետ է դարձնում: Յետոյ Ս. Հայրապետը՝ թագաւորին և նախարարներին ժողովելով, ուխտ է դնում նոցա մէջ, որով թագաւորը խոստանում է այնուհետև հաւատարմութեամբ Աստուծոյ ծառայելու, և նախարարները խօսք են տալիս հաւատարիմ մնալու իրանց թագաւորին: Այսպիսով առժամանակ Հայաստանը խաղաղացաւ, բայց ափսոս, որ այդ խաղաղութիւնը երկարատև չեղաւ, որովհետև փոքր անցած, Պապը կամաց կամաց սկսաւ իւր Արշակ հօր անկարգ ընթացքը բռնել: Սուրբն Ներսէս սկսեց կրկին իւր հայրական խրատներով յանդիմանել նորա անարժան վարքը, բայց Պապ փոխանակ լսելու նորա փրկարար խրատները, ծածուկ թունաւորեց նորան և զրկեց Հայաստանը իւր բազմարդիւն բարերարից:

Սակայն Աստուած անպատիժ չթողեց այս

անգութ թագաւորին, քիչ ժամանակից յետոյ՝ երբոր Պապը անմտութեամբ ապստամբուեցաւ Յունաց դէմ, Թէոդոս կայսրն ևս նոր զօրքով Տերենտիանոսին Հայաստան վերադարձրեց, Պապը բռնուեց և Կոստանդնուպօլիս տարուելով զլիստուեց:

Վ.Ս.ՐԱԶՄԱՏ 391—394 ԹԻՒՐ Գ. 3.

Պապից յետոյ Թէոդոսը Հայոց վերայ թագաւորեցրեց Վարազդատ անունով Արշակունի իշխանին, որ իւր անմտութեամբը հեռացրեց իւր մօտից երևելի նախարարներին և սկսաւ գետապանական հաղորդակցութիւն պահել Պարսից հետ: Կայսրն լսելով այս ամենը՝ նորան կանչեց Կոստանդնուպօլիս: Սա էլ կարծելով թէ կայսրը իւր արածները չէ իմանում, գնաց այնտեղ և իսկայն աքսորուեց Թուրիս կղզին:

Ս.ՐՇԱԿ Գ. ՎԱԳԱՐՇԱԿ Բ. ԵՒ ԽՈՍՐՈՎ Գ.

394—399 ԹԻՒՐ Գ. 3.

Թէոդոս կայսրը մտածելով՝ որ եթէ երկու թագաւոր լինին, հեշտութեամբ չպիտի կարողանան ապստամբուել. Պապի երկու որդոյը՝ Արշակին ու Վաղարշակին թագաւորեցրեց Հա-

յոց վերայ: Արշակ իւր ակտորը գրեց Գուին, իսկ Վաղարշակը Երիզա, որ գեռ մէկ տարին չլրացնելով՝ մեռաւ:

Վաղարշակի մահից յետոյ՝ Հայաստանը երկու մասնի բաժանուեցաւ.— արևելեան մասը Պարսից, իսկ արևմտեանը Յունաց: Արշակ Գ. ը որ թագաւորում էր արևելեան մասում, չուզեց հեթանոս թագաւորի ձեռքի տակ մընալ, ուստի գնաց Յունաց մասն ու ակտորը փոխադրեց Երիզա, որտեղ Պարսից բաժնից գաղթեցին և շատ նախարարներ: Այս պատճառով Պարսիկները նորա տեղը թագաւորեցրին Արշակունեաց ցեղից Խոսրով անունով մէկին: Քիչ ժամանակից յետոյ՝ Խոսրովի և Արշակի մէջ պատերազմ բացուեցաւ, որովհետև գաղթած նախարարները կրկին Պարսից մասը գալու ժամանակ՝ իրանց հետ բերին նաև Արշակի գանձերը: Արշակ քանի անգամ աղօժանքով յետ պահանջեց իւր գանձերը, բայց Խոսրով չլսեց նորան, այսպիսով պատերազմ սկսաւ երկու Արշակունի թագաւորների մէջ: Արշակ յաղթուեցաւ և վիրաւորուած սրտով վերագառնալով Եկեղեաց գաւառն, շուտով մեռաւ այնտեղ:

ԽՈՍՐՈՎ Գ. ԵՐԿՈՒ ԲՍՃԵՆՆ ԿԵՐԷՑ ԹԱԳԱՒՈՐ
399—400 ԹԻՒՆ Ք. Յ.

Արշակից յետոյ Յունաց մասում գտնուող Հայոց նախարարները չուզեցին առանց Արշակունի թագաւորի մնալ, ուստի միաբանուեցան զալ Պարսից բաժինը՝ Խոսրովի մօտ: Խոսրով սիրով ընդունեց նորանց, և յետոյ յարմար միջոց գտնելով, կայսերն խոստացաւ Յունաց բաժնին ևս հարկ տալու, և այսպիսով բոլոր Հայաստանի թագաւոր եղաւ: Բայց ակոսն, որ քիչ յետոյ մի քանի օտարամուկ նախարարներ գնալով Շապուհի մօտ, սուտ ամբաստանութիւններ արին Խոսրովի մօտին, ուստի և Շապուհ շատ զօրքով իւր Արտաշէր որդին պատերազմի ուղարկեց Հայաստան: Խոսրովը ամեն կողմանէ անօգնական մնալով, ակամայ Արտաշի ձեռքն ընկաւ և շղթայակապ Անյուշ բերդը տարուեցաւ:

Վ.ՌԱՄՇԱՊՈՒՆ 401—421 ԹԻՒՆ Ք. Յ.

Արտաշէր Խոսրովի տեղը նստացնում է նորա եղբայր Վաւաշապուհին, որ իւր հանգարտ ու խոհեմ բնաւորութեամբը՝ մեր աշխարհը խաղաղութեամբ կառավարեց: Սա իւր բարեհամբույր բնաւորութեամբը այն աստիճան

սիրելի եղաւ Պարսից թագաւորին՝ որ իւր Խոսրով եղբօրը ազատել տուեց Անյուշ բերդից :

Հայոց ազգը ունէր իւր անկախ Հովառապետն ու Եկեղեցին, բայց զուրկ էր ազգային նշանազրբերից, որոնցով պէտք է ժողովուրդը կրթուէր իւր կրօնի ու լեզուի մէջ : Վաւառապուհի ժամանակ Հայաստանում գտնվում էին երկու խելօք և իմաստուն հագեւորականներ, գորանք Ս. Սահակ Հայրապետն ու Ս. Մեսրոպըն 15) էին : Սորա գրեթէ միշտ մըտածում էին ազգային նշանազրբերի մասին : Սուրբ Մեսրոպըն լանձն առաւ հոգալ այս նշանաւոր գործի մասին, և զնալով զանազան գիտնականների մօտ, շատ աշխատեց ձեռք բերելու իւր միակ ցանկացածը, բայց անկարելի եղաւ և իւր բոլոր աշխատանքը իզուր անցան, քանզի ոչ ոք չկարողացաւ օգնել նորան :

Մարդկանցից յոյսը կորած՝ Ս. Մեսրոպըն Աստուծուն ապաւինեց և նորանից խնդրեց իրան օգնելու այդ դժուար խնդիրը գլուխ բերելու : Եւ ահա տեսիլքի մէջ մի ձեռք երևաց և զրեց Հայկական տառերը : Այդ տառերի ձեւը Ս. Մեսրոպի մտքումը տպուելով երբոր արթնացաւ, տախտակի վերայ նշանակեց մի առ մի :

15) Սուրբ Մեսրոպըն կոչվում էր նաև Մաշտոց :

Տառերը գտնելուց յետոյ՝ Ս. Սահակը և Ս. Մեսրոպըն Վաւառապուհի օգնականութեամբ՝ մեծ եռանդով սկսան նախ Ս. Գիրքը և ապա ուրիշ շատ գրքեր թարգմանել, յետոյ բազմաթիւ ուսումնարաններ բաց արին և ազգի որդոց Մայրենի լեզուի տառերի ընթերցանութեամբ սկսան կրթել : Եկեղեցիների բոլոր ժամերգութիւնը փոխուեցաւ Հայերէն և ուսումն կամաց կամաց տարածուեցաւ ամբողջ Հայաստանի մէջ :

Վաւառապուհ բոլոր իւր թագաւորութեան ժամանակը՝ մեր աշխարհը խաղաղ ու անդորր կառավարելով, շատ բարիքների պատճառ եղաւ և իւր անունը յաւիտեան յիշատակելի ու օրինակելի դարձրեց : Նա մեռաւ 421 թուականին : Սորա թագաւորութեան ժամանակը կոչվում է մեր ազգի Ունեւարը :

ԽՈՍՐՈՎ, Գ. ՄԻՆՁԵՒ ԱՐՏԱՇԷՍ Գ. 421—427

ԹԻՒՐ Գ. Յ.

Վաւառապուհից յետոյ՝ իւր Արտաշէս որդին փոքր լինելով՝ նորա եղբայր Խոսրով Գ.ը կրկին թագաւորեց Հայոց վերայ, որ մէկ տարի միայն իշխելով մեռաւ :

Խոսրովից յետոյ՝ Պարսից Յազկերա Ա. թա-

գաւորը կամենալով Հայերին արեւապաշտութեան դարձնել, իւր Շապուհ որդուն Հայոց թագաւոր նշանակեց. սակայն իւր դիտաւորութիւնը չյաջողուեցաւ, քանզի քիչ ժամանակից յետոյ Յագկերտ մեռաւ և Շապուհն շտապեց Պարսկաստան երթալ՝ հօր աթոռը ժառանգելու, բայց սա էլ սպանուեցաւ և հօր տեղը յաջորդեց Վռամ Ե. ր : Այդ ժամանակ Հայոց նախարարները հանգամանքից օգուտ քաղելով, միանգամայն հալածում են Պարսից :

ԱՐՏԱՆԵՍ Գ. 427—433 ԹԻՒՆ Գ. 8.

Յագկերտի յաջորդ Վռամ Ե. բաւական մեր ազգին նեղացնելուց յետոյ, հասկացաւ թէ առանց նախարարների կամքին՝ չէ կարող ոչինչ օգտուիլ, ուստի հաշտուեցաւ նոցա հետ և Վռամշապուհի տասնութն տարեկան որդի Արտաշէս Գ.ին Հայոց թագաւոր կարգեց : Սա էլ դժբախտաբար իւր անկարգ ու մոլի վարքովը զայրացրեց նախարարներին, որոնք ժողովելով Ս. Սահակ Հայրապետի մօտ, խնդրեցին նորանից որ իւրեանց հետ միաբանուի՝ Արտաշէսի դէմ ամբաստանութիւն անելու Վռամի մօտ, և մի Պարսիկ իշխան խնդրելու Հայոց թագաւոր : Բայց Ս. Սահակը պատաս-

խանում է. «Խնչպէս է կարելի իմ մոլորեալ ու հիւանդ ոչնարին փոխանակեմ առողջ գազանի հետ, որ իւր առողջութեամբը միայն պատուհաս է. թողէք մի առժամանակ, ես կջանամ ախտաւորին խրատելով յետ դարձնել իւր թիւր ճանապարհից» : Ս. Սահակի բոլոր յորդորներն ի գուր անցան, նա անկարող եղաւ նախարարների ազգակործան դիտաւորութիւնը փոխել : Նորանք խորհուրդ արին որ Արշակունեաց թագաւորութեան հետ՝ վերջացնեն նաև Լուսաւորչի տան հայրապետութեան իրաւունքը : Եւ յիրաւի որ Վռամի մօտ գընալով՝ չարախօսեցին Արտաշէսից և խնդրեցին որ նորա տեղը մի Պարսիկ մարզպան նշանակէ Հայաստանի մէջ և Ս. Սահակին ևս փոխէ : Վռամն էլ նորանց լսելով իւր մօտ կոչեց մեր թագաւորին ու Հայրապետին, և որովհետև նախարարների ցանկութեանը Վռամ վաղուց էր փափագում, ուստի Արտաշէսին աքսորեց, իսկ Ս. Սահակին բանտարկեց : Այսպիսով Արշակունեաց թագաւորութիւնը և Լուսաւորչի տան եպիսկոպոսապետութիւնը մեր անմիտ նախարարների ջանքերովը վերջացան : Այնուհետև Հայաստանը Պարսից մարզպանութիւն դարձաւ և եպիսկոպոսապետութեան իրաւունքը հասաւ Սուրմակ անունով Սսորի եպիսկոպոսին : ✕

ՄԱՐԶՊԱՆՆԵՐԸ

433—856 ԹԻԻԸ Ք. Յ.

Արշակունեաց թագաւորութեան վերջանալուց յետոյ՝ Հայաստանը միանգամայն Պարսից իշխանութեան ձեռքը անցաւ և կառավարվում էր նորանցից ուղարկուած իշխաններով, որոնք Մարգարէն էին կոչվում: Սորանց առաջինը եղաւ Վեհմիհրշապուհն, որ խաղաղասէր մէկը լինելով՝ նորա ժամանակ Հայաստանն փոքր ինչ շունչ առաւ:

Վեհմիհրշապուհի տեղը մարզպան կարգուեցաւ Սիւնեաց Վասակ անունով փառասէր և ազգատեաց Հայ իշխանը, որին Յազկերտ խոստացած էր Հայաստանի վերայ թագաւոր կարգել, եթէ կարողանար Հայերին արևապաշտ դարձնել: Սորա խորհրդովը Յազկերտ հրամայեց որ Հայերն իրան զօրք տան, նպատակ ունենալով որ Հայաստանից գինւորական ուժերը հեռացնելով, ազգը անզօրացնէ և հեշտու-

թեամբ ձգէ նորան իւր լարած թակարդի մէջ: Հայերն էլ Յազկերտին անհաւատարիմ չերևալու պատճառով, շատ նախարարների և քահանաների հետ միասին՝ մի գունդ զօրք ուղարկեցին նորան: Յազկերտ նորանց իսկոյն տարաւ Հոնաց դէմ պատերազմելու: Պատերազմից յետոյ սկսաւ ստիպել նախարարներին արևապաշտ լինելու: Նախարարները բացարձակ մերժեցին Յազկերտի անիրաւ հրամանը և նորանցից մի քանիսը՝ մտածելով ծածուկ Հայաստան դառնալ, ճանապարհին իւրեանց զօրքերովը նահատակուեցան. դորանց մէջ նշանաւորներն էին Գարեգին, Ատովմ Գնունին և Մանաճիհր Ռշտունին 16): Մնացած նախարարներին բանտարկեց և սկսաւ երբեմն քաղցրութեամբ, երբեմն սպառնալիքով և երբեմն ևս տանջանքներով ստիպել՝ թողնել իրանց Քրիստոնէութիւնը, բայց անհնար եղաւ:

Այնուհետեւ Յազկերտ Գենշապուհ անունով մի պարսիկ իշխան ևս ուղարկեց Հայաստան, հրամայելով որ ջանայ զանազան հնարքներով Հայերին արևապաշտ դարձնել, բայց սորա բոլոր ջանքերն ևս ապարգիւն եղան: Բայց մարզպանից, Յազկերտ մի թուղթ ևս

16) Այս նահատակութիւնը Ատովմ իշխանի անունովը կոչվում է Ատովմեանց:

գրեց Հայերին, հրամայելով որ կամ թղթի պատասխանը տան և կամ կրակապաշտութիւնը ընդունեն: Յովսէփ Կաթուղիկոսն Արտաշատ քաղաքում հոգևորականներից և իշխաններից ժողով գումարելով, մի ազգու պատասխան գրեց թղթին: Յագկերտ թուղթը կարգաւուց լետոյ, շատ բարկացաւ և հրաման գրեց որ բոլոր Հայ նախարարները Պարսկաստան գան: Յովսէփ Կաթուղիկոսը նախարարներից Խաչով ու Աւետարանով խոստումն առնելով, որ հաստատ մնան իրանց հաւատքի մէջ, օրհնեց և ճանապարհ ձգեց նորանց դէպի Պարսկաստան. սորանց մէջ էին գտնվում Վասակ մարզպանն և Վարդան Մամիկոնեան սպարապետը:

Նախարարները Պարսկաստան հասնելուն պէս, Յագկերտ խկոյն բոլորին բանտարկեց՝ և հրամայեց որ կամ արեգակին երկրպագութիւն տան և իրանց պատուով վերադառնան Հայաստան, և կամ հեռու տեղ աքսորուեն: Յագկերտի ներքինիներից մէկը՝ որ ծածուկ Քրիստոնէայ էր՝ խորհուրդ տուաւ նախարարներին որ առ երես ընդունին արեապաշտութիւնը և ազատուելով թագաւորի բարկութիւնից դառնան Հայաստան, և միացեալ ուժով պահպանեն իրանց երկիրը և Քրիստոնէութիւնը կորուստից: Հայրենիքի և կրօնի

փրկութիւնն աչքի առաջ ունենալով, նախարարներն ընդունեցին ներքինու խորհուրդը և յանձն առին առ երես արեգակին երկրպագութիւն տալ, որից լետոյ բազմաթիւ մոզերով և զօրքով Հայաստան դարձան:

Այս համբաւը Հայաստան հասնելուն պէս՝ բոլորեքեան արգար բարկութեամբ վառուած. Ս. Աւոնդ Երէցի, Յովսէփ Կաթուղիկոսի և եպիսկոպոսների հետ միացած՝ դիմեցին Հայաստան հասած մոզերի և մոզպետների վերայ, նորանց մի մասին ջարդելով՝ մնացածներին սարսափահար փախցրին իրանց բնակարանները: Յետոյ դիմեցին սպարապետի տունը, որտեղ ժողովուած էին վերադարձած նախարարները, և բացատրութիւն պահանջեցին նորանց ուրացութեան մասին: Այնտեղ Վարդան սպարապետն և նորա ընկերները ոտքի կանգնելով՝ երգուեցին որ իրանց ուրացութիւնը առ երես էր եղած, և թողութիւն խնդրելով իրանց այդ ահամայ ուրացութեան համար՝ կրկին երգումով պատրաստականութիւն յայտնեցին՝ անկեղծ կերպով գործել Հայրենիքի փրկութեան համար: Բայց Վասակ մարզպանը, որ սրտանց էր ուրացել Քրիստոնէութիւնը՝ չուզեց որ մոզերը Հայաստանից հեռանան. ուստի խաբէութեամբ համոզեց քահանաներին,

1522

որ դադարեն մոգերին հալածելուց, որպէս զի Յազկերտի մօտ յանցաւոր չերևան, իսկ յետոյ փոքր փոքր դուրս կքշեն նորանց: Այսպէս Վասակը մոգերին պաշտպանելով և միևնոյն ժամանակ իւր երկրից բերած զօրքով նորանց հետ միանալով, կամաց կամաց սկսաւ ջանալ կրակապաշտութիւնը մտցնել Հայաստանի մէջ: Հայերը զգալով իրանց խաբուելը, յարձակուեցան նորանց վերայ, կոտորելով ցրուեցին զօրքերին և Վասակին ևս բռնելով ուղեցին չարաչար կերպով սատկեցնել, բայց նորա սաստիկ աղաչանքին և Խաչ ու Աւետարանի վերայ երգուելուն հաւատալով՝ կրկին բաց թողին նորան:

Նոյն միջոցին Յազկերտ կամենալով որ Աղուանից ազգին ևս արեւապաշտ դարձնէ, շատ մոգեր էլ այնտեղ ուղարկեց: Աղուանները չըկարողանալով Պարսից զօրութեանը դէմ կենալ, Հայերից օգնութիւն խնդրեցին: Հայերը դիմեցին Յունաց օգնութեան, բայց Թէոդոս կայսեր յաջորդ Մարիանոսը ծածուկ դաշն կապելով Յազկերտի հետ՝ չկամեցաւ Հայերին օգնել: Ուստի օտարներից յոյսերը կըտրուած՝ Հայերը հարիւր հազարի չափ Շահապիվան քաղաքը ժողովուեցին, և երեք գունգ բաժանելով նորանց, առաջին գունգը յանձնեցին

Ներշապուհ Արծրունուն, Պարսից դէմ կենալու համար, երկրորդ գունգը Վարդանին յանձնելով՝ ուղարկեցին Աղուանից օգնութիւն, և երրորդ գունգը յանձնեցին Վասակին, Հայաստանը պահպանելու համար:

Վարդան Աղուանից օգնութիւն գնալով, Պարսից զօրքին հալածեց այնտեղից, մոգերին ջարդեց, կրակատունները կործանեց և Քրիստոնէութիւնը ազատեց հալածանքից: Այդ միևնոյն միջոցին Վասակն էլ Արշակունեաց երևակայական թագի փալովը շլացած՝ իւր ազգակործան նենգութիւններովն էր զբաղուած. երկրի մէջ եկեղեցիները քանդում էր ու նորանց տեղ կրակատուններ էր կանգնեցնում, բռնի ստիպում էր թողնել Քրիստոնէութիւնը և կրակին երկիրպագել: Վարդան այս բոլորը լսելով՝ շտապմամբ վերադարձաւ Հայաստան և Վասակին ու նորա ընկեր ուրացողների զօրութիւնը ջարդ ու փշուր անելով՝ Վասակին էլ ստիպեց զիջելով իւր երկիրը փախչել:

Յազկերտ տեսնելով գործերի անյաջող ելքը, մի ուրիշ խորամանկութիւն ևս գործ դրեց — կրօնի կատարեալ ազատութիւն հրատարակեց, որպէս զի զբաւէ Հայոց սրտերը և քաղցրութեամբ իւր մտադրածը գլուխ բերէ: Ինքը ծածուկ պատերազմի պատրաստուեցաւ

և յաջողուեցաւ Հայերին օգնութիւն տալուց հեռացնել բոլոր այն անձինքներին, որոնք մտադիր էին մեր Եկեղեցին պաշտպանելու: Սորանից յետոյ Միհրնբերսէհ անունով Պարսիկ հազարապետին շատ զօրքով ուղարկեց Հայաստան: Սա եկաւ և իւր գունդը ուրիշ լեռնական ազգերի զօրքերով ստուարացնելով՝ Մուշկան Նիսալաւուրտին յանձնեց վերջացնել վճռականապէս պատերազմը, պատուիրելով նորան ամեն բանում հետևել Վասակի խորհրդին: Հայերը որ երբէք չէին խաբուել թագաւորի պարգևած կրօնի ազատութիւնից, տեսնելով այս բոլոր նենգաւոր միջոցները, ու Վասակի չարութիւնները, իրանք էլ սկսած էին արդէն կրօնական մեծ պատերազմի պատրաստութիւնը տեսնել: Ամեն տեղից իրանց յոյսը կտրելով, դիմեցին միայն իրանց բազուկի օգնութեանը, ուստի Վարդանի հրամանովը վաթսուն հազար հոգի ժողովելով Արտաշատ քաղաքը, ուխտեցին որ իրանց անձը կզոհեն Եկեղեցու և Հայրենիքի փրկութեան: Հայոց բոլոր զօրքը հաւաքուեցաւ Աւարայրի դաշտը և պատրաստուեցաւ պատերազմի: Նորանց մէջ էր և Յովսէփ Կաթուղիկոսն, Ղևոնդ Երէցն և բազմաթիւ եկեղեցականներ:

Ղևոնդ Երէցը և Յովսէփ Կաթուղիկոսն

իւրեանց ներկայութեամբ և կրակոտ խօսքերովը քաջալերում ու խրախուսում էին հաւատքի համար զէնքեր առածներին. ամբողջ գիշերը բոլորին հաղորդում են Փրկչի փրկարար սուրբ Մարմնովն ու Արեամբը, պատրաստելով նորանց ահաւոր պատերազմի համար:

Հէնց այս ժամանակում Յունաց կայսրը փոխանակ արևելեան Քրիստոնէութեանը օգնութեան ձեռք կարկառելու ու պաշտպանելու, Քաղկեդոն քաղաքումն ժողով գումարելով՝ Քրիստոսի Աստուածային բնութեան վերայ քննութիւններ էր անում: Այս ժողովին հրաւիրուած էին նաև Հայերը, բայց սորանք նախապատիւ համարեցին Քրիստոսի սուրբ կրօնը ազատելու համար տրիւն թափել, քան թէ Եւտիքէսի աղանդը հերքելու պատճառով՝ Քաղկեդոն երթալ:

Սոյն պատերազմի ժամանակ՝ Հայոց Եկեղեցու արժանաւոր գաւակ Վարդանն՝ շատ քաջութիւններ անելուց յետոյ, ընկաւ իւրայիններով: Թէև յաղթութիւնը անորոշ մնաց, սակայն պատերազմը բաւական թանգ նստեց Պարսիկներին, քանզի պատերազմի զաշտումը նորանցից ընկան երեք հազար հինգ հարիւր և քառասուն չորս հոգի, մինչդեռ Հայերից

ընկած էին հազար երեսուն և վեց հոգի 17):

Վարդանանց նահատակութիւնից յետոյ՝ Պարսիկները Վասակի առաջնորդութեամբ ըսկսան արձակ համարձակ ասպատակել Հայաստանը. նորանք խաբէութեամբ բռնուծ էին Հայ նախարարներին և նահատակուծ: Բռնեցին նաև Սուրբ Յովսէփին մի քանի ուրիշ քահանաների հետ և բանտարկեցին. յետոյ Պարսից զօրքի զնդերը յարձակուելով Հայաստանի զանազան կողմերը, աւեր և արիւնհեղութիւն տարածեցին ամեն տեղ: Հայերն էլ ամրացած անաւիկ ամրոցների մէջ յարձակվուծ էին թըշնամիների վերայ և անխնայ կոտորուծ: Յազկերտ այս յուսահատ դիմադրութիւնը տեսնելով՝ ըսթափեցաւ, իմացաւ որ այնքան էլ հեշտ բան չէր մի ամբողջ ազգի խղճմտանքի դէմ մաքաւել, այն էլ Հայ ազգի, որ միշտ ունեցել է հաստատահիմն կրօն, թէ հեթանոս և թէ Քրիստոնեայ ժամանակը. Յազկերտ բոլոր իւր խորամանկութեամբը՝ դեռևս անձանօթ էր Հայի այս յատկութեանն, չգիտէր որ անկարելի էր նորան անջատել իւր դարաւոր սիրած ու փայ-

17) Այս պատերազմը տեղի ունեցաւ 451 թուականի Հոգեգալստեան եօթներորդ օրը, որ էր Մարտի ից:

փայած սուրբ կրօնից, չգիտէր որ Հայն հէնց Հայկի ժամանակից սկսեալ՝ սովոր էր հաւատի համար արիւն թափել և աշխարհային փառքերից չխաբուելով նորան պաշտպանել: Ուստի իւր անցեալ արածների վերայ փոշմանելով, Մուշկանին հրամայեց պատերազմական գործողութիւնները վերջացնել Հայաստանուծ:

Յազկերտ Վասակի տեղը մարգպան կարգեց Ատորմզդին և պատուէր տուեց նորան, որ որչափ կարելի է ժողովրդի հետ խաղաղ վարուել, և կրօնի ազատութիւն շնորհեց: Այսպիսով Հայաստանը խաղաղեց, բայց ափսոս որ իւր արժանաւոր հոգևոր հովիւներից զըրկուեցաւ, քանզի Ատորմիզդը Յազկերտի հրամանով նենգութեամբ ձերբակալեց երևելի եկեղեցականներին, որպէս Սուրբ Ղևոնդին և Սուրբ Յովսէփին և ուղարկեց Պարսկաստան. նոքա տեղ հասնելուն պէս իսկոյն բանտարկուեցան: Վասակն էլ շտապեց զնալ Յազկերտի մօտ իւր աշխատանքների համար խոստացած վարձը ստանալու: Բայց այնտեղ քննութեան ենթարկուելով՝ Հայաստանի աւերման,

արքունի զօրքերի կոտորուելուն և տէրութեան գանձերը կողոպտելու մէջ յանցաւոր ճանաչուեցաւ. իւր բոլոր պատիւներից և աստիճաններից զրկուեցաւ և բանտ դրուեցաւ, որտեղ յետին խեղճութեամբ և չարաչար մահով սատակեցաւ : Այսպիսով Հայաստանի վերայ անօրէնութեամբ թագաւորել ցանկացողը՝ մի գերեզմանի տեղ անգամ չունեցաւ նորանում :

Այդ ժամանակ Պարսիկները ամեն կողմանէ ձախող հանգամանքների մէջ էին գտնվում : Մոգերը ասացին Յազկերտին, «Այս թշուառութիւնների պատճառն այն է՝ որ մեր աստուածների սպանողներին դեռևս անպատիժ ես թողել, նորանք էլ բարկացել են քո վերայ» : Յազկերտն էլ նորանց խօսքին հաւատալով՝ բոլոր բանտարկուած եկեղեցականներին նահատակել տուեց, որոնք Ղևոնդ Երէցի անունովը Ղևոնդեանս կոչուեցան : Իսկ մթին բանտերում չորս տարի ճգնող նախարարները ևս՝ Եղովջապուհ անունով մի պարսիկ իշխանի միջնորդութեամբ ազատուեցան և պէտք էր Հայրենիք վերագառնային, բայց մի գէպք արգելք եղաւ դորան—Յազկերտի մահը վերայ հասաւ և նորան յաջորդեց իւր որդի Պերոզը : Սա իւր թագաւորութեան ութերորդ տարումը

նախարարներին վերագարձրեց մեր որբացած Հայրենիքը—Հայաստան :

Պերոզ Ատրորմզդի տեղը մարզպան կարգեց Ատրվշնասպին, որը թէև Հայերին կրօնի ազատութիւն տալով՝ Հայաստանը փոքր ինչ շունչ քաշեց, բայց քանի որ ուրացեալներին առատ ռոճիկներ էր նշանակում, միւս նախարարներն էլ կամաց կամաց թուլանում էին իւրեանց հաւատքիցն, և քիչ էր մնում որ Հայերի կրօնական ջերմեռանդութիւնը կորչէր : Գիւտ կաթուղիկոսը սկսեց յանդիմանել այս անկարգութիւնները, բայց անօգնւտ, քանզի Պերոզը ուրացեալների խորհրդով նորան Պարսկաստան կոչեց և քահանայապետութեան պաշտօնից զրկեց :

Այս ժամանակները Սուրբ Վարդանի Հմայեակ եղբօր մեծ որդի Վահանը, իւր քաջութեամբը ու խոհեմութեամբը մեծ անուն էր ստացել, սակայն ուրացեալներից մի քանիսն նորան զրպարտում են Պերոզի առաջ, հաւատարմութեան մէջ կասկածելի ցոյց տալով : Վահան լսելով այս բանը՝ սաստիկ բարկանում է և Պերոզի մօտ գնալով ուրանում է հաւա-

տը առ ժամանակ՝ և նորանից պատիւներ գրտնելով վերադառնում է Հայաստան: Հայրենիք վերադառնալով՝ միշտ հոգով խղճահարվում էր իւր արածի վերայ և հայրենասիրական փաստերով ջանք էր անում իւր արատը սրբել:

Հէնց այս միջոցում Պերոզն պատերազմ է բաց անում Հեփթաղաց ազգի դէմ: Ատրվշնասպըն էլ Հայոց զօրքերի հետ Աղուանից կողմն էր պահպանում: Պարսիկները յաղթվում են և Հայոց զօրքը Հայաստան վերադառնալով՝ բանակ է ձգում Շիրակ գաւառումը: Այստեղ Հայոց բարեմիտ և ուխտասլահ նախարարները միասին խորհուրդ անելով՝ որոշում են որ այդ յարմար առիթը ձեռքից չտան. ուստի Վահանի հետ միացած յարձակվում են Պարսից բանակի վերայ և մեծ ջարդ են տալիս նորանց: Ատրվշնասպը և նորա հետ ուրացեալները հազիւ հազ կարողանում են փախչել Ատրպատական: Իսկ Վահանեանք գալով Գուլին՝ իրանց համար նոր մարզպան են ընտրում Սահակ Բագրատունուն և պատերազմի են պատրաստվում:

Ատրվշնասպ ուրացեալների խորհրդով կրկին յարձակուեցաւ Հայաստանի վերայ, բայց Ակոռի գիւղի մօտ չարաչար յաղթուելով ըսպանուեցաւ:

Պերոզ լսելով Վահանի ապստամբութիւնը, Ատրնեսէհ իշխանին մեծ զօրքով ուղարկեց Հայաստանի վերայ, պատուիրելով Վահանին կենդանի բռնել: Վահան դիմեց Վրաց Վախթանկ թագաւորի օգնութեանը, որից մերժուելով՝ դիմեց Հայ նախարարներին, բայց դժբաղդաբար սորանք էլ չօգնեցին:

Վահան վտանգը աչքի առաջ ունենալով, իւր յոյսը գրեց միմիայն Աստուծոյ և այն ժամանակուայ հայրապետ՝ Սուրբ Յովհան Մանդակունու աղօթքի վերայ, և իւր սակաւաթիւ զօրքովը յարձակուեցաւ թշնամու վերայ, Արտագու Ներսէհապատ գիւղի մօտ: Հայոց զօրքը առաջ Պարսից բազմութիւնից շփոթուելով՝ սկսաւ փախչել: Վահան երեսին խաչ հանելով՝ ընկաւ բազմաթիւ թշնամիների վերայ. փախստականները սորա արածից սիրտ առնելով, վերադարձան ու միացան նորա հետ, որով կարողացան Պարսիկներին միանգամայն հալածել Հայաստանի սահմաններից և ուրախութեամբ վերադառնալ Ծաղկոտն գաւառը:

Հէնց այս միջոցին՝ Վրաստանն էլ մեծ նեղութեան մէջ էր ընկել, և Պարսից կողմից Միհրանն մեծ բազմութեամբ արշաւել էր այնտեղ: Վախթանկը անձաբացած Հայերից

օգնութիւն խնդրեց: Հայերն էլ իրանց խոստման համաձայն՝ նորան օգնութեան դնացին: Վահանի զօրքը Պարսից զօրքի հետ համեմատելով՝ շատ քիչ էր, բայց Վախթանկը խաբումէր նորանց ասելով թէ, «Հոնաց ազգն էլ շուտով կհասնի օգնութեան»: Սակայն ոչ ոք չերևաց, Հայերից էլ մի քանիսը անցկացան թշնամու կողմը, Սահակ Բագրատունի մարզպանը սպանուեցաւ և Վախթանկը իւրայիններով փախաւ պատերազմի դաշտից: Վահան իւր սակաւութիւնը և Հայաստանի ապագայ վիճակը աչքի առաջ ունենալով, սկսեց ինքըն էլ փախչել դէպի Հայաստան: Միհրան նորա ետևիցն ընկաւ, բայց չյաջողուեցաւ նորան յաղթել, ուստի հաշտութիւն առաջարկեց, Վահան պատասխանեց «Եթէ որ Հայերին անգործ կթողնէք Քրիստոնէութեան մէջ կը հպատակենք ձեզ, իսկ եթէ ոչ, մեզ համար աւելի նախապատիւ է փառաւոր մահով մեռնել Քրիստոնէութեան մէջ, քան թէ ուրացութեամբ փառքի տիրանալ»: Մինչդեռ երկու կողմից պատգամաւորութիւններ էին լինում, Միհրանը յետ կոչուեցաւ և նորա

տեղն եկաւ Զարմիհր Հագարաւուխտը և յետոյ Շապուհ Միհրանեանը: Սորանք էլ շատ ջանքեր գործ դրին Վահանին բռնելու, բայց իզո՛ւր, քանզի Աստուած յայտնի կերպով ամեն քայլափոխում օգնում էր նորան:

Այնուհետև Պերոզը մեռաւ և նորան յաջորդեց նորա եղբայր Վաղարշը: Սա Զարմիհր Հագարաւուխտից և Շապուհ Միհրանեանից տեղեկանալով Վահանի քաջութեանն, և միևնոյն ժամանակ իրաւացի դատելով նորա ապստամբութիւնը, Նեխոր անունով խաղաղասէր իշխանին ուղարկեց Հայաստան, որի միջոցով հաշտութիւն առաջարկեց: Նեխոր յայտնեց Վահանին թագաւորի առաջարկութիւնը. Վահանն էլ իւր կողմից երեք պայմաններ առաջարկեց — Սուաջինն՝ հաւատի կատարեալ ազատութիւն, այնպէս որ Հայոց աշխարհումը կրակապատութեան նշույն անգամ չլինի: Երկրորդ՝ եթէ հարկաւորուին անձինք պաշտօնների համար, պէտք է արժանաւորներն ընտրուին, ոչ թէ անարժան ուրացեալները: Երրորդ՝ մինչև թագաւորն երկու կողմի գան-

գատողներին էլ չլսէ, չպիտի վճիռ տայ : Նեխոր իւր կողմից ընդունեց սոյն պայմանները, և յետոյ միևնոյն պայմանները Վահանի հետ միասին ներկայացրեց Վաղարշին : Թագաւորը սիրով ընդունեց թէ Վահանին և թէ նորա պայմանները : Սորանից յետոյ Վահանին Հայոց ընդհանուր սպարապետ կարգելով, մեծ պատուով Հայաստան վերադարձրեց : Սորա հետ Անդեկան անունով մէկին էլ մարզպան կարգեց, որի ժամանակ Հայաստանն անդորր խաղաղութիւն վայելեց : Փոքր ինչ յետոյ, նոյն իսկ Անդեկանի խորհրդով՝ Վաղարշ Վահանին բոլոր Հայաստանի վերայ մարզպան կարգեց, իսկ նորա Վարդ եղբօրը՝ սպարապետ :

Վաղարշին յաջորդեց Կաւատը : Սա մոզերի խորհրդով կրկին սկսեց Քրիստոնէականներին հալածել : 493 թուին մի խումբ մոզեր ուղարկեց Հայաստան, որոնք սկսան դարձեալ Վարդանի ժամանակուայ գործողութիւնները : Վահան Եկեղեցու պաշտպանութեան կրակովը վառուած, դուրս եկաւ նորանց առաջ, բոլորին սպանեց և կործանեց նորանց ձեռքով շինած կրակատները :

Կաւատը ակամայ հաշտութիւն խօսեց Հայերի հետ և նորանց օգնականութեամբ շատ պատերազմներ մղեց Յունաց ազգի դէմ :

Վահանը մեռաւ 510 թուին : Նորա տեղը մարզպան կարգուեցաւ նորա եղբայր Վարդը : Քիչ ժամանակից յետոյ՝ մարզպան եղաւ Բուրղան անունով անպիտան Պարսիկը, և յետոյ Մժէժ Գնունի քաջ Հայ իշխանը, որ շատ քաջութիւններ արաւ Հոնաց ազգի դէմ :

Երբոր Պարսից և Յունաց ազգերի պատերազմները վերջացան, Պարսից Խոսրով թագաւորը Իենշապուհ անունով մի Պարսիկ մարզպան կարգեց Հայոց վերայ : Սա էլ բաւական նեղացրեց Հայերին հաւատի կողմանէ : Սորա ժամանակ, (551 թուականին) Մովսէս Բ. Եղիվարդեցի Կաթողիկոսը Գուին քաղաքում՝ եպիսկոպոսների և ուսումնականների քննութեամբ, Հայոց Տօթարը նորոգելով՝ նոր թուական հաստատեց : Այնուհետև Պարսիկ մարզպանի և մոզերի հալածանքներից ու տուած նեղութիւններից ձանձ-

րանալով, Խոսրով թագաւորին պատգամաւոր-
ներ ուղարկեց, յայտնելով Հայաստանի թըշ-
ուառ վիճակը և միւսնոյն ժամանակ խնդրե-
լով նորանից մի աւելի բարւոք կարգադրու-
թիւն: Թագաւորը նորա խնդիրքին զիջա-
նելով, Դենշապուհի տեղը Վշնաս Վահրամ
անունով մարզպանին ուղարկեց Հայաստան,
որի ժամանակ հալածանքները դադարեցան:
Սորա տեղը եկաւ Վարազդատը և յետոյ Սու-
րէն ձիհր, որ Վարդան Մամիկոնեան Բ. Ի
Մանուէլ եղբօրը սպանեց: Վարդան Յու-
նաց Յուստինոս կայսեր վերայ վստահացած՝
ապստամբեցաւ Պարսից զէմ և մարզպանին
ու նորա զօրքերին կոտորեց:

Խոսրով լսելով այս համբաւը, քանի ան-
գամ մեծ զօրք ուղարկեց Վարդանի զէմ,
բայց միշտ յաղթուեցաւ, մինչև ի վերջոյ Վար-
դան անօգնական մնալով, թէև շատ քաջու-
թիւններ արաւ, սակայն չկարողացաւ նորանց
միանգամայն յաղթել: ուստի փախաւ Կոս-
տանդնուպօլիս: Այսպիսով Հայաստանը կըր-
կին անգամ Պարսից ձեռքն ընկաւ և ձի-
հըր Վրոն անունով խաղաղասէր Պարսիկը՝
մարզպան կարգուեցաւ:

Հայաստանի վիճակն աւելի ևս պէտք է
վատթարանար, եթէ հանգամանքները չփոխ-
ուէին: — Աթուրից զրկուած Պարսից Խոսրով
թագաւորը՝ Յունաց Մօրիկ կայսեր և Հայ
իշխանների օգնականութեամբ՝ կրկին ան-
գամ հաստատուեց իւր թագաւորութեան
մէջ: Սա իրան երախտագիտութիւնը յայտ-
նելու համար, Սմբատ Բագրատունուն 492
թուին մարզպան կարգեց, որ իւր քաջու-
թիւնների պատճառով Բաղճայազը կոչուեցաւ:
600 թուին նորա տեղը նստաւ Դաւիթ Սա-
հառունին:

Այս միջոցին թշնամութիւն ծագելով
Խոսրովի և Մուշեղ Մամիկոնեան Հայ նախա-
րարի մէջ, Խոսրով Միհրան զօրավարին մեծ
զօրքով ուղարկեց Մուշեղի վերայ: Մու-
շեղ իւր ճերութիւնն աչքի առաջ ունենա-
լով, պատերազմը միանգամայն յանձնեց իւր
ազգայան Վահանին, որ իւր քաջութիւնների
պատճառով Գաշ Վահան կոչուեցաւ: Սա զա-
նազան հնարքներով և խարդախութեամբ
սպանեց Միհրանին և կոտորեց նորա բոլոր
զօրքը: Խոսրովը բարկացած աւելի շատ
զօրքով Վախսանկին ուղարկեց Վահանի զէմ,
բայց դարձեալ չարաչար յաղթուեցաւ:

Դաւիթ Սահառունու տեղն անցաւ Սըմ-

բատ Բազմայաղթի որդի Վարազտիրոցը, որ եօթն տարի իշխելուց յետոյ, իւր ընտանիքովը Կոստանդնուպօլիս փախաւ: Սորանից յետոյ Հայերի խնդրանօքը՝ Դաւիթ Սահառունին Յունաց կայսրից 632 թուին Կիւրապաղաա ուղարկուեցաւ Հայաստան, որին նախարարները պաշտօնից զրկեցին և ինքնանք սկսան միմեանց վերայ յարձակուել, և այսպիսով տեղի տուին թշնամիների նորանոր արշաւանքներին:

Այս միջոցները Հագարացոց ազգը ընդունելով Մահմեդի քարոզած կրօնը և նորանով զօրացած, դուրս եկաւ իւր թերակըզուց և ի թիւս այլ երկիրների՝ արշաւեց նաև Հայաստանի վերայ, և սկսեց անխնայ ամեն տեսակ անգթութիւններ ու անիրաւութիւններ գործել այնտեղ: Այս բարբարոսներին դէմ կացան Թէոդորոս Ռշտունի, Վահան Կամսարական և Սահուռ Անձևացի Հայ իշխանները: Պատերազմի տաք ժամանակը դժբաղդաբար անխիղճ Սահուռ Անձևացին թշնամու կողմն անցաւ: Հայերը յաղթուեցան և թշնամիքը մտան Հայաստանի ներսերը ու մեծ վնասներ հասցրին: Դը-

ուին քաղաքի մէջ միայն տասն և երկու հազար մարդ կոտորեցին և քաղաքը աւերելուց յետոյ՝ զանազան տեղերից երեսուն հինգ հազար հոգի ևս գերի տարան:

Այս ժամանակ, երբոր Յունաց Կոստանդ կայսրը թագաւոր կարգուեցաւ, Ներսէս Գ. Կաթողիկոսի միջնորդելովը՝ Կոստանդնուպօլիս փախած Վարազտիրոց Բազրատունուն Հայոց վերայ կիւրապաղատ կարգեց 642 թրուականին, իսկ նորանից յետոյ՝ նորա որդի Սմբատին: Սորա ժամանակ Հագարացիք դարձեալ արշաւեցին Հայաստանի վերայ և շատ կոտորածներից յետոյ՝ Հայերը հնազանդեցան նորանց:

Յունաց Կոստանդ կայսրն ևս լսելով Հայերի Հագարացոց հնազանդելը, մեծ զօրութեամբ դիմեց Հայաստան և երկրին նուաճելուց յետոյ՝ պահապան զօրքեր ու վերակացուներ կարգեց այնտեղ: Ժամանակ չանցած Հագարացիք իմանալով Հայերի Յունաց իշխանութեան տակ մտնելը, դարձեալ արշաւեցին Հայաստանի վերայ և հազար եօթն հարիւր և եօթանասուն հինգ հոգի պատանդ առնելով դարձան Դամասկոս: Փոքր ժամա-

նակից լետոյ մեռաւ Սմբատ Կիւրապաղա-
ար, և նորա տեղը Համազասպ Մամիկոնեա-
նը պատրիկ կարգուեցաւ Հազարացիներից :

Երկու տարուց լետոյ՝ Հայերը ձանձրա-
նալով Հազարացոց հարստահարութիւնից,
դուրս եկան նորանց հպատակութիւնից և
դիմեցին Յունաց ծառայութեանը : Ամիրա-
պետը լսելով այս համբաւը, բոլոր պատանդ-
ներին կոտորել տուեց և ժամանակ չանցած
դարձեալ գրաւեց Հայաստանը : Քիչ լետոյ
մեռաւ Համազասպը և նորա տեղը Մաւետյ
ամիրապետից պատրիկ կարգուեցաւ՝ նորա
եղբայր Գրիգոր Մամիկոնեանը :

Այնուհետեւ Յոյները և Հազարացիները
իրար ձեռքից մի քանի անգամ Հայաստանը
յափշտակելով՝ չափազանց աւերմունքներ ու
աւարառութիւններ գործեցին այնտեղ : Այս
միջոցումը թէպէտ Աշոտ Բագրատունին զօ-
րանալով բաւական քաջութիւններ արաւ,
սակայն երկար չտևեց, և Հայաստանը վերջ-
նականապէս Հազարացոց իշխանութեան ձեռ-
քին անցաւ, որոնք 693 թուին Աբդլլայ
անուանով մի ոստիկան ուղարկեցին այնտեղ :
Սա Հայաստան գալով Դուին քաղաքը իրան
բնակութիւն ընտրեց, և սկսեց բոլորի հետ
քաղցրութեամբ վարուել : Երբոր բոլորի կաս-

կածը փարատուեցաւ, զանազան հնարքներով
սկսաւ ձերբակալել մնացեալ երևելի նախա-
րարներին և Սահակ կաթողիկոսին, և շրդ-
թայակապ Դամասկոս ուղարկել :

Սմբատ Բագրատունի Բիւրատեանն, որ
գերիների թուիցն էր մի հնարքով փախչելով
եկաւ Հայաստան : Սա Յուստինիանոս կայսեր
օգնականութեամբն ու նախարարների միաբա-
նութեամբը հալածեց Աբդլլային իւրայիննե-
րով և Հայաստանի վերայ կիւրապաղատ կար-
գուեցաւ :

Քիչ ժամանակից լետոյ Արաբացիք յաջող
միջոց գտնելով, Մոհամադ զօրավարին ուղար-
կեցին Հայաստան : Բայց Ներսէս Կամսարա-
կանը և Սմբատ կիւրապաղատը միացած ու-
ժով չարաչար յաղթեցին նորան : Մոհամադը
թէպէտ երկրորդ անգամ աւելի մեծ զօրքով
եկաւ, սակայն գերութիւնից ազատուած՝ Սա-
հակ կաթողիկոսի մահուանից առաջ գրած
աղաչանաց թղթի վերայ զիջանելով՝ հաշ-
տութիւն խօսեց և գերիներին ազատութիւն
շնորհեց :

Հէնց որ Աբգղլան ամիրապետ դառաւ Կաշմ ոստիկանին ուղարկեց Հայերից Չարդանակերտի վրէժն առնելու : Սա էլ մի հրնարքով Հայոց բոլոր նախարարների և մեծամեծների բազմութիւնը ժողովելով Նախիջևանի եկեղեցին՝ այրել տուեց նորանց :

Կաշմի տեղը ուղարկուեցաւ Վիլթ ոստիկանը, յետոյ Մահմեդը, Աբգղազիզը և Մրուանը, որ Աշոտ Բագրատունուն իւր տեղը կարգելով գնաց Գամասիոս ամիրապետ դառաւ :

Մրուանի յաջորդ Ալմանսուրը՝ Աշոտի փոխանակ Եզիզին ոստիկան ուղարկեց, որ բաւականին նեղութիւններ պատճառեց Հայերին : Սորա տեղը նստաւ Սահակ Բագրատունին, որի իշխանութեան վեցերորդ տարումը Սուլէյմանն ուղարկուեցաւ, յետոյ Պէքիր, Հասան և Եզիտ Բ. անողորմ ոստիկանները, որոնց ժամանակ Հայաստանը ծալրայեղ թշուառութեան հասաւ : Բայց Եզիտ Բ.-ի յաջորդ՝ Խուզիմա և Հոլ ոստիկանների ժամանակ Հայաստանը խաղաղութիւն վայելեց :

835 թուին Մուտասին ամիրապետը Հոլին յետ է կոչում և նորա տերը նախարար-

ների խնդրանօքը Բագրատ Բագրատունուն է կարգում : Ամիրապետն սորան յանցաւոր ճանաչելով, Ապուսէթ ոստիկանը ուղարկուեցաւ նորա դէմ, որ խարդախութեամբ բռնեց Բագրատին : Սասունցիք բարկացած յարձակուեցան Ապուսէթի վերայ, սպանեցին նորան և Բագրատին ազատեցին :

Ամիրապետը բարկացած Բուղա ոստիկանին ուղարկեց Ապուսէթի մահուան վրէժը Հայերից հանելու : Բուղան մեծ զօրութեամբ Հայաստան մտնելով, ձեռքից եկած չարիքը չինայեց այնտեղ, այնպէս որ բոլոր Հայաստանը արիւնով լուաց, և բոլոր նախարարներին ու մեծամեծներին խարդախութեամբ բռնելով՝ շղթայակապ Բաղադ տարաւ, որտեղ Ամիրապետը բոլորին էլ բանտարկեց և հրամայեց իրենց հաւատն ուրանան : Շատերը առ երեսուրացան և շատերը նահատակուեցան :

Սմբատ սպարապետն որ Բուղային հաճոյ երևալու պատճառով նորան Հայաստանում տեղ տեղ առաջնորդել էր, զղջացաւ իւր արածի վերայ և սկսեց բանտի մէջ դառն ապաշխարութեամբ քաւել իւր մեղքը, և աղօթելու ժա-

մանակը հոգին աւանդեց 856 թուին և այս պատճառով Խոստովանող կոչուեցաւ :



ԲԱԳՐԱՏՈՒՆԵԱՅ ՀԱՐՍՏՈՒԹԻՒՆ

ՇՐՋԱՆ ԵՐՐՈՐԿ

ԱՇՈՏ Ա. 856—889 թիի Գ. Յ.

Մեր ազգի անիշխանութեան չորրորդ դարը լրանալով, Աստուած բաւական համարեց մեր Հայրենիքի թշուառութիւնը և բարեհաճեց իւր անհուն ողորմութեամբը՝ վարձատրել նորա համբերութիւնը ու կրօնասիրութիւնը : Հայոց ազգն էլ մարգպանների ժամանակուայ նեղութիւնները կրելուց յետոյ՝ նոր էր հասկացել հարազատ թաղաւոր ունենալու օգուտը, և փափագանօք ակնկալում էր այդպիսի մէկին :

Բազրատունեաց ցեղից մէկը՝ ԱՇՈՏ անունով, որ Սմբատ Խոստովանողի որդին էր, անողորմ Բուղալից յետոյ՝ սկսաւ ազգին խնամք տանել և մեծ քաջութիւններ ցոյց տալով՝ արժանացաւ զէպի իրան գրաւել բոլորի ուշադրութիւնը : Այս ժամանակները գերի նախա-

բարձրերից շատերը Հայրենիք վերադառնալով, դարձեալ ընդունել էին Քրիստոնէութիւնը : Սորանք բոլոր ազգի և Գէորգ Բ. կաթողիկոսի հետ միացած՝ խնդրեցին Սմիրապետից Աշոտին իրանց վերայ թագաւոր դնելու : Սմիրապետը կատարեց նորանց խնդիրքը և 885 թուին Աշոտը Բագրատունեաց առաջին թագաւոր պսակուեցաւ :

Սա բոլոր իրան թագաւորութեան ժամանակը մեծ ջանք դորձ դրեց քարուքանդ եղած Հայաստանը բարենորոգելու և ապահովացնելու : 888 թուին այցելութիւն գնաց Յունաց Լևոն կայսերը, որի Վասիլ հայրը մէկ թագ էր պարզւել իրան : Վերադառնալիս՝ Երակ գաւառի Գառսպուր կոչուած տեղումը հիւանդանալով մեռաւ և փառաւոր հանգիստով թաղուեցաւ :

ՍՄԲԱՍ Ա. 889—914 ԹԻԻԸ

Աշոտ Ա.-ին յաջորդեց նորա որդի Սմբատ Ա.-ը : Սորա Աբաս հորեղբայրը շատ ջանացաւ ինքը թագաւորելու, բայց չյաջողեցաւ : Սմբատ իրան հօր նման քաղցրաբարոյ մէկը լինելով, Հագարացոց ամիրապետից և Յունաց Լևոն կայսերից մեծ պարգևներ ստացաւ :

Շատ քաջութիւններ արաւ թէ օտարազգի թշնամիների և թէ համազգի ապստամբ նախարարների ու իշխանների դէմ, և իրան աշալըջութեամբը բոլոր նորանց լարած որդայլմներից ազատուեցաւ : Բայց ի վերջոյ թշնամութիւն ծագելով Սմբատի և նորա քեռորդի Գագիկ Արծրունի իշխանի մէջ. Գագիկը միաբանուեցաւ Հագարացոց Յուսուփ ոստիկանի հետ և միասին դիմեցին Սմբատի վերայ. Հայոց նախարարներից շատերն էլ նորանց կողմն անցան, և Սմբատ ամեն կողմանէ անօգնական մնալով՝ շատ արիւնահեղութիւններից յետոյ Կասրյա բերդը քաշուեցաւ, որտեղ չկամենալով ի զուր տեղը Հայազգի զօրքի ջարդուելուն, 913 թուին անձնատուր եղաւ : Յուսուփը սկզբում երգուեցաւ որ նորա անձին վնաս չհասցնէ, սակայն երգմանը դրժելով՝ հետեւեալ տարին Գողթն գաւառի Երնջակ ամրոցի հանդէպ՝ անտանելի տանջանքների ենթարկեց Սմբատին, նպատակ ունենալով ուրանալ տալ նորա հաւատքը, բայց հաստատամիտ թագաւորը՝ բոլոր չարչարանքներին վեհանձնութեամբ տանելով, սրբութեամբ նահատակուեցաւ : Այնուհետև Յուսուփ Հայաստանի մէջ պահապաններ կարգելով՝ բազմաթիւ Հայ վերիներով վերադարձաւ Ատրպատական :

ԱՇՈՏ Բ. ԵՐԿՒԹ 915—928 ԹԻԻԸ

Մժբատի ուղորմելի մահը առժամանակ մոռացնել տուեց Հայերի անձնական ատելութիւնները, և բոլորը միաբան նորա թահուան վրէժխընդիր էին դարձել :

Մժբատի անդրանիկ որդի՝ Աշոտը, որ իւր չափազանց քաջութեան մասին Աշոտ Երկուսի էր կոչվում, լսելով իւր հօր մահը և Յուսուփի եղեռնագործութիւնները, բաւականին զօրք ժողովելով չարաչար ջարդեց և Հայաստանից հալածական արաւ այն տեղ գտնուող Յուսուփի թողած պահապանները, և ամեն կողմանէ թշնամեաց սիրտը վախ ձգեց :

Հայոց նախարարները տեսնելով Աշոտի քաջութիւնները և արժանաւորութիւնները, 915 թուին նորան՝ հօր տեղը թագաւոր կարգեցին : Բայց ժամանակ չանցած՝ կրկին երկպառակութիւններ ծագելով թագաւորի և նախարարների մէջ, Յուսուփը զօրացաւ և արշաւելով Հայաստանի վերայ, անտանելի չարքներ հասցրեց այնտեղ :

Յունաց Կոստանդ կայսրը զթալով Հայաստանի թշուառութեանց վերայ, Հայոց թագաւորին և Կաթուղիկոսին իւր մօտ հրաւիրեց, Հայաստանի ցաւերին դարման տանելու մտքով : Աշոտը մի քանի նախարարներով

գնաց Կոստանդնուպօլիս և թագաւորական պատիւներ գտնելուց լետոյ, մեծ զօրքով Հայաստան վերադարձաւ : Այս միջոցին Յուսուփը Հայերի երկպառակութիւնները նորոգելու նրպատակով, Աշոտ Երկաթի հօրեղբօր որդի— Աշոտ սպարապետին Հայոց վերայ թագաւոր նշանակեց, որ Բաշաբար կոչուեցաւ : Այսպիսով բոլոր Հայաստանն երկու կուսակցութեանց բաժանուեցաւ և երկու կողմից էլ սաստիկ կոտորածներ տեղի ունեցան, մինչև Յովհաննէս կաթուղիկոսը մեծ դժուարութեամբ հաշտեցրեց նորանց, այն պայմանով որ Աշոտ Երկաթը Երրակաւանումը թագաւորէ, իսկ Աշոտ սպարապետը Գուխնում :

Աշոտ սպարապետի օրինակին հետեւեցին և մի քանի ուրիշ իշխաններ, բայց բոլորն էլ չարաչար լաղթուեցան : Ի վերջոյ ամեն կողմանէ թշնամիներից պաշարուած լինելով՝ մի հնարքով քաջուեցաւ Սեանայ կղզին : Բէշեր ոստիկանը տեղեկանալով սորա ուր լինելը, զօրք ժողովեց և դիմեց նորա վերայ, բայց Աշոտ եօթանասուն հոգով և տասն նաւակներով միայն՝ չարաչար ջարդեց նորան և ամօթով փախցրեց այն կողմերից :

Այնուհետև Նբօր ոստիկանը վերադառնալով Գուխն, սկսաւ փոքր ինչ մեղմ վարուել

Հայերի հետ : Աշոտ այս անդորրութիւնից օգուտ քաղելով, յազմանակով մտաւ Երևակ քաղաքը և դարձեալ ձեռք առաւ թագաւորութիւնը, բայց ժամանակ չանցած մեռաւ 928 թուին : Սա կոչուեցաւ նաև Կալիստոս, այսինքն թագաւորաց թագաւոր :

ԱՅՈՍ 928—951 ԹԻՒՆ

Աշոտ երկաթը անորդի լինելով, նորան յաջորդեց Աբաս եղբայրը, որ թագաւոր դառնալուն պէս աթոռը Կարս փոխադրեց և ամեն կողմանէ Հայաստանը խաղաղացրեց ու ծաղկեցրեց :

Սորա ժամանակ բազմաթիւ եկեղեցիներ ու վանքեր կառուցուեցան, որոնց միջին երևելին էր Ղարսում Աբաս թագաւորի շինած Կաթողիկէ Մայր եկեղեցին, որ հինգ տարումը կատարուեցաւ : Հէնց որ այս եկեղեցու շինութիւնը վերջացաւ և օծուելու վերայ էր, Ա. փխազաց Բեր թագաւորը բազմաթիւ զօրքով Հայաստան եկաւ և պատգամաւոր ուղարկելով Աբասի մօտ ասաց, « Եկի նորաշէն եկեղեցիդ Վրաց ծխով օծել տալու, քանզի չեմ կամենում որ Հայոց արարողու-

թեամբ օծուի » : Բայց Աբաս նորա վերայ յարձակուելով յազմեց, իրան էլ բռնելով Կարս բերեց, և ցոյց տալով նորան Մայր եկեղեցին ասաց, « Ահա այն եկեղեցին որ կամենում էիր Վրաց ծխով օծել տալ, տես հիմա, քանզի այլ ևս չես կարող նորան տեսնել » : Սորանից լետոյ դուրս տանելով աչքերը հանել սուեց : Իսկ ինքն ապրելով մինչ խորին ծերութիւն, մեռաւ 951 թուին :

ԱՇՈՏ Գ. ՈՂՈՐՄԱՍԾ 951—977 ԹԻՒՆ

Աբասին յաջորդեց նորա անդրանիկ որդի Աշոտ Գ.ը : Սա իւր հօր մահից լետոյ մինչև ինը տարի, 80,000 զինուորներով չափազանց քաջութիւններ արաւ, որից լետոյ բոլոր ազգը միաբանուելով Անանիա Մոկացի կաթողիկոսի հետ, հրաւիրեցին Աղուանից Փիլիպպոս թագաւորին և Յովհաննէս կաթողիկոսին Անի քաղաքը, և մեծ հանդիսով Աշոտին իւրեանց թագաւոր օծեցին 961 թուին :

Սորա ժամանակ Համտուն ոստիկանն Ամիրապետից ապստամբուելով, մեծ զօրութեամբ դիմեց Հայաստանի վերայ, բայց Աշոտը յաղթեց և սպանեց նորան : Ամիրապետը լսե-

լով այս համբաւը, շատ ուրախացաւ և մեծամեծ ստորդիներ շնորհէց նորան :

Չարմանալի էր Աշոտի և նորա Խոսրովանոյշ թագուհու ոգորմածութիւնը — շատ վաճառքեր, եկեղեցիներ, աղքատանոցներ ու հիւանդանոցներ շինելուց արտաքույ, չափազանց սէր և համակրութիւն էր յայտնում Աշոտ զէպի աղքատները ու հիւանդները, ալնպէս որ իւր սեզանի վերայ նստացնում էր կոյրեր, կաղեր, բորոտներ ու ցուազարներ, և ամեն կողմանէ սփոփում էր նորանց. բաժանում էր նորանց նաև իւր ունեցած գանձը : 18)

ՍՄՐԱՍ Բ. 977—990 ԹԻՒՆԸ

Աշոտ Ողորմածի անդրանիկ որդի Սմբատ Բ. ը յաջորդէց իւր հօր տեղը Անի քաղաքում : Սա Հայաստանը մաքրէց թշնամիներէ մնացորդներից և զարգարէց բազմաթիւ եկեղեցիներով : Ծինէց Անի քաղաքի մեծ շրջապարիսպը և խրամը, որ ութն տարուայ ընթացքում վերջացաւ : Հիմնէց նաև Կաթողիկէ Մայր եկեղեցին, Տրդատ ճարտարապետի

18) Ատում են որ սորա մահէց յետոյ գանձանում մի զբամ անգամ չգանուեցաւ :

ձեռքովը : Սորա ժամանակ, ցրուած Հայերը լսելով Հայաստանի խաղաղութիւնը, կրկին վերագարձան իւրեանց հայրենիքը : Անի քաղաքը լցուեցաւ բնակիչներով, որոնց թիւը հարիւր հազարի հասաւ, իսկ եկեղեցիներինը՝ հազար ու մէկի : 19)

Սմբատ թէպէտ ուրիշ շատ քաջութիւններով մեծ անուն վաստակէց, բայց վերջերը եկեղեցական օրէնքի դէմ գործելով ատելի եղաւ ազգին մինչև իւր կեանքի վախճանը :

ԳՍԳԻԿ Ա. 990—1020 ԹԻՒՆԸ

Սմբատի տեղն անցաւ նորա եղբայր Գագիկ Ա. որ իւր նախորդների նման բարեպաշտ ու աշխարհաշէն մէկը լինելով, իւր ուշքը դարձրէց Անիի շինութեան վերայ և շինեց Լուսաւորչի անունով փառաւոր եկեղեցին : Սորա Կատրամիդէ թագուհին վերջացրէց Սմբատ Բ-ի հիմնած Կաթողիկէ եկեղեցու հոյակապ շէնքը, որ թերի էր մնացել, և զանազան ուրիշ եկեղեցական ու քաղաքական բարեկարգութիւններ անելով՝ իւր հպատակ-

19) Ռամկիներէ մէջ սովորութիւն էր եղել երդուել «Անիի հազար ու մէկ եկեղեցիքը» :

ների վիճակը բարձրեց : Առհասարակ Գազիկը շատ եկեղեցասէր մարդ էր, շատ անգամ եկեղեցու դասուձը կանգնելով շարական էր ասում կամ գիրք կարդում :

ՅՈՎ. ՀԱՆՆԵՍ ՍՄԻՍ 1020—1040 ԹԻՒՐ

Գազիկ Ա-ին յաջորդեց նորա անդրանիկ որդի Յովհաննէս Սմբատը, որ թէև խելացի և հանգարտ բնաւորութեան տէր էր, բայց թույլ ու անգործ մէկը լինելով, նորա քաջ եղբայր Աշոտը՝ զօրացաւ և սորա թուլութիւնից օգուտ քաղելով՝ ապստամբուեցաւ և կամենում էր եղբօր տեղը թագաւորել : Այս նպատակով՝ Վասպուրականի Սենեքերիմ թագաւորից օգնութիւն առնելով՝ գիմեց Անիի վերայ, որի մօտ մի արիւնհահեղ պատերազմ տեղի ունեցաւ :

Նախարարները, Պետրոս կաթողիկոսը և Վրաց Գորգի թագաւորը մէջ ընկնելով՝ հաշտեցրին նորանց, այն պայմանով որ Սմբատը Անիում նստէ, իսկ Աշոտը իբրև թագաւորի երկրորդ՝ Հայաստանի ուրիշ տեղերին իշխէ :

Թէպէտ պատերազմը վերջացաւ, սակայն թշնամութիւնը գեռ շարունակվում էր : Աշոտ մտքումը գրեց որ մի հնարքով եղբօր կեանքին վերջ տայ :

քին վերջ տայ : Բայց ազգի մէջ խռովութիւն չընկնելու համար, խորամանկութեան գիմեց : Մէկօր ծանր հիւանդ ձեւանալով՝ անկողնու մօտ մէկ որոգայթաւոր մեքենայ դնել տուաւ, և երբոր Սմբատը նորան այցելութեան եկաւ, որոգայթին մէջ բռնուեցաւ ու սկսաւ աղաչել եղբօրը որ գէթ կեանքին խնայէ : Ապիւրատ իշխանն իսկոյն կապեց նորան և այնպէս ձեւացրեց թէ մեռցնելու է տանում. բայց Անի տանելով կրկին թագաւորեցրեց իւր գահի վերայ, իսկ ինքը փոխաւ գնաց :

Աշոտ իւր այս արածի համար Հայաստանի մէջ սևերես և ստելի դառնալով՝ Կոստանդնուպոլիս գնաց, և Վասիլ կայսերը հաճելի լինելով՝ նորա օգնականութեամբ վերադարձաւ և իւր առաջուայ պաշտօնը ձեռք բերեց :

Այս միջոցին՝ Սիւլթանոյց ազգը՝ Հայաստանի անկարգ դրութիւնից օգտուելով, անթիւ բազմութեամբ յարձակուեցան Հայաստանի վերայ և սոսկալի արիւնհեղութիւններ սպտճառեցին այն տեղ : Վասպուրականի Սենեքերիմ թագաւորը, երևակայելով նորանց սպառնալի չարիքը, 1021 թուին իւր երկիրը թողթով լանձնեց Վասիլ կայսերն և փոխարէնը Սեբաստիա քաղաքը ստանալով՝ տեղափոխուեց այնտեղ :

Այս միջնցները, Վրաց Գորգի թագաւորն ապստամբուեցաւ Վասիլ կայսրից, (խորհրդակից ունենալով մեր Սմբատին) : Այս պատճառով կայսրը նորան նուաճելուց յետոյ մըտաւ Բագրատունեաց թագաւորութեան սահմանները : Սմբատը զարհուրելով՝ 1022 թուին Պետրոս կաթողիկոսի ձեռքով մի թուղթ գրեց Վասիլ կայսերն և երգումով խոստացաւ, իւր մահից յետոյ Անի քաղաքն իւր գաւառներովը կայսերը տալ, այն պայմանով որ քանի ինքը կենդանի է, կայսրն իրան պաշտպան ու բարեկամ մնայ : Վասիլ ուրախութեամբ ընդունեց սոյն առաջարկութիւնը և մեծ սէր ու պատիւ ցոյց տուեց նաև կաթողիկոսին :

Քանի որ Պետրոս կաթողիկոսը կայսեր մօտ էր գտնվում, Ջրօրհնեաց օրը վրայ հասնելով, կայսրը խնդրեց կաթողիկոսից զետի ջուրը Հայոց ծիսի համաձայն օրհնել : Կաթողիկոսն երբ Կենաց փայտովը խաչակնքեց ջուրը և մէջը թափեց Ս. մեռօնը, իսկոյն զետի ջուրը կանգնեց և մի լոյս փայլեց ջրի վերայ : Այս հրաշքը մեծ զարմանք պատճառեց բոլոր ներկայ եղողներին և այն օրից ըսկսեալ Պետրոս Կաթողիկոսը Գեփարտայ կոչուեցաւ :

Վասիլ Բ-ին յաջորդեց նորա եղբայր Կոս-

տանդինը : Սա մահուան անկողնում գրտնուած ժամանակը խղճահարուելով, կոչել տրուաւ իւր մօտ Կիրակոս անունով մէկ Հայ քահանայ, և Յովհաննէս Սմբատի տուած թուղթը նորան յանձնելով՝ Աստուծոյ անունով երգուեցրեց և պատուիրեց նորան՝ թուղթը իւր տիրոջն վերագարձնելու : Այս անարժան ու անխիղճ քահանայն փոխանակ նորա փափազը շուտափոյթ կատարելու, թուղթը պահեց իւր մօտ, առանց որ և է մէկի գիտութեան, և Կոստանդինի մահից յետոյ մեծ գնով վաճառեց նորա յաջորդ Միքայէլ կայսերն :

Սոյն քահանայի անօրինակ մատնութիւնը Բագրատունեաց հօր թագաւորութեան կործանելու գլխաւոր պատճառն եղաւ : 1040 թուին մեռաւ Յովհաննէս Սմբատը և նորա եղբայր Աշոտը :

ԳԱԳԻԿ Բ. 1042—1045 ԹԻԻԸ

Յովհաննէս Սմբատի և նորա եղբայր Աշոտի մահից յետոյ, Հայաստանն երկու տարի անտէր մնալով, Սիւնեաց Վեստ—Սարգիս անունով փառամոլ իշխանը պատեհ ժամ գրտնելով կամեցաւ ինքը թագաւորել : Միևնոյն ժամանակն էլ Միքայէլ կայսրը պահանջում

էր Անի քաղաքը՝ Սմբատի խոստման համաձայն : Երբոր Հայերը յանձն չառին նորա պահանջը կատարելու, կայսրը բարկացած մի քանի անգամ բաւական զօրք ուղարկեց Անի քաղաքի վերայ : Աեստ—Սարգիսն էլ իրան կայսերը հաճոյ երևացնելու պատճառով, ամեն կողմանէ օգնում էր նորանց :

Հայերը տեսնելով Հայաստանի աւերմունքը և Աեստ—Սարգսի վասակութիւնները, Վահրամ Պահլաւունու առաջնորդութեամբ լիսուն հազար զօրք ուղարկեցին, որով ջարդեցին և փախստական արին կայսեր զօրքը և Աշոտի որդի Գագիկ Բ-ին իւրեանց վերայ թագաւոր ընտրեցին 1042 թուին : Սա իւր իմաստուն քաջութեամբը յաղթեց բոլոր թըշնամիներին և նորանց խլած հողերը կրկին վերադարձրեց, և այսպիսով Հայոց թագաւորութիւնը սկսաւ հոգի առնել : Բռնեց նաև Աեստ—Սարգսին և կամենում էր խեղդել նորան, քանզի Յոյներին գրգռում էր Հայոց դէմ, բայց Աեստ—Սարգիսը զանազան խաբէբայ միջոցներով արդարացրեց իրան :

Վեստ—Սարգիսն երբէք չթողեց իւր չարութիւնները : Մի քանի նախարարների սիրտը գրաւելով, Միքայէլ կայսեր յաջորդ Մոնոմախոս կայսերը յորգորեց Գագիկին բարեկամու-

թեամբ Կոստանդնուպօլիս կոչել, և այդպիսով հասնել ցանկացած նպատակին : Կայսրը քանի անգամ իւր մօտ հրաւիրեց Գագիկին, բայց սա մի քանի բարեմիտ նախարարների խորհրդով միշտ մերժում էր նորա նենգաւոր հրաւերը : Ի վերջոյ Աեստ—Սարգիսը իւրացիններով, Պետրոս Գետադարձի ներկայութեամբ՝ եկեղեցում Ս. Պատարագի առաջ դըրաւոր կերպով երդուեցին և խոստացան նորան՝ մինչև ի մահ պաշտպանել Անին, միևնայն ժամանակ հաւատացնելով թէ նորա Կոստանդնուպօլիս գնալն ոչինչ վնաս չի պատճառել իւր անձին : Գագիկն աւելի պարտաւորուած քանթէ համոզուած՝ ճանապարհ ընկաւ դէպի Կ. Պօլիս : Կայսրը յառաջ մեծ պատուով ու սիրով ընդունեց նորան, բայց մի քանի օրից լետոյ նորան առաջարկեց, որ Անի քաղաքն իրան յանձնէ և փոխարէնն ընդունէ Մելիտինէ քաղաքն իւր գաւառովը : Գագիկ յանձն չառաւ նորա անիրաւ առաջարկութիւնը և աքսորուեցաւ :

Նախարարներն այս բանը լսելուն պէս՝ երկու կուսակցութեանց բաժանուեցան — կէսը կամեճում էին Անին Յունաց յանձնել և կէսը ոչ, մինչև ի վերջոյ Աեստ—Սարգսեանք յաղթող գտնուելով՝ Անիի բանալիքներն ուղար-

կեցին Կայսեր :

Կայսրը Գագիկին աքսորատեղից իւր մօտ կոչելով, ցոյց տուեց նորան Անիի բանալիքները : Գագիկ տեսնելով նախարարների խորգախոսութիւնը, ասաց «Թո՛ղ, Աստուած իմ և նենգաւոր իշխանների մէջ դատաստան անէ՛» : Յետոյ սաստիկ յուսահատուած ու անճարացած 1046 թուին Անին Յունաց տուեց և փոխարէնը ստացաւ Կապադովկիոյ մէջ Պիգուշ քաղաքը և մի քանի ուրիշ կալուածներ :

Այսպիսով Բագրատունեաց թագաւորութիւնը վերջացաւ, Յունաց սեպհականութիւն ղառնալով և զոհ զնալով փառասէր և ազգատեաց Հայ իշխանների մատնութեանը :

Մինչդեռ մեր խեղճ Գագիկ թագաւորն իւր տէրութիւնը կորցնելու համար դառն սուգի մէջ հալ ու մաշ էր լինում, սկսան ամեն կողմերից թշնամիներ արշաւել Հայաստանի վերայ և անտանելի չարիքներ հասցնել Հայոց : Յայներն էլ ձեռքից եկած չարութիւնները չէին խնայում թափել մեր անտէր ազգի գլխին :

1053 թուին Պարսից Տուղրիլ բէկն անձամբ մտաւ Հայաստան և բաւական վնասներ

պատճառեց այնտեղ : Հայերը Ղարսի Գագիկ թագաւորի հետ միացած՝ Թաթուլ սպարապետի առաջնորդութեամբ դիմեցին թշնամու վերայ : Յարթութիւնը թշնամու կողմն եղաւ և Թաթուլը բռնուելով տարուեցաւ Տուղրիլի մօտ : Բայց որովհետեւ այդ պատերազմի մէջ Թաթուլը մահացու վերք էր տուել թշնամեաց իշխանների մէկի որդուն, Տուղրիլ նորան ասաց «Եթէ որ տղան ապրի, քեզ կազատեմ» : Թաթուլը պատասխանեց «Եթէ իմ ձեռքի հարուածն է, չի ապրիլ» : Յիրաւի տղան մեռաւ և Թաթուլը սպանուեցաւ :

Սորանից յետոյ Տուղրիլ բոլոր իւր զօրութեամբը պաշարեց Մանազկերտը, որի իշխողն էր Վասիլ անունով իշխանը : Քաղաքացիք վաղուց իւրեանց պատրաստութիւնը տեսած լինելով, թշնամու լարած բոլոր որդայթները ոչընչացրին—Տուղրիլ տեսնելով որ չէ կարողանում քաղաքը առնել, սկսաւ հեռուից մի գետնափոր փորել տալ դէպի քաղաքը : Աստուածային տրնորէնութեամբ, նորա զօրքերից մէկը Տուղրիլի հետ թշնամանալով մի թուղթ գրեց և նետի ծայրին պատատելով արձակեց դէպի քաղաքը որով յայտնեց նորանց թէ ինչ էր լինում դուր-

սը : Քաղաքացիք էլ սկսան ներսից նորանց յան
դիմանը փորել և հասնելով դրսի փորողներին,
բռնեցին նորանց ու սպանեցին :

Տուղրիլ բերել տուեց նաև մի մեծ փայտա-
շէն բաբան ու կանգնեցրեց քաղաքի հանդէպ :
Քաղաքի իշխան Վասիլն ասաց. « Ով որ այդ բա-
բանն այրէ, մեծ իշխանութեան կհասցնեմ նո-
րան » : Այդ միւսնոյն ժամանակ կենում էր այդ
քաղաքում մի ճարտարամիտ Գաղղիացի : Սա մի
գիւրավառ փոշեղէն նիւթ պատրաստելով՝ շիշե-
րի մէջ ածեց և ձի հեծնելով դուրս եկաւ քաղա-
քից՝ մի նամակ ձեռքում բռնած, և սկսաւ
հանդարտութեամբ գնալ դէպի բաբանը : Պահա-
պանները կարծեցին թէ թուղթ է տանում թա-
գաւորին, բայց ձիաւորը հասնելով բաբանին, շի-
շերը զարկեց նորան և փախաւ դէպի քաղաքը :
Մեքենան սկսաւ մոմի պէս վառուել : Սյապի-
սով Տուղրիլի բոլոր հընարքները ի զուր անցան :

1062 թուին մեռաւ Տուղրիլ և նորան
յաջորդեց նորա եղբօրորդի Ալփասլանը : Սա
Հայաստանի մի քանի քաղաքներն առնելուց
յետոյ՝ եկաւ Անին սլաշարեց և երկար ժամա-
նակ պատերազմելով՝ քաղաքը առաւ և սար-
սափելի կտորածներ արաւ նորա մէջ :

Անին առնելուց յետոյ պատգամաւոր ու-
ղարկեց Կարսի Գազիկ Աբասեան թագաւորին,
որ գայ իրան հնազանդէ : Գազիկ իմանալով
պատգամաւորի գալուստը, սգի շորեր հագնե-
լով՝ մոխրի վերայ նստաւ : Երբոր պատգա-
մաւորը հարցրեց նորա տխրութեան պատճա-
ռը, Գազիկ պատասխանեց. « Իմ սիրելի բարե-
կամ՝ Տուղրիլի մահուան պատճառով սուգի
մէջ եմ » : Պատգամաւորը վերադարձին պատ-
մեց բոլոր տեսածը. Ալփասլանը խղճալով նո-
րա վերայ, անձամբ եկաւ նորա մօտ, և կրկին
նորան թագաւորեցնելով՝ դարձաւ Պարսկաս-
տան : Գազիկ Ղարսը Յոյներին տալով առնում
է նորանցից Երկրորդ Հայքի Շմնդաւ քաղաքը :

Այնուհետեւ Հայաստանը շարունակ պա-
տերազմների ասպարէզ լինելով, ոտնակոխ էր
լինում զանազան թշնամիներից և հիմնայա-
տակ աւերվում : Յոյներն էլ Հայոց հետ իւ-
րեանց ունեցած ատելութիւնը սաստկացնելով,
սկսան ամեն տեսակ նախատինք թափել մեր
ազգի գլխին, այնպէս որ Կեսարիոյ Մարկոս
անուկով Մետրապօլիտն անգամ՝ իւր շան ա-
նունն Արֆէ էր դրել : Մեր խեղճ թագաւոր
Գազիկ Բ-ը լսելով այս բանը, յարմար միջոցի
էր սպասում նորանից վրէժը հանելու. ուստի
մէկ օր իւր ծառաների հետ միասին Մետրա-

պօլիտին այցելութեան գնաց, որը պարտա-
ւորուած մեծ պատուով ընդունեց նորան :
Ուրախութեան միջոցին Գազիկ խնդրեց Մետ-
րապօլիտից շանը կանչելու : Մետրապօլիտը
սկզբում չուզեց կանչել, բայց ի վերջոյ ըս-
տիպուելով Արմէն անունով կոչեց շանը, որը
խսկոյն եկաւ : Գազիկ այսպիսի մի անուն
դնելու պատճառը հարցրեց : Մետրապօլիտը
պատասխանեց. « Փոքրիկ լինելուն համար Ար-
մէն ենք կոչում » : Գազիկ այլ ևս չկարողա-
ցաւ համբերել, իւր ծառաներին ակնարկեց,
որոնք Մետրապօլիտին ու շանն իսկոյն բռու-
նելով՝ մէկ մեծ պարկի մէջ ձգեցին ու սկսան
շանը տաստիկ ծեծել, որ կատաղութիւնից
այնքան խածատեց Մետրապօլիտին, մինչև
երկուսն էլ մեռան պարկի մէջ :

Յոյներն իւրեանց Մետրապօլիտի անպա-
տիւ մահուան լուրը լսելով, սաստիկ վրդով-
ուեցան. նորանք յարմար միջոցի էին սպասում
վրէժխնդիր լինիլ Գազիկից : Ռատի մէկ օր՝
մինչդեռ Գազիկը Կիզիստրայի բերդի պարտիզի
մօտ զբօսնում էր, բերդի տէրերի մատնութեամբ
բռնուեցաւ, որոնք նորան չարաչար տանջանք-
ներով սպանեցին, և մարմինն էլ նոյն բերդի
պարսպի վրայից կախել տուին 1079 թուին :

ՌՈՒԻԵՆԵԱՆՅ ՀԱՐՍՏՈՒԹԻՒՆ

ՇՐՋԱՆ ՉՈՐՐՈՐԻ

ՌՈՒԻԵՆ Ա., 1080—1095 թ.ԻԻԸ

Բագրատունեաց վերջին թագաւորի մահը
վրէժխնդրութեան բոցով վառեց ու բորբոքեց
Հայերի սրտերը, յատկապէս ՌՈՒԻԵՆԻՆԵՆԸ, որ
Գազիկի տղգականներից մէկն էր և նորա
բռնուելուն ականատես եղած : Սա Կիլիկիա-
յի կողմերը գնալով և այնտեղի Հայոց սըր-
տերը Հայրենեաց սիրովը բորբոքելով՝ միաց-
րեց իւր հետ, և այդ ցանկալի միութեան շը-
նորհիւր՝ յաջողեցաւ մի քանի քաղաքներ ու
բերդեր Յունաց ձեռքից խլելով, կազմել Ռու-
բենեանց փոքրիկ՝ բայց անկախ թագաւորու-
թիւնը : Ամեն կողմերից Բագրատունի զին-
ւորները սկսան հաւաքուել այս քաջի թևի

տակն, որոնցով Ռուբենեանց թագաւորութեան հիմնադիր Ռուբէնը զօրանալով, սկսաւ աւելի մեծ խնամքով կառավարել ազգին : Սակայն ափսոս որ մահը վրայ հասնելով մեռաւ 1095 թուին :

ԿՈՍՏԱՆԳՒԻՆ Ա. 1095—1100 թիւր

Լևոն Ա.-ին յաջորդեց նորա որդի Կոստանդին Ա.-ը, որ զգաստ և խոհեմ մէկը լինելով յաջողեցաւ Յունաց ձեռքից մի քանի քաղաքներ յետ առնելով իւր տէրութեան սահմանը ընդարձակել : Սորա իշխանութեան առաջին տարումը Լատինացոց խաչակիր զօրքը դիմեց դէպի Պագեստին, Երուսաղէմն այլազգիների ձեռքից ազատելու համար : Խաչակիրներն Անտիոքի մօտերքումը սովի պատճառով սաստիկ նեղութեան մէջ էին ընկել : Մեր Կոստանդինը լսելով այս բանն, առատ կերակուր ուղարկեց նորանց և վերջումը թանգագին ընծաներ ու ասպետութեան պատիւ ստացաւ :

ԹՈՐՈՍ Ա. 1100—1123 թիւր

Կոստանդին Ա.-ի տեղը նստաւ նորա անդրաւիկ որդի Թորոս Ա.-ը : Սա իւր քաջութիւննե-

րովը լրացրեց իւր նախորդների սկսածը—Յունաց հետ սրատերազմելով առաւ նորանցից Անարզաբա և զանազան ուրիշ քաղաքներ : Սորանցով չբաւականացած՝ դիմեց Կիզիստրայի ամրոցի վերայ, բայց տեսնելով բերդի անառիկ դրութիւնը, գիշերով մի խումբ քաջ երիտասարդներ այնտեղ դարանի դնելով՝ ինքը հեռացաւ իւրայիններով : Առաւօտը բերդի բնակիչները տեսնելով որ թշնամիները հեռացել են, սկսան ազատ ելուժուտք անել : Յանկարծ դարանամուտ Հայերը նորանց վերայ յարձակուելով, ձեռք ընկածներին կոտորեցին : Նոյն միջոցին Թորոսն էլ վրայ հասնելով՝ բերդին տիրեց և Գագիկի սպանողներին բռնելով ըսպանեց. այսպիսով մեր ազգային վրէժը հանեց :

ԼԵՒՈՆ Ա. 1123—1141 թիւր

Որովհետև Թորոս Ա.-ը որդի չուներ, նորան յաջորդեց նորա եղբայր Լևոն Ա.-ը : Սա շատ ջանացողութեամբ առաւ Մամեստիա և Տարսոն քաղաքներն, որոնք Թորոսի ժամանակները դեռ Յունաց ձեռքին էին :

1130 թուին Անտիոքի Պեդակին կոմսը նախանձելով Լևոնի փառքին և անկարող լինելով նորա հետ սրատերազմելու, բարեկամաբար իւր

մօտ հրաւիրեց և բռնելով բաժնարկեց մի բերդի մէջ : Լեոնը անճարացած Ստանա և Մամետօտիա քաղաքները, վաթսուն հազար դահեկան և որդիներից մէկը սրատանդ տալով արձակուեցաւ : Գարով Կիլիկիա իսկօյն զօրք ժողովեց և դիմելով իւր տուած քաղաքների վերայ, կրկին լետ առաւ նորանցից և այնքան նեղացրեց նորանց, մինչև իւր սրատանդ տուած որդուն լետ ուղարկեցին և շատ դժուարութեամբ հետը հաշտուեցան :

Սորանից լետոյ Յունաց Յովհաննէո Պերփեռուժէն կայսրը նոյնպէս նախանձելով Լեոնի զօրութեանն, անհամար բազմութեամբ դիմեց նորա վերայ : Լեոն իշխանաց անմխաբանութեամբը անօգնական մնալով, շատ տեղեր ձեռքից տալուց լետոյ՝ նորանց անձնատուր եղաւ, որ իւր Ռուբէն և Թորոս որդոցը հետ շղթայակալ Կ. Պօլիս տարուեցաւ, ուր Ռուբէնը նախանձոտ ունեւրիցը սպանուեցաւ : Մի տարուց լետոյ՝ կայսրը նորա վերայ խղճալով բանտիցը հանեց, բայց դարձեալ կասկածելով նորա վերայ կրկին բանտարկել տուաւ, ուր փոքր ժամանակից լետոյ վախճանուեցաւ :

ԹՈՐՈՍ Բ. 1143—1168 ԹԻԻԸ

Լեոնի գերուելուց ի վեր մեր նորահաստատ

տէրութիւնը՝ միանգամայն Յունաց ձեռքն անցաւ : Եւ մեր ազգութիւն ու եկեղեցին ճնշվում էին նորանցից : Կ. Պօլիս գտնուող Լեոնի որդի Թորոս Բ.ը 1143 թուին մէկ հնարքով փախաւ Կիլիկիա և յայտնեց մի քահանայի իւր ու վիհելը : Հայ քահանան գաղտնի կերպով իշխաններին ու ժողովրդին իմաց տուաւ Թորոսի գալուստը : Հայերն ազատութեան փափազով վառուած՝ ոտի են կանգնում և տասն հազար Հայ երիտասարդների քաջութեամբ մի առ մի լետ են առնում Յոյների ձեռքից նորանց տիրապետած քաղաքները :

Այն Մանուէլ կայսրը լսելով մեր Թորոսի գործքերն, Անգրոնիկոս զօրավարին մեծ զօրութեամբ ուղարկեց Կիլիկիա նորա դէմ, որը սաստիկ յաղթուեցաւ և մի քանի իշխանների հետ գերի բռնուելով, շատ զանձեր տուաւ և գերութիւնից արձակուեցաւ : Կայսրը թէպէտ հաշտութիւն խօսեց, սակայն ոխը սրտից չբահանեց և մի քանի անգամ կրկին զօրք ուղարկեց նորա վերայ, բայց միշտ յաղթուեցաւ : Թորոսի եղբայր Ստեփանէն ևս շատ քաջութիւններ անելով, ի վերջոյ բռնուեցաւ ու սպանուեցաւ : Թորոսը սորա մահուան վրէժն առնելու համար, բաւական նեղացրեց Յոյներին, որով կայսրը կատաղած մեծ բազմութեամբ

անձամբ եկաւ նորա վերայ : Թորոսն անձա-
րացած հաշտութիւն առաջարկեց :

Թորոսն իւր միակ որդին իւր աներ՝ Թով-
մաս Պայլ Անտիօքի իշխանի հոգատարութեանն
յանձնելով մեռաւ :

ՄԼԵՀ 1168—1174 ԹԻԻԸ

Թորոսի ապստամբ եղբայր Մլեհը նորա
մահից յետոյ Հալէպի Նուրէդդին ամիրայի
օգնականութեամբ չափազանց արիւնահեղու-
թիւններէց յետոյ՝ յաջողեցաւ Հայոց գահը
բարձրանալ : Թովմաս Պայլը փախաւ Անտիօք
և Թորոսի որդին գաղտնի սպանուեցաւ :

Մլեհը եղբօր բոլոր երկիրը գրաւելուց յե-
տոյ՝ իրան տուեց անկարգ կենցաղավարութեան,
որով ատելի եղաւ բոլոր ժողովրդին և սպան-
ուեցաւ նորանցից :

ՌՈՒՐԵՆ Բ. 1174—1185 ԹԻԻԸ

Մլեհի տեղը նստաւ նորա Ստեփաննոս
եղբօր որդի Ռուբէն Բ.ը : Սա Տարսոնը և
Յունաց ձեռքում գտնուած միւս քաղաքները
գրաւեց, բայց Լամբրոն ամրոցի իշխան Հե-
թումը, որ Ներսէս Լամբրոնացու եղբայրն էր՝
թշնամացաւ հետը, քանզի Յունաց իրաւասու-

թեան ներքոյ էր գտնվում և նորանց հաւա-
տարիւմ հպատակ :

Երկու Հայկազն իշխանների մէջ պատե-
րազմ բացուելով, Ռուբէնը սաստիկութեամբ
պաշարեց Լամբրոնը : Հեթումն անձարացած՝
Անտիօքի Պեմունդ իշխանի օգնութեանը դի-
մեց, որ Ռուբէնին խարդախութեամբ իւր մօտ
հրաւիրելով ձերբակալեց : Նորա եղբայր Լևոնը
Լամբրոնի պաշարը սաստիկացնելով՝ այն աստի-
ճան նեղն ձգեց Հեթումին, մինչև որ հաշ-
տութիւն խօսեց և նորա խնդիրքովը Պեմունդ
արձակեց Ռուբէնին և կրկին հաստատեց իւր
աթոռի վերայ, որ 1185 թուին ազգի կառա-
վարութիւնը Լևոն եղբօրը յանձնեց և ինքը
Դրազարկ վանքը առանձնանալով սրբութեամբ
մեռաւ :

ԼԵՒՈՆ Բ. 1185—1219 ԹԻԻԸ

Ռուբէնի մահից յետոյ, նորա եղբայր Լևոն
Բ.ը իւր զանազան քաջութիւններովն ու կա-
տարելութիւններովը սկսաւ իւր տէրութիւնը
ծաղկեցնել ու ընդարձակել :

Այս միջոցումը, այսինքն 1187 թուակա-
նին, Բերիոյ Սալահատին իշխանը նուաճեց
Երուսաղէմը : Երբոր այս գոյժն Եւրոպա հա-
տաւ, Գերմանացոց Ֆրեդերիկոս կայսրը 1189

Թուին ուրիշ օգնական խաչակիր զօրքերով միասին շտապեց Երուսաղէմը լետ կորգելու թշնամիներէից : Լևոն իմանալով նորա Հայաստանին մօտենալը և սովից պատճառած նեղ դրութիւնը, ոչ միայն առատ պաշար ուղարկեց նորա զօրքերի համար, այլև պատրաստափանութիւն յայտնեց ձեռքից եկած օգնութիւնը, չխնայելու, որ և կատարեց : Կայսրն իւր քրախտազիտութիւնը ցոյց տալու համար խոստացաւ Լևոնին թագաւոր պսակել : Բայց երբոր քիչ ժամանակից լետոյ մեռաւ, նորա յաջորդ Հենրիկոսն և Կեղեստիանոս պապն կատարեցին նորա խոստմունքը՝ մի փառաւոր թագ և դրքօշակ ուղարկելով, որով Լևոն 1198 թուին Գրիգոր Ապիրատ կաթողիկոսից մեծ հանգիսով թագաւոր օծուեցաւ Սսի մէջ ուր և փոխադրեց աթոռը :

Թագաւոր դառնալուց լետոյ՝ Լևոն Իկոնիոյ և Բերիոյ սուլթանների հետ պատերազմելով, զանազան հնարքներով յաղթեց նորանց, վերջ տուեց Լամբրոսի Հեթումի իշխանութիւնը, հալածեց Հալէպի Սուլթանին և ամեն կողմանէ Հայաստանը խաղաղացրեց և բարեկարգեց : Իւր միակ մանկահասակ Զաբէլ աղջիկը՝ Կոստանդին իշխանի խնամատարութեամբ իրան յաջորդ նշանակեց և մեռաւ 1219 թուին :

Կոստանդին կաթողիկոսի հաւանութեամբ՝ տէրութեան խնամատար Կոստանդինը և միւս իշխանները Զաբէլին ամուսնացրին Անտիոքի Պեմունգ դքսի Փիլիպպոս որդու հետ, (որ մօր կողմանէ միայն Հայ էր) և Հայոց վերայ թագաւոր օծեցին, երդումն առնելով հաւատարիմ մնալու մեր եկեղեցուն ու աշխարհին :

Փիլիպպոսը թագաւոր դառնալով երկու տարուց լետ անհաւատարիմ գտնուեցաւ իւր երդմանը և սկսաւ Սսոյ հարստութիւններն Անտիօք կրել տալ, որով ատելի եղաւ բոլորին և լռնուելով բանտ դրուեցաւ, ուր քիչ ժամանակից լետոյ մեռաւ :

Փիլիպպոսի մահից լետոյ, Հայերը զգալով օտարազգի թագաւոր ունենալու վնասը, վրձուեցին այնուհետև ունենալ հոգւով և արիւնով մի Հայկազն թագաւոր : Ուստի Զաբէլ թագուհուն՝ նորա երկար ընդդիմութիւններից լետոյ, ամուսնացնելով Կոստանդին իշխանի Հեթում որդու հետ՝ սորան Հայոց թագաւոր օծեցին, որ Ռուբենեանց հետ ազգակցութիւն ունէր : Այս Հեթումը իւր Կոստանդին հօր խելացի

խորհուրդներովն ու օգնականութեամբն՝ Կիլիկիան ծաղկեցրեց նորանոր կարգադրութեամբ:

Այս միջոցին Թաթարաց ազգը զանազան տեղեր զրաւելուց յետոյ, փոքր առ փոքր մօտենում էին Կիլիկիային: Հեթում նորանց Բաշու զօրավարի հետ բանը խաղաղութեամբ վերջացնելուց յետոյ՝ անձամբ գնում է Թաթարաստան, նորանց իշխան Մանգուխանի մօտ, և սիրալիր ընդունելութիւն գտնելուց յետոյ՝ խաղաղութեան և բարեկամութեան դաշն է կապում:

Իկոնիոյ սուլթանը նախանձելով այս եղելութեան վերայ, պատերազմի ելաւ: Հեթումը քաջութեամբ յաղթեց նորան և յաջողեցաւ ձեռք բերել թշնամիների զրաւած մի քանի քաղաքներ:

Եգիպտոսի Փնդուխտար ամիրան դեսպան ուղարկելով Հեթումի մօտ, պահանջում էր Եգիպտացիներից նոր տիրած քաղաքները: Հեթում յանձն չառնելով՝ պատերազմ բացուեցաւ: Այն ժամանակ զօրքն երկու մասնի բաժանելով. յանձնեց իւր Լեոն և Թորոս որդոցը ու թշնամու դէմ հանելով, ինքն շտապեց Թաթարաստան օգնութեան: Բայց մինչև իւր վերադարձը, թշնամին միանգամայն քարուքանդ արաւ Կիլիկիան, Թորոսը սպանուեցաւ

և Սսի հարստութիւնները կողոպտուեցան: Հեթում Լեոնին ազատելու համար մեծագին ընծաներ ուղարկեց ամիրային, որը նորա փոխարէն պահանջեց Էւբեանց Սղուր իշխանին, որ Թաթարաց մօտ գերի էր: Հեթում ամեն ջանք գործ դնելով Սղուրին ազատեց և Եգիպտոս հասցնելով Լեոն որդուն ազատեց, որին իւր տեղը թագաւորեցրեց 1269 թուին և ինքը կրօնաւոր եղաւ:

ԼԵՈՆ Գ. 1269—1288 ԹԻՒՐ.

Լեոն Գ.ը չափազանց զգայուն սրտի տէր լինելով, հօր մահուան պատճառով մահամերձ հիւանդացաւ և հազիւ հազ առողջանալով՝ Տարսնումը Յակովբ Կլայեցի կաթուղիկոսից թագաւոր օժուեցաւ: Այնուհետև սկսաւ քայքայուած Հայրենիքը բոլորովին նորոգել և ամեն տեղ դպրոցներ բանալով՝ տգիտութեան իսլաւը փարատել գէթ ապագայի համար: Օրինակել ու տարածել տուաւ նաև գրեթէ իւր նախնեաց բոլոր ձեռագրերը և նորեր շարգրելու փոլթն ունեցաւ:

Չնայելով այս բոլոր օրինակելի ձեռնարկութիւններին, նախարարներն և ազգականները նախանձելով՝ սկսան նորա դէմ դաւաճանութիւն

նիւթել և Փնդուխտարին զրգուել նորա դէմ :

Եգիպտացիք անթիւ բազմութեամբ Կիլիկիոյ վերայ արշաւեցին : Լեւոն անօգնական մնալով թաք կացաւ, և թշնամիքն ամեն ինչ սրի ու կրակի ճարակ տուին : Լեւոն հասկացաւ որ բոլորովին անօգուտ է իւր պահուած զրութիւնն, ուստի դուրս գալով և Սմբատ սպարապետի ձեռքովք բաւական զօրք ժողովելով, բոլորովին ջախջախեց թշնամու զօրութիւնը և այն աստիճան նեղն ձգեց նորան, որ հաշտութիւն խօսեց : Լեւոն ուրիշ պատերազմներ ևս մղելով, իւր շրջակայքը մեծ երկիւղ ձգեց, բայց ավստ՛որ մահը վերջ տուեց այս երջանկութեանը :

ՀԵԹՈՒՄ Բ. 1289—1305 ԹԻՒՆ

Լեւոն Գ.ի որդի և յաջորդ Հեթում Բ.ը սաստիկ կրօնասէր լինելով, չէր կամենում թագաւոր օծուել և միշտ հոգեւոր կրթութեամբ ու աղօթքով էր պարապվում : Սա իւր կառավարութեան սկզբներում սկսաւ բանակցութիւններ անել Նիկողայոս Գ. պապի հետ : Կոստանդին Բ. կաթողիկոսն այս բանին ընդդիմանալով ակտուալութիւն եղաւ նորանից :

Սոյն միջոցին Եգիպտոսի ամիրայ՝ Մելիք Սըրաֆն անհամար բազմութեամբ դիմելով Պա-

ղեստինի վերայ, առաւ զանազան քաղաքներ և կոտորեց շատ բրիտանեաներ : Յետոյ դիմեց զէպի Կիլիկիան և Հռոմկլայ ամրոցը պաշարելով՝ շատ կոտորածներէց լետոյ առաւ նորան և չափազանց արիւնհահեղութիւններ ու աւերմունքներ գործեց նորանում : Բայց բարեբախտաբար դեռևս Կիլիկիա չհասած, գուժկան հասաւ Սըրաֆին որ Եգիպտոսը վտանգի մէջ է : Ուստի շտապեց իւր երկիրը պաշտպանելու հետը տանելով շատ հայ զերիններ, որոնց մէջ էին գտնվում Ստեփաննոս Գ. կաթողիկոսը, Ս. Լուսաւորչի Ս.ջը և ուրիշ եկեղեցական անօթներ :

Հէնց որ Եգիպտոսը վտանգից ազատուցաւ, սաստիկ ժանտախտ ընկաւ այնտեղ : Ամիրայն հասկացաւ որ այդ պատիժն Աստուածանից էր ուղարկուած Ս. Ս.ջի և այլ սպասների գերակեան պատճառով, ուստի վերադարձրեց բոլոր զերիններին և եկեղեցապատկան իրեղէնները :

Սորանից լետոյ Հեթումն իշխանութիւնը յանձնելով Թորոս եղբօրն հրաժարուեց թագաւորութիւնից և ընտրեց վանական կեանք : Թորոսն ևս երկու տարուց լետ եղբօր օրինակին հետևեց :

Այնուհետև Հեթումը և Թորոսն այցելու-

Թիւն զնալով Կոստանդնուպօլիս իւրեանց քոյր Մարիամ կայսրուհուն, երկրի կառավարութիւնը յանձնեցին Սմբատ երրորդ եղբօրն : Սա նորանց բացակայութեան ժամանակ բոլոր միւս եղբայրներին և Գրիգոր կաթողիկոսին իւր կողմը գրաւելով՝ Սիս քաղաքում թագաւոր օծուեցաւ :

Հեթումն եղբօր հետ Կոստանդնուպօլիսից վերադառնալիս, տեղեկանալով այս ամեն եղելութիւնները, կամեցաւ զնալ Ղազան-խանի մօտ (որ Սմբատի հետ դաշն էր կապել), բայց Սմբատը գորանց բռնել տալով՝ Թորոսին սպանել տուեց, իսկ Հեթումին կուրացնելով բանտը դրեց : Հեթումի չորրորդ եղբայր Կոստանդինը՝ 1298 թուին ընկնելով Սմբատի վերայ, նորան բանտարկեց և Հեթումին ազատելով ինքը սկըսաւ թագաւորել :

Քիչ ժամանակից յետոյ Հեթումի աչքերը հրաշքով բացուեցան և շատերը կամենում էին նորան թագաւորեցնել : Բայց Կոստանդինը կամեցաւ Սմբատ եղբօրն բանտից հանել և նորա հետ միասին ընդդիմանալ ժողովրդի կամքին, սակայն երկուսն էլ բռնուեցան Հեթումից և Կոստանդնուպօլիս ուղարկուեցան, ուր մնացին մինչև իւրեանց մահը :

Սորանից յետոյ Հեթումը զանազան պա-

տերազմներ մղելով Հայաստանը մաքրեց թշնամիներից ու խաղաղացրեց : Սյնուհետև անզաւակ լինելով՝ իւր Թորոս եղբօր Լևոն որդուն իւր տեղը թագաւոր օծել տուեց և ինքը կրօնաւորուեցաւ :

ԼԵՒՈՆ Դ, 1305—1308 ԹԻՒԸ

Լևոն Դ.ը խելացի և բարեպաշտ մէկը լինելով, ամեն բանի մէջ հետևում էր Հեթումի խորհրդին, (որ վանքում էր մնում և կոչվում էր Թագաւորահայր) և մեծ ջանք էր անում Հայաստանն անդորր վիճակի մէջ պահելու :

Սա Գրիգոր Անաւարդեցի կաթողիկոսի յորդորելովը՝ Սսոյ մէջ մի եկեղեցական ժողով գումարեց, որով մտադիր էր Հայոց առաքելական ծէսերը փոխել և Լատինացոյցը մտցնել : Սյս բանի վերայ մեծ խռովութիւն ծագեց Հայաստանի մէջ և ամեն կողմից տրտունջի ու զանգատի ձայներ էին լսվում : Սսոյ բնակիչները մեր ուղղափառ եկեղեցու ծէսերի մէջ մի բանի փոփոխութիւններ տեսնելով, արդար բարկութեամբ բորբոքուեցան և իւրեանց համաձայն իշխանների հետ միացած՝ գրգռեցին Սկիւթացոց Պիլարդու գորավարին մեր Լևոնի դէմ : Սա ևս Լևոնին և նորա կողմնական-

ներին իւր մօտ հրաւիրելով՝ սպանել տուեց բոլորին և գիմեց Կիլիկիայի վերայ : Հեթո՞ւմի փոքրիկ եղբայր Օշինը լսելով այս բանը ժողովեց Հայոց մնացեալ իշխաններին ու զօրքը և նորան Կիլիկիայից հալածելով՝ ինքը թագաւոր օժուեցաւ :

ՕՇԻՆ 1308—1320 ԹԻՒՆ

Օշինը թագաւոր ընտրուելուն պէս, կամենալով իբրև թէ կրօնական խռովութիւնները վերջացնել, դարձեալ ժողով գումարելով՝ հրաման հանեց որ իւր նախորդի ժամանակուայ ժողովի կանոնագրութիւնները պահուին, բայց փոխանակ խաղաղութիւն ընկնելու, ժողովրդեան մէջ աւելի ևս խռովութիւնները սաստկայան :

Այս ժամանակները Նգիպտոսի Նըսր ամիրապետը յարձակուեցաւ Կիլիկիայի վերայ : Օշին մարդկային օգնականութիւններից յոյսը կտրելով՝ միմիայն Աստուծուն ապաւինեց և իւր երկու հարիւր զօրքովը միայն՝ բոլորովին յաղթեց նորան : Այնուհետև իւր տասն և երկու տարեկան Աւոն որդին Օշին իշխանի հաւատարիմ խնամակալութեանը յանձնելով վախճանուեցաւ :

Այս միջոցումը մի մեծ շարժ եղաւ Հա-

յաստանում, որից կործանուեցան բազմաթիւ քաղաքներ ու բերդեր (20) :

ԼԵՒՈՆ Ե. 1320—1342 ԹԻՒՆ

Օշինին յաջորդեց նորա դեռահաս որդի Աւոն Ե.ը : Սորա թագաւորութեան սկզբներում զանազան խռովութիւններ ծագելով Հայաստանի մէջ, ամեն կողմերից թշնամիներն արշաւեցին Կիլիկիայի վերայ, բայց յաղթուեցան : Այնուհետև Հայերը տեսնելով որ թշնամիները միաբանվում են իւրեանց դէմ պատերազմի ելնելու, իւրեանք ևս դիմեցին Նւրուպացոց օգնականութեան :

Դաշնակից թշնամիները գիմելով Կիլիկիայի վերայ, ձեռքից եկած անգթութիւնները չբխնայեցին մեր խեղճ ազգի գլխին թափելու : Հայերը մի աղաչանայ թուղթ գրեցին այն ժամանակուայ Յովհաննէս պապին, նկարագրելով Հայաստանի թշուառ վիճակը և խնդրելով օգնութիւն : Պապը զգալով որ մասամբ ինքն է եղել այս թշուառութիւնների պատճառը, ի սրտէ ցաւեցաւ այս բոլոր եղելութիւնների վերայ, ուստի շտապեց կոնդակներով օգնութեան

20) Կործանուած քաղաքներէ թւումն էր և Սնի մեծ քաղաքը, որի բնակիչները զաղթեցին զանազան տեղեր, և այդ փառաւոր քաղաքը մինչև մեր օրերը մնաց աւերակ :

հրաւիրել բոլոր Եւրոպական տէրութիւնները, բայց ոչինչ արգիւնք չերևաց : Ի վերջոյ Հայերը ամեն կողմանէ անօգնական մնալով հասկացան որ իւրեանց ազատութիւնն էլի կարելի է նոյն իսկ գրացի տէրութիւններից յուսալ, ուստի Սկիւթացոց Բուսալիգ-խանի օգնութեանն դիմեցին, որ քսան հազար զօրք օգնութիւն ուղարկեց նորանց : Այնուհետև Եգիպտացոց ամիրապետն (որ դաշնակից թշնամիների գլխաւորն էր), Կոստանդին Ե. կաթողիկոսի խնդրանօք խաղաղութիւն առաջարկեց և բարեկամութեան դաշն կապեց :

1330 թուին մանուկ թագաւորը կատարելահասակ դառնալով, տէրութեան կառավարութիւնը միանգամայն իւր ձեռքն առաւ, թշնամացաւ իւր Օշին խնամակալի հետ և սպանել տուաւ նորան, շատ իշխանների պաշտօնից զրկեց և վերջապէս վրդովեց երկրի խաղաղութիւնը :

Եգիպտացոց Սելիք Նըսր ամիրապետը կասկածելով Հայոց վերայ, դարձեալ յարձակուեցաւ Հայաստանի վերայ և չափազանց աւերմունքներ պատճառելուց լետոյ՝ դարձաւ իւր երկիրը, հետը տանելով բազմաթիւ զերիներ ու աւարներ : Լեոնը մնաց շուարած և աղաքանքով հաշտութիւն խնդրեց ամիրապետից : Ս. Աւետարանի վերայ երդուելով, որ այնու-

հետև այլ ևս ուէ հաղորդակցութիւն չի ունենալ Եւրոպացոց հետ, բանը խաղաղութեամբ վերջացրեց :

Քայց որովհետև Լեոնն իւր երդմանը դրժելով դարձեալ սկսաւ պապերի հետ թղթակցութիւն պահել, ուստի ամիրապետը բարկանալով սկսաւ կրկին իւր ասպատակութիւնները շարունակել և Հայաստանը այնուհետև ներքին ու արտաքին կրօնական և քաղաքական խռովութիւնների ասպարէզ դարձաւ :

ՅՈՎ. ՀԱՆՏԵՍ ՊՅՅԼ ԿԱՄ ԿՈՍՏԱՆԳՒԻՆ Գ.
1342—1343 ԹԻԻԸ

Լեոն Ե.ը ժառանգ չունենալով նորան յաջորդեց Յովհաննէս Պայլն որ Լեոն Գ.ի Զաքէլ աղջկայ որդին էր և հօրից Լատին, իսկ մօրից՝ Հայ էր : Սա իւր վարքովը չափազանց աղմուկների պատճառ եղաւ : Քանզի հրամայում և բռնի ստիպում էր բոլորին թողնել միանգամայն Հայկական սովորութիւնները (թէ եկեղեցական և թէ դիւանական) և ամեն բանի մէջ ջանալ կապիկի պէս նմանուիլ Եւրոպացիներին : Ի հարկէ այսպիսի մի հրամանի գործադրութիւնն այնքան էլ հեշտ բան չէր Հայի համար, ուստի բարկանալով սպանեցին նորան :

ԳՈՒԿՏՈՆ 1343—1345 թիւը.

Հայերը չխրատուելով օտարազգի թագաւորի պատճառով տեղի ունեցած չարիքներից, Յովհաննէս Պալլի տեղը յաջորդ նշանակեցին նորա եղբայր Գուկտոնին, որ աթոռը նստելուն պէս սկսաւ իւր նախորդի հետքովը գնալ : Հետեւարար ազմուկներն ու երկպառակութիւններն աւելանալով՝ Եգիպտացիք սկսան սաստկացնել իւրեանց ասպատակութիւնները : Գուկտոնը որ իւր սեպհական իշխաններին ու զօրքին զայլրացրել էր, նորանցից միանգամայն անօգնական մնալով, ստիպուեցաւ իրան շրջապատել օրպականութեան ջերմ պաշտպաններով, որոնց ձեռքով աշխատում էր Հայաստանեայց ուղղափառ եկեղեցւոյ ծէսերն անգամ վոխել Լատինականի :

Հայերը քանիցս նորան զգուշացնելուց և եղբօր վախճանը լիշեցնելուց լետոյ, երբոր տեսան թէ փոյթ չէ տանում, եղբօր պէս սպանեցին նորան :

ԿՈՍՏԱՆԳՒԻՆ Դ. 1345—1365 թիւը

Գուկտոնի մահից լետոյ Հայերը փոքր ինչ խրատուելով, իւրեանց վերայ թագաւոր ընտրեցին Հեթում իշխանի որդի Կոստանդինին : Սորա առաջին գործն եղաւ ժողովներով վեր-

ջացնել կրօնական խնդիրները և պապականների լարած որոգայթները 21), որով յաջողուեցաւ Հայաստանի ներքին և արտաքին դրութիւնը բարւոքել :

Եգիպտոսի ամիրան սորա վերայ ևս կասկածելով մեծ զօրքով դիմեց Կիլիկիայի վերայ : Բայց Կոստանդինը ժողովելով մնացեալ քաջերին՝ սաստիկ ջարդեց նորան և փախստական արաւ մեր սահմաններից :

Կոստանդինը այսպիսով մինչև 1363 թիւը Կիլիկիան բաւական ապահով է պահում : Թէև գթառատ պապերը միշտ հոգս էին անում իբրև թագաւոր վերադառնալու և ուղղափառութիւնը մեր մէջ հաստատելու համար : Բայց այդ վարմունքով մեզ աւելի վտանգի մէջ էին ձգում ու մեր թշնամիների թիւն աւելացնում : Եւ եթէ որ ուշի ուշով միտ դնելու լինինք պատմութեան ընթացքին, այն եզրակացութեան պիտի գանք, որ հէնց Կաթողիկոսութիւնն եղաւ Ռուբենեանց հարստութեան կործանման բուն պատճառը :

21) Պապականները համոզում էին խեղճ Հայերէն տեղով «եթէ Կաթողիկոսականը, Աստուծոյ հետ կհաշտուի և միշտ յազմող կլինի» : Չնայելով որ կարծեցեալ Հերետիկոսական կարգերով մեր աւելի բարսաւոր էինք քան թէ Կաթողիկոսութեամբ :

ԼԵՒՈՆ Զ. 1365—1393 ԹԻՒՆ

Արտատանդին Գ. ի մահից յետոյ Կիլիկիան մեծամեծ անկարգութեանց մէջ ընկաւ : Հայ իշխաններն ու նախարարները թողնելով իւրեանց ցանկալի Հայրենիքը, գաղթում էին ուրիշ աշխարհներ, իսկ նորանց տեղը բռնում էին Լատինացիք, որոնք զանազան միջոցներով կամենում էին բարձրանալ Հայոց գահի վերայ, և այսպիսով երկպառակութիւններն աւելի ու աւելի բազմանում էին : Վերջապէս Լատինականների կողմը յաղթող գտնուեցաւ և Ուրբանոս Ե. Պապը նորանց կողմը լինելով՝ Գուփտոնի ազգականներից մէկին—Լեւոն Զ. Լուսինեանին իւրեանց վերայ թագաւոր ընտրեցին 1365 թուին :

Հայոց այս վերջին թագաւորը քաղցրբարոյ և իմաստուն մէկը լինելով, շատ լաւ պիտի կառավարէր ազգը, բայց ափսոս որ ժամանակը դառն էր և Հայաստանը ճգնաժամի մէջ էր գտնվում :

1371 թուին Եգիպտացիք յարձակուեցան Կիլիկիայի վերայ և բացի նորանց սլատճառած աւերմունքները, սաստիկ սով ևս ընկաւ այնտեղ : Լեւոնը մի առ ժամանակ ընդդիմանալուց յետոյ՝ ամուր տեղ քաշուելով անհետացաւ : Հայերը կարծելով թէ արդէն մեռած

կլինի, մտածեցին Օթոն իշխանին Մարիամ թագուհու հետ ամուսնացնելով թագաւորեցնել Հայոց վերայ : Գեռևս այս մտադրութեան հետ էին, որ յանկարծ լուր հասաւ թէ կենդանի է և այս ինչ տեղում է գտանվում. արդարև շուտով ինքն ևս յայտնուեցաւ :

1374 թուին Եգիպտոսի Սուլթան Մելիք Էշրէֆ—Շապանը կասկածելով Հայերի Լատինացուց հետ ունեցած յարաբերութեան համար, մի ահագին զօրք ուղարկեց Կիլիկիայի վերայ, մեր տէրութիւնը հիմնայատակ կործանելու մտքով : Սորանք էլ խեղճ Հայաստանի մնացորդ քաղաքներն, գիւղերն ու ամրոցները միանգամայն աւերակ դարձրին, կողոպտեցին ձեռք ընկածները, կոտորեցին ում որ կամեցան և գերեցին ում որ հաճեցան : Վերջապէս աւելորդ լինելով մի առ մի թուել նորանց գազանութիւնները, կասեմ մի խօսքով, որ նորանք Կիլիկիան այն աստիճան անշէն ու ամայի անապատ դարձրին, որ այլևս անհնար էր Հայոց թագաւորութիւնը այնտեղ զօրանար : Իսկ գերիներին սկսան սարսափելի տանջանքներով հաւատները ուրանալ տալ, և յանձն չառնողներին անխնայ կոտորել :

Լեւոն թագաւորը անտէր ու անօգնական մնացած՝ հազիւ հազ կարողացաւ իրան և իւր

ընտանիքը մահից ազատելով՝ ապաստանուել
Կապան ամրոցը :

Թշնամին պաշարեց և Կապանը ինն ամիս,
մինչև որ թագաւորը ճարահատեալ՝ իւրային-
ներով անձնատուր եղաւ : Սորանք իսկոյն մտան
բերդը և կողոպտեցին, Լևոնին էլ բռնելով՝
շղթայակապ տարան Եգիպտոս ու բանտը դրին :

Լևոն եօթն տարի բանտումը մնալուց
յետոյ, Սպանիացոց Յովհաննէս թագաւորի ա-
զաջանքովը ու ընծաներովը գերութիւնից ա-
զատուեցաւ և ընտանիքով գնաց Երուսաղէմ,
ուր Մարիամ թագուհուն և Փեննա աղջկան
թողնելով՝ ինքը գնաց Հռովմ ու մեծամեծ
պատիւներ ստացաւ Ուրբանոս Զ. պապից, ապա
գնաց Սպանիա Յովհաննէս թագաւորին իւր
երախտագիտութիւնը յայտնելու համար, որից
սիրով ընդունուելուց յետոյ՝ ստացաւ նորանից
նաև բնակութիւն :

Այնուհետև դիմեց դէպի Գաղղիա ու Անգ-
ղիա և շատ ջանացաւ նորանց օգնութեամբ
Հայոց թագաւորութիւնը վերականգնել, բայց
նորա բոլոր ջանքերն ապարդիւն անցան և
1393 թուին Փարիզում վախճանուեցաւ ու
թաղուեցաւ Կեղեստինեանց Վանքումը, ուր
մինչև այժմս էլ դեռ կայ նորա գերեզմանը :
Իսկ նորա Մարիամ թագուհին ու Փեննա աղ-

ջիկը վախճանուեցան Երուսաղէմում :

Այսպիսով վերջացաւ Հայոց թագաւորու-
թիւնը, երկիրն ամայանալով աւերակ դարձաւ,
իսկ բնակիչները թողնելով իւրեանց դրախտա-
նըման Հայրենիքը՝ ցրուեցան աշխարհիս գա-
նազան կողմերը :

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԻՃԱԿԸ ԱՆԻՇԻՍ- ՆՈՒԹԵԱՆ ԺԱՄԱՆԱԿ

Հայոց թագաւորութեան վերջնաւուրց յետոյ՝ 1387 թուին Էօզրէկ Թաթարների Լանկ-
թիմուր զօրապետն անթիւ Թաթարների զլուխն
անցած, մտաւ Հայաստան և ձեռքից եկած
սոսկալի արիւնհեղութիւններն այնտեղ գործե-
լուց յետոյ՝ շատ գերիներ ու ձեռագիր մատեան-
ներ հետն առած՝ դարձաւ Սմրղանդ քաղաքը :
Սորա գործած բռնութիւնների ժամանակը նը-
շանաւոր եղաւ Կարինէ անուանով Մշեցի Հայ
հերոսուհին, որ թշնամեաց անձնատուր չլինե-
լու նւրատակով՝ սուր ձեռքն առած աննման
քաջութեամբ մինչև վերջը պատերազմելուց
յետոյ, երբ տեսաւ որ այլ ևս ազատուելու հնար
չկայ, յառաջ իւր եօթն տարեկան երեխային
սպանեց և յետոյ ինքն իրան լերան բարձրու-
թիւնից վայր ձգելով մեռաւ, իւր պատիւը,
աղբալին արիւնը ու կրօնն անարատ պահելու
համար :

1435 թուին Հայոց ազգի միակ միութե-
րութիւն էր մնացած Պելզինէ անուանով իշխանը,
որ Սմբատ Ուուպելեանի որդին էր և Սիւնեաց
աշխարհումը վեց հազարի չափ Հայերին հայ-
րաբար խնամում էր :

Վրաց թագաւորը կասկածելով ու նախան-
ձելով սորա վերայ, Ամնազին անուանով մի դա-
ւաճան Հայի ձեռքով թունաւորեց 1438 թուին :

1603 թուին Պարսից Շահաբաւ թագաւորը
գիմեց Հայաստանի վերայ և սոսկալի արիւնհե-
ղութիւններ անելուց յետոյ, լսելով որ Օսման-
ցիք ևս արշաւելու են այնտեղ, մտածեց որ
Խարձր Հայաստանը միանգամայն անմարդաբնակ
անէ. ուստի ամեն կողմերից հազարաւոր Հայ
ընտանիք ոչխարի հօտի պէս ժողովելով Սյրա-
բատայ ընդարձակ դաշտը, շտապեց թշուառ-
րատայ ընդարձակ դաշտը, շտապեց թշուառ-
ներին սրբերով ու բրբերով յառաջ մղել դէպի
Երասխի ափը : Սյստեղ Օսմանցոց վրայ հաս-
նելուց խուսափելու համար, հրամայեց անխնայ
քշեն խեղճերին դէպի կատաղի գետը և անց-
կացնեն միւս կողմն, որի ժամանակ աննկարա-
զրելի չարչարանքներից ու կիսով չափ ջրին զոհ
գնալուց յետոյ՝ մնացած բսան հինգ հազա-
րաչափ տուն անձանօթ ու դժուարանցանելի

ճանապարհներով վերջապէս 1605 թուին հասան Պարսկաստանի Սպահան քաղաքը, որի հարաւային կողմում հիմնարկեցին այժմեան Նոր—Ջուղան և այնտեղ բնակուեցան :

Շահաբաս այս բազմատանջ ժողովրդի սիրտը իւր երկրի հետ կապելու և նորանով իւր տգէտ ազգը լուսաւորելու նպատակով, արտաքույ կարգի քաղաքական ու կրօնական ազատութիւններ շնորհեց նորանց և այն աստիճան պաշտպանութիւններ ցոյց տուեց, որ Հայի ու Պարսկի մէջ դատ բացուած ժամանակ՝ միշտ իրաւունքը Հայի կողմն էր լինում :

Բայց որովհետև պարսկական բոլոր այս խորամանկ վարմունքը անկարելի էր Հային մոռացնել տալ նորա Եղեմական Հայրենիքը, նորա սիրտ ու հոգի Եջմիածինը, ուստի Շահաբաս ի նկատի առնելով այս հանգամանքը՝ միտքը դրեց Եջմիածինը քանդել և քարերը Սպահան բերելով նոյն ձևով մի եկեղեցի շինել ու կաթուղիկոսութիւնը այնտեղ փոխադրել, սակայն Ջուղայեցոց խնդիրքին զիջանելով՝ բաւականացաւ Լուսաւորչի Ս. Աջը և նոյն Տաճարի մի քանի նշանաւոր քարերը միայն բերել տալ այնտեղ : 22)

22) Այս քարերը մինչև այժմն դեռ մեծ խնամքով պահպանվում են տեղւոյ Ս. Գէորգ եկեղեցում:

1721 թուին Լեզգիները և յետոյ ուրիշ լեռնական ազգեր թափուեցան Հայաստանի գանազան մասերի վերայ և բաւականին աւերմունքներ գործեցին այն տեղերում :

Այս խեղճութիւնների ժամանակ Հայրենիքի մի մասին մեծ օգնութիւն արաւ Սիւնեաց աշխարհի Դաւիթ-բէկ անունով քաջ ու խելացի Հայկազն, որ իւր Մխիթար, Տէր Աւետիք, Թորոս և Ստեփաննոս ընկերների օգնականութեամբ՝ սակաւաթիւ զօրքով աննման քաջութիւններ արաւ և շատ պատերազմներ մղեց թշնամեաց դէմ, բայց ափսոս որ մահը շուտով վրայ հասնելով՝ մեռաւ 1728 թուին :

Դաւիթ-բէկից յետոյ իշխեց նորա Մխիթար քաջ օգնականը : Սորա ժամանակ Օսմանցիք նոր զօրքով յարձակուեցան Հայի-ձոր բերդի վերայ (որ Սիւնեաց աշխարհի Խափան գաւառումն է գտանվում) : Այդ միջոցին զօրքը երկու կուսակցութիւնների բաժանուեցաւ, — կէսը կամենում էին անձնատուր լինել, իսկ միւս կէսն ոչ : Վերջապէս բերդն առնուեցաւ ու բնակիչները սրի հարակ եղան : Մխիթարին յաջողուեցաւ փախչելով ազատուել, բայց ափսոս որ Խնձորէք բերդում մի քանի մատնիչ Հայեր նորան սպա-

նեցին ու զլուխը տարան Թաւրիզի Փաշային, որից պարգև ստանալու փոխանակ՝ գլխատուեցան 1729 թուին :

1820 թուին Երևակ գաւառի մէջ նշանաւոր եղաւ Աղասի քաջ երիտասարդը, որ Անին և նորա մերձակայ գիւղերը պաշտպանեց Պարսից և Տաճկաց յարձակումներից : Սա 1827 թուին Ռուսաց և Պարսից պատերազմի մէջ մեծամեծ քաջութիւններ անելուց լետոյ, երբ որ մի գարանակալ Պարսկից վիրաւորուելով մեռնելու վերայ էր, թափած արիւնից ձեռքն առնելով՝ մեկնեց դէպի Մասիսը և ասաց. «Ընդունիր, ո՞վ Հայաստան, քո սիրոյդ համար թափած արիւնս» և հողին աւանդելով արժանացաւ դասուել ազգասէր ու անմահ հայրենասէրների կարգը :

1860 թուին Տաճկահայոց վիճակն աւելի բարւոքելու համար՝ մի քանի բանիբուն Հայեր միաձայն հաւանութեամբ կազմեցին «Ազգային Սահմանադրութիւն»ը, որով ժողովրդի մէջ ըսկսաւ կամաց-կամաց ինքնաճանաչութեան ոգի զարթնել և այսպիսով ամենայն մասամբ դէպի յառաջադիմութիւն գիմել : Այնուհետև ազ-

գային գործերի կառավարութիւնը բարւոք հիմքերի վերայ դրուեցաւ, և անիրաւութիւնների ու զանազան զեղծ ումնների թիւն հետզհետէ պակասեցան :

Այս միջոցներում անուանի եղաւ այժմեան Աեհափառ Խրիմեան Հայրիկը, որ իւր բոլոր կեանքի օրերը նուիրեց ազգի լուսաւորութեան գործին, իրան գործունէութեան լայն ասպարէզ ընտրելով Վանի ու Մուշի կողմերը : Սա անթիւ խոչընդոտների դիմագրելով՝ յաջողեցաւ 1857 թուին առաջին անգամ Հայաստանի մէջ տպարան հաստատել և «Արծուի Վասպուրական» անունով առաջին Հայերէն թերթը հրատարակել : Սա ժողովրդի կրած բոլոր տառապանքներին ակնատես լինելով՝ իւր ձեռքից եկած օգնութիւնը չիննայեց և մինչև այժմ էլ չէ խնայում խեղճ Հայ ազգի վշտերը դարմանելու ու վերքերը բուժելու, և այսպիսով միայն արժանացաւ բոլոր Հայոց ՀԱՅՐԻԿը կոչուելու : Յիրաւի որ Խրիմեանը Հայրենեաց համար միշտ ճշմարիտ Հայրիկ է եղել թէ՛ Վարդապետ սւ. Եսլիսկոսոյս, և թէ՛ Պատրիարք ու Վաթուղիկոս եղած ժամանակը, որով և միշտ Հայութեան պահապան հրեշտակ ու նորա անթիւ ցաւերին ըստ կարի մխիթարիչ ու ամօքիչ է հանդիսացել :

1894 թուականը ամենաանբաղձն և ամենաաղէտալին եղաւ Հայ ազգի տարեգրութեան մէջ: — Տաճկա-Հայաստանը զանազան քաղաքական հանգամանքների պատճառով ենթարկուեցաւ աննկարագրելի բարբարոսութիւնների: Շատ քաղաքներ ու գիւղեր իսնպառ ամայացան, բազմաթիւ Վանքեր ու Եկեղեցիներ հիմնադատակ կործանուեցան և հարիւր հազարաւոր Հայեր զոհ զնացին. անընկճելի հանդիսացաւ միայն Զէյթունը, որ և Իսխայր-Բէն ստացաւ:

Այս խռովութիւնների ժամանակ, «լուսաւորեալ» Եւրոպան հեռուից հանդիսատեսի դեր էր կատարում, և փոխանակ պաշտպան կանգնելու արևելեան Քրիստոնէութեանը, բաւականանում էր միայն փքուն ու գրգռիչ խօսքերով աւելի ու աւելի բորբոքել Մահմեդականների վրէժխնդրութեան ոգին, իսկ Հայերին պարարեցնել անհիմն յայտերով:

Այսպիսով Տաճկա-Հայաստանը կորցրեց իւր բոլոր Հայ ազգի տարրի նշանաւոր մասը, և կեանքի ու կայքի ապահովութիւնը. բազմարդէւն Հայ գիւղացին իւր զլուխը պահելու համար՝ ստիպուեցաւ բաժանուել իւր քրտինքով ողորուած սեպհական արտից և արիւնախառն արտասուքով գաղթել զանազան հեռաւոր երկիրներ:

ՄԻ ԱԿՆԱՐԿ ՆՈՐ—ՋՈՒՂԱՅԻ ՄԱՍԻՆ

Քսան հինգ հազար տանից բաղկացած Նոր—Ջուղան Շահբասի ժամանակ մեծամեծ շնորհներ և կեանքի ու կայքի ապահովութիւն վայելելով՝ մեծ հարստութեան հասաւ և քսան չորս փառաւոր Եկեղեցիք կառուցանելով՝ արձակ-համարձակ պաշտում էր իւր կրօնը: Բայց 1750 թուին Նատրշահի մահից յետոյ՝ չափազանց նեղութիւններ կրելով՝ բնակիչները սկսան ցրուել զանազան ապահով երկիրներ, որպէս Ռուսաստան, Հնդկաստան, Զաւլա և այլն, ուր Հայկական հանճարի ուժով շուտով արժանացան հասնել մեծամեծ պաշտօնների ու հարստութեան. բայց և այնպէս չմոռացան իւրեանց թշուառ երկրորդ Հայրենիքը՝ Նոր—Ջուղան, ուստի ջանացան ամեն մասամբ բարւոքել նորա աննախանձելի վիճակը թէ բարոյապէս և թէ նիւթապէս: Այդ ազգասէրներից նշանաւորներն եղան Պարոն Յարութիւն Աբգարեանը, Տիկին

Մարիամ Յակովբեանը, Պարոն Մանուկ Յորդանանեանը և այլն, որոնք համեստ դպրոցների միջոցաւ յաջողեցան մասամբ փարատել տգիտութեան խաւարը : 23)

Նոր—Ջուղան իւր նախկին նիւթական շքեղութիւնը հետզհետէ կորցնելով՝ դարձաւ մի փոքրիկ գիւղաքաղաք, զրկուեցաւ իւր հարըստութիւնից և բազմամարդութիւնից, այնպէս որ այժմ բնակիչների թիւը հասել է մինչ մօտաւորապէս վեց հարիւր տան և ունի տասն և երկու Եկեղեցիներ միայն : 24)

Վերջին դարու սկզբներում Նոր—Ջուղան համարեա թէ լուսաւորութեան ստոր աստիճանի վերայ էր կանգնած, մի միայն 70 ական թուականից ի վեր լուսաւորուած և միևնոյն ժամանակ ազգասէր երիտասարդների անդուլ գործունէութեան շնորհիւ՝ սկսաւ կամաց-կամաց

23) Այս դպրոցներէ հասոյթները յատկացրուած են այժմեան Ազգային Երկսեռ Աւսու. մնարաններն :

24) Տեղւոյս բնակիչներէ նուազման դիտար պատճառը կարելի է վերագրել նորանց խմբովէն շնորհաստան գաղթելուն : Որովհետեւ Նոր—Ջուղայի պէս մի փոքրիկ բաղաբից տարեկան առ նուպն 50 հոգի (զլլաւորապէս տղամարդիկ) գալթում են շնորհաստան, դորանցից 5ը վերադառնում են տեղս և 5ը այնտեղ փարթամանում : Իսկ մնացած 40ը դանազան միջոցներով ոչնչանում և իսպառանկայատնում են : Եղանի թէ մի բարեբար միջոց ձեռք առնուի, որ այս մարդակուլ հոսանքի առաջն առնելու :

ողի առնուլ, զգալ Դպրոցների, Ընթերցարանի, Թատրոնի և այլ ազգային բարենպատակ հաստատութիւնների անհրաժեշտութիւնը. հետզհետէ հիմնեց դորանց և ըստ կարելւոյն ջանքեր թափեց պահպանել ու զարգացնել այդ հիմնածները : Այսու ամենայնիւ Նոր—Ջուղան զեռևս պարտուպատշաճ յառաջագիմութեան աստիճանին չէ հասել. բայց յուսալի է տեսնել նորան մօտիկ ապագայում ծաղկած վիճակում, դարձեալ շնորհիւ վերոյիշեալ եռանդոտ և ազգային ոգւով կրթուած երիտասարդների և Ազգային Երկսեռ Աւսու. մնարանների ջանացողութեան, եթէ զանազան անակնկալ և արտաքին դիպուածներ՝ արգելք չդառնան նորա բարի ձգտումներին :



Ն Պ Մ Ե Լ Ե Ծ Ե Ն

Handwritten Persian text, likely a letter or document, written in a cursive script. The text is partially obscured by a horizontal line and some staining.

Handwritten Persian text, continuing the message. The text is written in a cursive script and includes some numbers and possibly a signature or date.

L. G. MINASSIAN
KV. NAZAR № 242
JULFA ISFAHAN
* IRAN *



1604

2075



